

2365

2366

Plimply

81-83

plimply

80

1902

1888

1895

1887

455 m.

599
182

2011

ԿՈՄՍ ՄՈՆՎԱԼ

ՎԵՊ ԱՆՏԻՊ

ՀԵՂԻՆԱԿ

Բ. ՎԻՔԱԼ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՅՈՒՆ. Ի. ՇԱՀՈՒՄԵԱՆ

معارف نظارت جلیله سنک رخصتیه طبع اولمشدر

ՋՄԻՒՌՆԻՍ


ՅԳԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

1887



ԿՈՄՍ ՄՈՆՎԱԼ

ՎԷՊ ԱՆՏԻՊ



ՀԵՂԻՆԱԿ

Բ. ՎԻԹԱԼ



ԹԱՐԳՄԱՆԵՑ

ՅՈՎՀ. Խ. ՀԱՀՈՒՄԵԱՆ

معارف نظارت جلد ۴ سنک رخصت نامہ سیدہ طیم اولتشددر

ՉՄԻՒՌՆԻԱ

ՏՊԵՐԲ ՄԵՄՈՒՐԵԱՆ

1887



Եզրա՛յր իմ.

Ո՛ւմ կարևի ձօնել այս գիրք, եթե ոչ հեզ, սիրեցեալ եղբայր իմ, քե՛զ գոր դեռ ի կսկօնի խորշակահար բօշնեցուց անողով մահն, եւ գոր կ'ողբան տակաւին որդեկորոյս ծնողնդ :

Քո վաղա՛ստ մահուան կսկիծն, քո եղբայրական սէրն եւ քո երանաւէտ յիշատակներն անշէջ կ'մնան յիս, եւ այդ հաղցր յիշատակներ պիտի կազմեն կենացս՝ ինչպէս առաջին՝ նոյնպէս վերջին օրակն :

Ապա, ազնիւ եղբայր իմ, կարեմեր խոցուած սրտիս իբրեւ անգօր սպեղանի, եւ վշտակիր հօգույս իբրեւ դոյզն սիւսփում, կ'գամ քե՛զ նուիրել այն դուզնակայ երկն, յիշատակ ամուսաց քո ցանկալի անուան :

ՅՈՎ. Է. Խ. ՇԱՀՈՒՄԵԱՆ

Մարդկային սրտի յարակից երկու գորանոր կիրքեր, վառասիրութիւն եւ սէր, եւ արդի ընկերական օրինաց անբաւականութիւնն, որով ստեպ արդարութիւնն կ'գոհուի անիրաւութեան, անա ինչ որ կ'կազմեն ներկայ վիպասանութեան ոգին :

Հէղինակն, քե.ե. Ֆրանսական արդի հանրաժանօր վիպասանաց խմբին վերաբերելու պատիւն չունի, եւ ոչ իսկ իր գործ Ֆրանսական գրականութեան արտաղբած այնքան գլուխ գործոցներու կարգն դատուելու արժանիքն, յաջողած է սակայն, ինչպէս պիտի տեսնէ ձեռքբերողն, խիստ հետաքրքրաշարժ եւ հրամանգիչ կերպով հասնիլ առաջադրեալ նպատակին, եւ կենդանի գոյներով նկարել այդ երկու գորեղ կիրքերն իրենց այլազան երանգներով :

Գալով բարգմանութեան, կ'խոստովանինք քեզատ քերի է այն եւ հայ գրականութեան պարժանք կազմող բարգմանութեանց հաւասարելէ յոյժ հեռի: Սակայն կ'յուսանք նաեւ քե ողջամիտ հասարակութիւնն ներողամիտ ոչօր կ'նայի մէր քերութեանց ոչ անբաժան են առաջին փորձին ձեռնարկող ամեն նորավարձ գրիչներու :

Թ.Ս.Գ.ՄԱՆԻԶՆ

Թարգմանութեան արտաղբած
Հայ գրականութեան արտաղբած
Պր. Շահումյան

Պ. Մ. Եսայան
1903

ԿՈՄՍ ՄՈՆՎԱԼ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ
ՓԱՌԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՊԱՌԻՍ Ա.
ՏՈՒՄԻՆ ՆԱԽԱՐԱՆՆ

Թիւլլըրի մեծ ժամացոյցն երեկոյեան ժամը ինն նոր զարկած է: Մութ ու մրկալի է օդն, և Բարիզ, այդ յարազուարթ քաղաքն, նոյն պահուն տխուր և լռանիտ կ'ընի: Սև և միզապատ պաստառ մը կ'ծածկէ զրեթէ ամբողջ երկնակամարն, և հեռուն մերթ ընդ մերթ, սրաթռիչ փայլակներ կ'ակօսեն հորիզոնն և կենդանի ու չարաչուք լոյս մը կ'սփռեն մութ անջրպետին մէջ:

Սակայն հակառակ փոթորիին որ պատրաստ էր պայթելու, հակառակ որոտման թաւալմանց և հողմին սաստիկութեան, մարդ մը, երկայն ու թխազոյն վերարկուով փաթթուած և մոխրագոյն թաղիքէ գլխարկով մը մինչև յօնքերն ծածկած՝ կ'անցնի Գոնգորտի հրապարակէն, աջ կողմէն կ'զարնէ Քիվոթի փողոցը և կ'մանէ Սէնթ-Օնորէ:

Անփոյթ տարերաց, պայքարին այդ մարդ լապտերներու աղօտ լոյսով՝ մի առ մի կ'զննէ նոյն փողոցի տուներն: Ի վերջոյ իր նայուածքն կ'յառի այդ

տուներէն միոյն վրայ որու վարի յարկին պատուհաններն միայն լրատուորուած են : — Այս է , միմադ նա , և թեթև ժպիտ մը սահեցաւ իր չրթանց՝ վրայէն :

Նոյն պահուն , բարձրահասակ , նրբակազմ , երեսուն հինգէն երեսուն վեց տարեկան Բարդ մը , յամբաքայլ կ'ճեմէր այն տան սրահին մէջ , որուն առջև կանդ առած էր դիշերային այցելուն : Այս մարդ չափազանց դժգոյն գէմք մ'ունէր , նշանակ նորագոյն վշտաց : Նա հաղած էր մութ գորշագոյն ցայգազգեստ մ'որու եզրերն չուրջանակի բանուած էին ոսկի երկզով :

Այլաբաստիք լամբար մը , կահենիէ կլոր և գեղեցկակերտ սեղանի մը վերև կախուած , Եղայծառ լուսով մը կ'ողողէր սրահն : Սեղանին դիմաց և փողոցին վրայ նայող երկու պատուհաններուն միջև , որմէն կախուած ոսկեղօծ շրջանակով հսկայ հայելի մը լամբարին լոյսն կ'ցոլացնէր և անոր պայծառութիւնն կ'յուշեցոր : Հայելիին վերև ոսկեղօծ ետլարոյմ է ժամացոյց մը՝ Գարրարեան մարմարիոնէ պատուանդանի մը վրայ դրուած՝ լսելի կ'ընէր իր հնչուն և միօրինակ թիգ-թագն : Աերջապէս սեղանին երկու կողմերն դրուած երկու բազմոցներ , իւրաքանչիւրն իր մօտ ունենալով երկու թիկնաթոսներ , կ'կազմէին սրահին բովանդակ կահն : Որմերն զարդարուած էին թանկագին գորգով մը , որու սպիտակ յատակին վրայ սիւսուած էին օձապտոյտ ոսկեղօծ ծաղիկներ :

Մեր երթեկողն սրահին մէկ ծայրէն միւսն քանի մը շրջաններ ընելէ յետոյ՝ ժամացոյցին առջև կանդ առաւ :

— Ժամ ինն զարնելու մօտ է , ըսաւ ինքնիրեն , քանի մը վայրկեանէն հոս պիտի լինի նա . . . ինչ գաղտնիք ունի արդեօք ինձ հաղորդելու , շարունակեց նա հառաչելով : Թշուառ է նա . միշտ կ'գանգատի իր գործոց անյաջողութեան վրայ : Նա , թշուառ . նա որ այնքան հարուստ է . . . : Եւ սակայն փառասիրութիւնն կ'կրծէ սիրտն : Աւանդ , Աստուած իմ , աւելի ինձ անկ է գանգատիլ իմ սև ճակատագրէս : Այս առաւօտ , յՆլոորատօ , տխուր , մտահոգ և խոհուն երևոյթ մ'ունէր նա և այս գիշեր այսքան ուշ ատեն և այսպիսի գէշ օդով հոս գալու համար անտարակոյս կարևոր գաղտնիք մ'ունենալու է ինձ հաղորդելու . . . :

Ձանդակի հարուած մ'ընդմիջեց իր մենախօսութիւնը :

Քանի մը վայրկեան յետոյ թխագոյն վերարկուով մարդն սրահ կ'մտնէր :

— Տես , սրբան ճշգրտաբան եմ , Տէգրիվ , ըսաւ նա անոր որ սեղանին քով կայնած իրեն կ'սպասէր :

— Աը հաւանիմ , պատասխանեց միւսն թեթև ժրպիտով մը , բայց սիրելիլ իմ Շամէլ , դու վշտակիր և յուսահատ կ'երևիս :

Նա չպատասխանեց , այլ սեղանին վրայ նետելով իր վերարկուն՝ գնաց թիկնաթոսի մը վրայ նստաւ . իսկ Տէգրիվ ուրիշ ամիս մը գլորեց և գնաց անոր մօտ նստաւ :

Շամէլ Տէգրիվէն աւելի տարօք կ'երևէր , միջահասակ էր նա և թեթևապէս կորաքամակ . իր փոքր ինչ խորշումած գէմքին վրայ , ուր աակաւին կ'նշմարուէին առնական գեղեցիկութեան քանի մը հետքերն ,

նկարուած էր խորին տխրութիւն մը որ գրեթէ բընական էր իրեն : Իր վայրագ ու կասկածոտ կերպարանքն , իրենց խոռոչին մէջ խորասուզեալ փոքրիկ աչերն որոց վրայ կամարածեւ կ'ըարձրանային սև և թանձր յօնքեր , անախորժ դիմագծութիւն մը կ'տային նմա և ցած հոգւոյ մ'ու նենդաժէտ բնաւորութեան մը գոյութիւնն կ'յայտնէին : Ուստի Տէգրիվ նորա հետ անկեղծ բարեկամութեամբ վարուիլ կեղծելով հանդերձ՝ ներքուստ անվստահութիւն կ'սընուցանէր անոր դէմ և ծածկաբար կ'ըննէր նորա շարժումներն և ամենէն աննշան խօսքերն :

Շամէլ քաջ կ'կարդար Տէգրիվի մտածմանց խորն , սակայն առանց խօսվելու և չուզելով կորսնցունել այն օգուտն զոր կ'խորհէր քաղել անկէ , ժպտելով անոր մօտեցաւ և ըսաւ .

— Սիրելի բարեկամ , անօգուտ է վերսկսիլ միշտ միևնոյն պատմութիւններն և անդադար միևնոյն խնդրոյն վերադառնալ . կ'յուսամ թէ այս առաւօտ , ինչպէս կ'իշխես , լաւ բացատրեցի քեզ այն վիշտերն և դժբաղդութիւններն որք երկար ժամանակէ ի վեր իմ կեանքս կ'մաշեցնեն , բայց , աւանդ , դու խիստ շուտ մեկնեցար : Ի զուր կ'սպասէի վերադարձիդ , դու չվերադարձար , և որովհետև անկարելի էր ինձ ցերեկ ժամանակ քեզ հետ տեսնուիլ , որոշեցի գալ այս ժամուսու ուր երկուքս առանձին ենք առանց մէկէ մը վախ ունենալու . . . բայց . . . :

Տէգրիվ կ'չարունակէ մտիկ ընել նմա առանց սակայն պատասխանելու :

— Բայց , շարունակեց Շամէլ , պիտի ըսես ինձ , և իրաւամբ , թէ քեզ չվերաբերիր սիրտիւ իմ բոլոր

ցաւերս , վասն զի դու ևս ունիս քու վիշտերդ որք կ'տառապեցնեն և դժբաղդ կընեն զքեզ : Ներէ ինձ , բարեկամ , բայց դ՛ու , դ՛ու միայն աշխարհիս վրայ կարող ես մխիթարել զիս :

Այս վերջին բառերն արտասանուեցան այնքան ազդու ձայնով մը որ Տէգրիվ ի գութ շարժեցաւ : Այս պարզ խօսքերով Շամէլ յաջողած էր իր ունկնդրին սրտէն վանել ամեն կասկած զոր նա կը սնուցանէր իրեն դէմ :

— Ի՞նչ կ'ըսես , Շամէլ , դոչեց նա , միթէ ես քու բարեկամդ չեմ , և ուրիշ որո՞ւ պիտի կարենաս վրտաշիլ և յայտնել քու վիշտերդ :

— Այո՛ , բարեկամ , ներէ ինձ , շարունակեց միւսն որու տխրութիւնն հետզհետէ սաստկանալ կ'թուէր , բայց սոսկալի ապագան որ ինձ կ'ներկայի , այնչափ կ'յուզէ և այնքան կ'յուսահատեցնէ զիս , որ եթէ հայրական պարտաւորութիւն մը կատարելու ստիպուած չլինէի , վայրկեան մը միայն պիտի բաւէր ինձ իսպառ ազատելու իմ անողորմ վիշտերէս նախատինքէս սո՛ , ո՛չ :

— Քու նախատինքդ , գոչեց Տէգրիվ , քու նախատինքդ , լրջօրէն կ'խօսիս :

Շամէլ լուռ մնաց :

— Բայց ինչ կըսես , շարունակեց առաջինն : Չեմ կրնար հաւատալ որ այս աստիճան թշուառ լինիս : Ո՛չ , քու ընկերական դիրքդ երբէք չնքեր ինձ հաւատալ այդմ :

— Ա՛հ , Տէգրիվ , կ'խարէ զքեզ ընկերական դիրքս , եթէ երբէք ունիմ բայց այս դիրք այլ ևս նոյն չէ , գլխովին փոխուած է այն :

— Բայց հարստութիւնդ, ընդմիջեց Տէգրիվ:
 — Իմ հարստութիւնս, բացառանչեց Շամէլ, ինչ
 հարստութիւն, եթէ քիչ մը բան ունիմ այն ևս
 կ'սպառնայ բազդի հարուածոց ներքև ոչնչանալ:

— Բազդն, յարեց Տէգրիվ, երբէք չընկճէր գրեզ
 . . . սիրտ ա՛ռ և մի յուսահատիր, ապագան մերն է:

— Այո՛, ապագան, մութ և սոսկալի ապագան.
 բայց դու չգիտես Տէգրիվ, չգիտես, թէ ես ո՞վ էի և
 ինչ էր իմ անունս. դու դեռ նոր եկար ի Բարիդ և
 դժբաղդ օրերս միայն տեսար: Մտիկ ըրէ, թէ և ան-
 օղուտ է հարիւր անգամ կրկնել այնպիսի բաներ
 որոց պատմութիւն ընել իսկ չարժէր. . . . : Քսան
 տարի կայ որ հայրս մեռնելով՝ որք թողուց զիս, անօր
 և անպաշտպան: Իր յանկարծական մահն չներեց ի-
 րեն կտակ մը գրել. բայց ես հարուստ էի և շուտով
 ճարեցի ամեն տեղ բարեկամներ և պաշտպաններ:
 Պ. Պէշրէլ, այն ատենուան մայրաքաղաքին ամենէն
 հարուստ վաճառականներէն մին, հարստութեանս
 ծանօթ լինելով՝ զիս իր պաշտպանութեան ներքև
 առաւ. բայց իր առաջադրած նպատակին չկրցաւ
 հասնիլ: Քանի մը տարի ընկեր եղայ իրեն հետ և ի
 վերջոյ, շահելէ անցոյս՝ ես իմ հաշուոյս առանձին ա-
 ուտրական տուն մը հաստատեցի:

Հոս վայրիկեան մը կանգ առաւ Շամէլ, ապա շա-
 րունակեց:

— Բազդին բերմամբ գործերս խիստ յաջող գա-
 ցին, իմ վրայ կ'խօսէին. ինչպէս կ'խօսէին երբեմն
 հանդուցեալ Պէշրէլի վրայ:

Տէգրիվ այս խօսքերուն վրայ սարսուաց, Շամէլ
 չնշմարել ձևացուց զայն:

— Անսահման վարկ ունէի, շարունակեց նա. Սա-
 կարանին մէջ առաջին քայլն միշտ ես կ'առնէի. քանի
 մը տարի ևս աշխատելէ յետոյ ինքզինքս նետեցի զեղ-
 խութեան գիրկն՝ հանգիստ և անդորր կեանք՝ վա-
 րելու համար: Յուսացի սակայն որ բազդն միշտ
 պիտի նպաստէր ինձ. հանգստեան պէտք ունէի, և
 առաջին եկողին անսահման կերպիւ վստահելով՝
 գործերս կ'յանձնէի անհաւատարիմ ձեռքերու: Աւա՛ղ,
 շատ շուտ զղջացի, վստահութիւն և բարեմտութիւն
 ունայն բառեր դարձան ինձ համար: Շուրջս կ'տես-
 նէի միմիայն հացկատակ բարեկամներ, որ մի կող-
 մէն կ'չողոզորթէին զիս և միւս կողմէ կ'պարսաւ-
 էին: Անարգ և գձուճ հոգիներու ձեռք խաղալիք լի-
 նելէ ձանձրացած՝ նետուեցայ աշխարհային հաճոյից
 մէջ: Արկածներով և նենդութիւններով լի բազդա-
 խնդիր կեանքի մը յորձանքէն քլուած՝ տակաւ կո-
 րուսի ինչ որ ժողված էի այնքան նեղութեամբ, և
 այսօր երբ տակաւին հարուստ կ'կարծես զիս, զիւ-
 րաւ կրնաս իմանալ հարստութեանս չափն ոչինչ
 պիտի գտնես, այլ միայն նաւարեկութենէ ազատ-
 ուած մի քանի բեկորներ:

— Արդարև, տխուր է կացութիւնդ, ընդմիջեց
 Տէգրիվ, բայց դու չափէն աւելի կ'յուսահատիս, պէտք
 չէ որ դժբաղդութիւնն ընկճէ գրեզ: Ինչպէս գիտես
 բազդը ինձ ևս ժպտեցաւ վայրկեան մը, բայց այսօր
 երեսի վրայ կ'թողու զիս և բնաւ չեմ տրտնջար,
 վասն զի ինչ կարելի է ընել անկարելւոյն դէմ: Դու
 քու հարստութիւնդ հաճոյից մէջ վատնեցիր, մինչ-
 դեռ իմ խիստ պատուաւոր սնանկութեան մը մէջ
 փճացաւ: Բայց բնաւ չեմ յուսահատիր: Ո՞վ գիտէ

Թէ ինչ վերապահած է ինձ բաղդն : Պիտի ջանամ միշտ օգտիլ աշխատութենէ և միշտ յուսալ :

Գառն ժպիտ մ'անցաւ Շամէլի շրթանց վրայէն :

— Յոյս, ըսաւ նա, յոյս, ան, պատրանք, ոչինչ, սիրելիդ իմ Տէգրիվ, ոչինչ աշխարհիս վրայ կարող է մխիթարել զիս :

— Լաւ, յարեց Տէգրիվ, ենթադրենք թէ ամեն ինչ յուսահատական է և տխուր ապագայ մը կ'ներկայի մեր առջև . պարտինք միթէ այդ պատճառաւ կ'իներու նման ողբալ . անարժան բան մ'է այդ մեզ համար . ո՞չ ապագէն պարտինք ընդհակառակն . . . :

— Ա՛չ, ո՛չ, ընդ միջեց Շամէլ, ի զուր կ'փորձես ամօքել վիշտերս : Կ'տեսնեմ այդ ապագան, ահարկու և սպառնալից . այդ ապագան նախատինքն է, հանրային արհամարանքն է, հեզնութիւնն է անոնց որ կ'հրճուին անկեալ դժբաղդներու վրայ : Ահա՛ կը տեսնեմ, հեռու չէ այն օրն յօրում պիտի հեծեմ աղքատութեան և մոռացութեան մէջ, ուր պիտի հարկադրիմ փախչիլ այս վայրերէն, վկայ իմ ճոխութեանս և թշուառութեանս . . . : Ա՛հ, այս միակ մտածումն կ'սարսափեցնէ զիս :

Երկար լուծիւն մը յաջորդեց այս խօսքերուն, Տէգրիվ առաջին անգամ խզեց :

— Ի զուր կ'յուսահատիս, ըսաւ . յուսահատելէ աւելի պարտիս օրսնել մօտալուտ աղետէ մը խոյս տալու միջոցներն :

Շամէլ չպատասխանեց բնաւ, այլ գլուխը խոնարհեցնելով՝ ձեռացը մէջ առաւ, զայնև թուեցաւ խորհիլ :

— Միջոցներ, ըսաւ վայրկեան մը մտածելէ յետոյ :

— Միջոցներ, այո՛, և, եթէ հնար է, պիտի օգնեմ քեզ գտնելու զայնս :

Այս խօսքերուն վրայ Շամէլ ոտք ելաւ, յանկարծական փոփոխութիւն մը տեսնուեցաւ իր վրայ և վհատութեան՝ ուր պահ մ'առաջ ընկղմած կ'թուէր՝ կ'յաջորդէր այժմ տեսակ մը հանդարտութիւն և սրտի անդորրութիւն . դէմքն փայլեցաւ և իր փոքրիկ աչքերէն կայծեր ցայտեցին :

Բոլոր այս փոփոխութիւնք երբէք չվրիպեցան Տէգրիվի աչքերէն, ուստի միևնոյն փոփոխութիւնք ընդհուպ իր անձին վրայևս տեղի ունեցան, իր բարեկամին նկատմամբ ունեցած բարութիւնն ու կարեկցութիւնն այժմ կ'ցրտանային՝ հանդէպ իր խօսակցին նենդամիտ ընթացքին և վերստին կ'առնուր այն ըզդուշաւորը իրքն և այն անվտանգութիւն զոր ունեցած էր ի սկզբան նորա նկատմամբ :

— Միջոցներ, գոչեց Շամէլ սաստկութեամբ, միջոցներ, հատ մը միայն կ'ձանջեմ որ երկուքիս ալ օգտակար է : Մտիկ ըրէ, միևնոյն արգելքն է որ զմեզ կ'կասեցնէ՝ խորտակենք այդ արգելքն և ահա վերստին պիտի լինինք այն ինչ որ էինք երբեմն : Այդ արգելքին խորտակումէն կախումն ունին երջանկութիւն և հարստութիւն : Մտիկ ըրէ, էմիլ, պարտ էի միայն ինձ համար պահել այս միջոց, սաւ կայն առ քեզ ունեցած բարեկամութիւնս կ'պարտաւորէ զիս վստահիլ քեզ զայն : Յատակագիծն արդէն պատրաստ է, և, եթէ քու կողմէդ քիչ մը օգնութիւն գտնեմ, կրնամ այժմնէ խոստանալ քեզ թէ կրկին պիտի գտնենք մեր կորուսեալ հարստութիւնն :

— Բայց, ըսաւ Տէգրիվ որ բոլոր մարմնոյն վրայէն սարսուռ մ'անցնեն կ'զգար, ո՞րն է այդ միջոցն:

— Այդ միջոցն, պատասխանեց Շամէլ դաժան կերպարանօք, կ'փափաղիս դիտնալ զայն, բայց պիտի հաւանիս անոր:

— Ինչո՞ւ չէ եթէ պատուաւոր է:

— Պատուաւոր կամ ո՞չ, այս վայրկեանին պարտինք փնտռել մեր թշուառութեանց պատճառն և, եթէ կարելի է, ոչնչացնել զայն:

— Բայց այդ պատճառ արդէն ծանօթ է մեզ. դժբաղդ ենք, վասն զի բազմն կամ Նախախնամութիւնն ուզեց փորձել զմեզ: Ի՞նչպէս ուրեմն պիտի կրնաս յաղթել բոլոր այս արդելքներուն:

— Ընել այլոց ամեն չարիքը ցոր նօքա ըրին մեզ:

— Գեղեցիկ սկզբունք, արդարև: Զայդ սկզբունք անտարակոյս ի գործ դրած ես արդէն . . . որմէ սկսար:

Շամէլ չպատասխանեց, այլ զաղտագողի ակնարկ մը նետեց իր խօսակցին վրայ որ առանց խռովելու յարեց.

— Քաջ կ'ճանչնամ առաջին զոհդ: Գիտեմ որ տը Բրէվալի յաջողութիւնն ի խոր կ'խօցէ զքեզ, վասնզի այնպէս կ'կարծես թէ բոլոր դժբաղդութեանցդ պատճառ տը Բրէվալն է: Զարաչար կ'սխալիս, սիրելիդ իմ: Յիշէ որ քու յաջողութիւնդ չատերու զըժբաղդութեան պատճառ եղաւ: Այս մարդ ոչինչ ըրած է մեզ: Եթէ իր գործերն կ'յաջողին, ինքն մեղաւոր է:

— Անտարակոյս ո՞չ, բայց նա չափազանց գոռոզ է իր երջանկութեան մէջ: Իր արհամարանք կ'ընկճէ:

զմեզ և խոջնդոտներ կ'հանէ մեր բոլոր խորհրդոց դէմ:

— Ենթադրենք թէ այդպէս է: Լրջօրէն կ'հաւատաս ուրեմն թէ տը Բրէվալն է մեր անկման պատճառն:

— Կ'հաւատամ և կ'հաստատեմ:

— Եւ ի՞նչ միջոցաւ կ'խորհիս արգելուլ զայն մեզ վնասելէ այսուհետև:

— Ի՞նչ միջոցաւ:

— Այո՛, խօսէ, մտիկ կ'ընեմ քեզ, և եթէ հաւանիմ այդ միջոցին, մինչև իսկ այժմէն կ'խօստանամ նպաստել քեզ քու բոլոր ձեռնարկներուդ մէջ:

Սոյն վայրկեանին Շամէլ տաժանելի կացութեան մը մէջ կ'գտնուէր, կ'վախնար աւելի առաջ երթալէ: Գժուառաւ չունչ կ'առնուր և Տէգրիվին կ'նայէր առանց անոր պատասխանելու:

— Լաւ ուրեմն, ըսաւ միւսն որ կ'սկսէր անհանգիստ ըլլալ:

Շամէլ զօրաւոր ճիգ մ'ըրաւ զինք պաշարող յուզումն յաղթահարելու համար:

— Արգելուլ տը Բրէվալ աւելի առաջ երթալէ, ըսաւ:


— Եւ ի՞նչ կերպով:

Սաղաէլահան ծիծաղ մը սահեցաւ նոյն վայրկեանին Շամէլի չրթանց վրայէն:

— Վաղը ըսաւ, տը Բրէվալ Մարսէլ պիտի մեկնի, այս փոքրիկ ուղևորութիւն իր յաջողութեան վերջաբան պիտի լինի:

Եւ բերանարաց ու ոչերն Տէգրիվի վրայ յառած, սոլասեց:

83-2075
374
40



Տէգրիվ սարսափահար մի քանի քայլ ետ քաշուեցաւ :

— Լմնցուր, ըսաւ անոր :

Այսօր, շարունակեց Շամէլ, նա լուր առաւ թէ արեւելքէն և գլխաւորապէս Իզմիրէն մեկնող առաջատանաւեր, պիտի հասնին Մարսիլեա . . . Ուրեմն վաղը, մեկնելէ առաջ, մտադիր է, ինչպէս լսեցի, փոքրիկ այցելութիւն մը տալ իր քրոջ իրիւէյլ փողոց . Նա ստիպուած է Պուա-տը-պուլօնիէ անցնել և . . . կ'վախնաս որ լմնցունեմ :

— Ոչ, Ոչ, լմնցուր, լմնցուր, պատասխանեց միւսը մեքենապէս :

— Լաւ ուրեմն, տը Բրէվալ պիտի մտնէ պուլօնի անտառն այլ ևս դուրս չելնելու համար, նախասահմանեալ ձեռք մը մահացու հարուած մը պիտի տայ . . . :

Տէգրիվ այսքան հրէշային խոստովանութեան մը առջև սարսափահար քանի մը քայլ ետ քաշուեցաւ և գլուխը դարձուց :

Նոյն պահուն յանկարծական փայլակ մը լուսաւորեց սրահն և սրտոման ահռելի պայթիւն մը ի հիմանց սարսեց զայն, և սոսկիմամբ լեցուց Շամէլի սիրտն :

— Ի՞նչ ըսիր, վատ . գոչեց Տէգրիվ, ի՞նչ ըսիր, որպիսի պաղարիւնութեամբ յանդքնեցար մտաբերիլ այդպիսի ոճիր մը :

Շամէլ չը պատասխանեց, այլ յոնքերն սուստած և կատաղութենէ չրթունքներն կծկտած անքթիթ կ'նայէր, Տէգրիվի երեսն :

— Այսպէս դու չես հաւանիր այս խորհրդիս ըսաւ անոր :

Բայց վերստին հարկադրեցաւ կանգ առնուլ : Տեղատարափ անձրևն, ուժղին քամիէն մղեալ, պատուհաններու ապակիներն կ'կոծէր և սրահն կ'ընուր չարաշուք շառաչով մը :

— Ո՛հ, թշուառական, ապիրատ, գոչեց Տէգրիվ . սճիր մը, սճիր մը, և կուզես որ հաւանիմ առ այդ, կ'համարձակիս այդ օրինակ վատութիւն մը խոստովանիլ ինձ, ինչ կ'խորհիս, տես Երկիրք զքեզ կ'աղդուրեն և գողայ զի մի գուցէ իր բոլոր սրտմտութիւնն դուրս պայթի : Տը Բրէվալ ոչինչ վնաս ունի քեզ, այլ քու նողկալի փառասիրութիւնդ է միայն որ կ'թելագրէ քեզ այդ օրինակ խորհուրդ մը, և կ'մղէ զքեզ յոճիր :

Բայց ես պիտի կ'ասեցնեմ զքեզ այդ անդունդին եզրն և եթէ հարկ լինի աւելին պիտի ընեմ, պիտի արդելում քեզ այդ ահռելի ոճիրն դործելէ, ի գէպ ժամուն իմաց տալով Բրէվալի քու չարաշուք խորհուրդդ :

— Ի՞նչ կ'լսեմ, գոչեց Շամէլ, բարկութիւնէն և ամօթէն կրակ կտրած : Ուրեմն պիտի համարձակիս առօտն կոխել մեր վաղեմի բարեկամութիւնն, միջամտելով իմ և թշնամոյս միջև : Պիտի համարձակիս ուրեմն մասնել զիս, դ՛ու, Տէգրիվ, սակայն այժմէն կ'յայտնեմ թէ կրնամ նաև զքեզ արդելուլ այդմիջամտութենէն : Բաւական կ'ձանչէս զիս և զիտես թէ քաջ զիտեմ խորտակել իմ երջանկութեանս միջև կանգնող պատուարն, և թէ բարեկամն ում կ'վստահիմ, իմ ամենէն գաղտնի խորհուրդներս, պարտի պահել զայնս իր սրտի խոր, եթէ չուզեր որ սուղ վճարել տամ իրեն իր վատադղի մատնութիւնն :

Եւ կատաղարար ու տարտամ քայլերով ոտք ել-
նելով սրահէն դուրս ելաւ :

— Գնա՛ թշուառական, զիմէ՛ դէպի կորուստդ
ըսաւ ինքնին Տէգրիվ՝ անոր հեռանալն տեսնելով :
Գնա՛, երբէք չեմ վախնար քու բարկութենէդ : Այ-
ժմ գիտեմ թէ ինչ կ'մնայ ինձ ընել : Վաղը առա-
ւօտ կանուխ գործը պիտի իմացնիմ տը Բրէվալի :

Եւ գունաթափ ու դողդոջուն մօտեցաւ սրահին
մէջ տեղ դրուած սեղանին և դողահար գրաւ իւր
մատն զանգակի գնդակին վրայ : Փոքրիկ մուրճին
հանած ձայնէն երիտասարդ կին մը երեցաւ դրան
մէջ :

- Ժամը քանի՛ է, Ժանէթ հարցուց անոր :
- Կէս դիշեր քառորդ՝ անցած է, պարոն :
- Լաւ, կրնաս հանգստանալ, այս դիշեր արթուն
պիտի մնամ :

— Նենգաւոր, դռնէց միւս անգամ Տէգրիվ երբ
առանձին մնաց : Ոչ, երբէք չ'պիտի թողում քեզ որ
պաղարիւն սրտով դորձես այդ ամեն անարդ և նող-
կալի մեղքն : Պէտք է այս գիշերուանէ իսկ չ'նայե-
լով փոթորիկին որ տակաւին կ'ոռոտայ սզղարա-
րեմ Բրէվալին : Պէտքէ ընել զայս՝ ազատելու հա-
մար միայն կեանքն և միւսն կառափնարանէն : Եւ
Տէգրիվ շոպաւ իր գլխարկն առնելով մարեց իր
ճրագն և տունէն դուրս ելաւ :



ՓԼՈՒԽ Ք.

ՇԱԿՐԻԻ ԳԻՆԵՏՈՒՆՆ

Այս դարուս սկիզբն և նոյն իսկ ասկէ քսան տա-
րի առաջ, Բարիլ, ախեղերաց գեղեցկագոյն քաղաքն,
անուանի իր յիշատակարաններով, ճոխութիւնն ու
գեղատեսիլն իր ծոցին մէջ կ'պարունակէր, և աւելի
մեծ թուով քան այսօր, տեսակ մը վատանուն տե-
ղեր, ուր օրէնքն իսկ այնքան հսկող ի Տրանսա,
դժուարաւ մուտ կ'գտնէր :

Մեղսց և ցօփութեան այս քարայրներն կ'ծառայ-
էին իրրև ժամադրավայր գողերու, մարդասպան-
ներու և ամեն տեսակ անուանարկ մարդերու :

Օֆէվի փողոցն մանաւանդ, այնքան հռչակաւոր
իր չարաչուկ երևոյթով, անուանի էր այն ատեն իր
բաղմաթիւ կապելաներով, որոց մէջ նշանաւոր կը
հանդիսանար Շա-կրի : Գինետան դրան վերեն որ
ճշմարիտ որջ մ'էր գողերու և վատահամբաւ կինե-
րու, խարխլած տախտակի մը վրայ նկարուած էր
անարուեստ կերպով և անսրակելի գոյնով մը ահա-
գին կատու մը, ցցուած մազերով և սպարնախց
երևոյթով :

Ահարկու կատուին թաթերուն ներքև կարմիր
դոյնով նկարուած էր գինետան անունն Շա-կրի
(բորչ կարո) :

Այժմ կ'խնդրենք մեր ընթերցողներէն որ եթէ կը

փափաքին, մեզ հետ մտնեն այս տխրատեսիլ վայրն ուր մեղքն իր բոլոր ձևերով բնակարան ընտրած է:

Այս շէնք իր ամբողջութեամբ պժգալի և զարհուրելի երևոյթ մը կ'ներկայէր. թեթև սարսուռ մը պիտի զգար մարդ (ի հարկէ պատուաւոր մարդ մը) այս որջին մէջ մտած պահուն: Յած՝ ծուխէն սեցած և ամեն կողմէ ճեղքուած ձեղունն վայրկեանէ վայրկեան փլջելու կ'սպառնար: Ձեղունին մէջ տեղէն կախուած էր թիթեղեայ լապտեր մը որու փոշեպատ և սեցած ապակիէն կ'ցոլանար կապարագոյն և դժգոյն լոյս մը: Չորս որմերն բոլորովին անզարդ՝ ծածկուած էին հին և պատառուն գորգով մը որու պատուածներէն կ'ընթարուէին որմին խոնաւ յատակին վրայ զպարատեսիլ բոյսեր: Տախտակաման բոլորովին փտած և ծակծկուած էր, որոց մէջէն մերթ ընդ մերթ ահագին մուկեր կ'անցնէին և ասդ անդ կ'վազվզէին աներկիւղ:

Սոյն ժամուն գինետունն գրեթէ ամայի էր. փոթորիկն որ միշտ կ'գոռար մայրաքաղաքին վրայ, թոյլ կ'տար իրեն վարժ եղող անձանց անձնատուր լինիլ իւրաքանչիւրն իր սիրական արհեստին:

Նոյն պահուն երեք անձինք միայն կ'գտնուէին հոն, սեղանի մը շուրջը բոլորած:

Գինեպանն իր սեղանին վրայ կրթնած կ'քաշէր ահագին ծխափայտ մը թանձր մուխ մը հանելով:

Կարճահասակ, նիհար մարդ մ'էր սա, թխագոյն դէմքով որ անգութ բնաւորութիւն մը կ'յայտնէր, մազերն և մորուքը թանձրախիտ և գիսախորիւ, երկայն յոնքերն կիսովին կ'ծածկէին փոքրիկ աչքերն որք մթութեան մէջ կ'փայլէին կատուի մը աչաց նը-

ման: Դէմքին ստորին մասն չափազանց լայն է, այնպէս որ այս վայրագ դէմքն կողմնակի դիտելով՝ աւելի արջի մը դէմքին կ'նմանէր քան մարդու: Հագած էր հաստ կտաւէ ձերմակ այլ աղտոտ բաճկոնակ մը որ մինչև ծունկերն կ'երկարէր, և թխագոյն տափառ մը որու պատառուն ծայրերն գետնին կը քսուէին և կ'ծածկէին մերկ ու ոսկրուտ ոտքերուն մէկ մասն:

Վերև յիշուած երեք անձերն, չարաչուք դէմք մ'ունէին և խմելու վրայ էին՝ իրարու հետ վիճելով:

Երեքէն ամենէն տարօքն միւս երկուքին գլխաւորն կ'երեւէր, կամ լաւ ևս է ըսել, այս գիշեր զայն ընտրած էին գիշերային քսամենլի և մեղապարտ արշաւանքի մը մէջ գիրենք առաջնորդելու:

Ամենէն տարօքն, ինչպէս ըսինք, անհեթեթ գլուխ մ'ունէր, չափազանց խոշոր աչքեր և խափշիկի մը նըման կլոր ու տափակ քիթ մը: Եր թանձրախիտ և վարկպարագի ձգուած մազերն կ'ծածկէին բոլոր ճակատն որ վազրի մը ճակատին նման ցած ու ներս մտած էր: Բարկութեան միջոցին իր նայուածքն միայն բաւական էր ահաբեկել զինք դիտողն: Սակայն ոգելից ըմպելիքներու շարաչար և մոլեգին գործածութիւնն ստէպ անկարող կ'ընէր զինք իր հակառակորդին առջև:

Յորմէ իր կլութօն մականունն:

Միւս երկուքն, նուազ տարուօք և նուազ կորովի քան առաջինն, այլ անոր չափ վայրակ, աւելի գիւրաչարժ և աւելի ճարպիկ կերեւէին, և կրնային անհամաձայնութեան պարագային մէջ խուսափիլ նորա ահարկու կռուիէն:

Երեքն ալ Աստրախանեան ասուէ զգականեր զր-
րածէին: Իրենց կապոյտ և կուրծքի մէջ տեղէն կի-
սովին բացուած շապիկին տակէն կերակէին սև և
կարծր մազերով ծածկուած լանջք մը և թխադոյն
բաղուկներ: Տափատնին վերի կողմն լայն՝ երթ ալով
կ'նեղնային մինչև սրունքներուն կէսն:

Ժամը տասն հնչած էր արդէն, և փոթորիկն որ
ժամէ մ'իվեր կ'գուար, կ'չարունակէր միշտ, անձը-
րեն տեղատարափ կ'հոսէր և արդէն իսկ ջուրն ներս
կ'վազէր զրան երկաստիճան սանդղէն որ փողոցի
սալայատակէն աւելի ցած էր, և կ'կաղմէր փոքրիկ
առուններ որք տախտակամածի ձեղքերուն մէջ ան-
հետ կ'լինէին: Կայծակն ժամանակ առ ժամանակ
լսելի կ'ընէր անհեղադոջ հառաչիւնն և ի հիւանց կը
դղրդէր խարխուլ և կիսակործան շէնքն:

Մեր երեք անձերն, անփոյթ օգային տագնապին
կ'չարունակէին ցած ձայնով խոսակցիլ, բայց քիչ
ժամանակէն գինիին օգնութեամբ գլուխներն տաք-
նալով ձայներնին հետզհետէ սաստկացաւ: Վերջա-
պէս գլխաւորն ոտք ելաւ և անոնցմէ միոյն ուղղելով
իր խօսքն:

- Տեսներք Ուրսո, ըսաւ, համամիտ ես ինձ . . .
- Այն որու ուղղեց այս բառերն կ'թուէր վարանիլ:
- Ի՞նչ բանէ կ'վախնաս ուրեմն, յարեց առաջինն:
- Կ'վախնամ, պատասխանեց Ուրսո, կ'վախնամ
որ միասին չ'գլխատուինք:

Գլխաւորն բարկութենէն կասկարմիր եղաւ:
— Ապիրատին մէկն ես դու, կ'ըսեմ և կ'կրկնեմ,
մէկ կուտ չ'արժէր գլուխդ: Վախնալ և ի՞նչ բանէ:
Քսան տարիներէ ի վեր որ իմ անունս յաղթական

կ'պանծայ հոս, տեսա՞ր երբէք ո՞ր և է ձեռնարկէ մը
եւ քաջուիլս: Բայց դու գիշերուան գող մ'ես և ոչ
ուրիշ բան:

Ուրսոի աչերն կատաղութենէ կայծեր ցայտեցին:
— Հապա դո՞ւ, Կրիլօն, յարեց գլխաւորն խօսքն
միւսին ուղղելով:

— Ա՛հ, է՞ս, սատանան վկայ, պատասխանեց Կրի-
լօն, այս պատուական գործին մէջ վախնալու բան
մը չեմ տեսներ, մեր ազնուականն կ'երևի թէ շատ
կուտ ունի, օգուտ քաղենք առիթէն, և, եթէ հարկ
է, իմ դանակս հրաջքներ պիտի գործէ:

— Ա՛հ կեցցէ՛ Կրիլօն, կեցցէ՛, ա՛հ սատանայ,
դու քաջասիրտ մարդ մ'ես, հաւատայ: Բայց տես-
ներք, շարածձի, յարեց նա կրկին Ուրսոի ուղղելով
խոսքը, աղայ ես ի՞նչ ես, ինձի պէս մարդ եղիք, մայր:

Ուրսո վեր վերցուց գլուխն և աչերն անկեց գրչ-
խաւորին վրայ, հեղնական ժպիտ մը ցտեց իր շրթ-
ներն:

— Ըսէ՛, շարունակեց Կրիլօն, արձա՛նք քեզն
ծուզակէն կ'վախնամ, ըսէ տեսնեմ, հէ՞ . . .

— Ո՛հ, ո՛չ, գոչեց Ուրսո, ո՛չ արձա՛նք քեզն կը
վախնամ ո՛չ սատանայէն և ո՛չ իսկ քեզմէ, առանց
ձեր խրատուց կարող եմ գործս լմնցնել, կ'լսե՞ս:
Կ'իչէս որ առանց ինձի չ'կրցար ծակէն կծիկը դնել,
ինձի որ հակառակ պահապանաց աշտուրջ հսկողու-
թեան, դուրս հանեցի քեզ: Կու բարիզցի չես, օ՛ն,
գինովին մէկն ես դու և ոչ այլ ինչ, միայն ժամա-
ցոյցի շղթաներ շրթեղ կ'դայ ձեռքէդ, այն ալ գի-
նով չեղած ժամանակդ:

— Է՛հ, չափը կ'անցնես, գոչեց Կլութօն կատաշորէն, լեզուդ քեզ քաշէ քիչ մը, եթէ ոչ հիմակ այնպէս մը կ'քնացնեմ քեզ որ ա՛լ չես արթննար:

Ուրսօ չ'պատասխանեց, այլ արդէն ոտքի վրայ կայնած էր երկայն գալոյն մ'ի ձեռին, և կ'պտորաստուէր անոր վրայ յարձակիլ, երբ Կրիլօն իր տեղէն ցատկելով եկաւ երկուքին մէջ տեղ կանգնեցաւ:

— Ա՛հ, յանուն սատանայի, գոչեց նա . . . ինչ կ'ընես, հապա մեր գօրծն, մէջ պիտի խաղայ . . . ո՛վ որ առաջին անգամ յարձակի՛ պիտի սատկեցընեմ, կամ քծախէրէրն հօս կանչելով ծակը նետել պիտի տամ ձեզ, ուր սե հաց կամ ձիու պէս յարդ պիտի ուտէք: Օ՛ն, վա՛ր դրէք զէնքերնիդ, ապա թէ ոչ արդարութեան կ'մատնեմ զձեզ, ահաւասիկ հօս են գիշերուան արծաթ փետերն:

Երկու հակառակորդներն վայրկեան մ'անշարժ կեցան իրենց դիրքին մէջ, բայց Կրիլօնի սպառնալիքէն սարսափելով իւրաքանչիւրն իր տեղը վերադարձաւ: Կլութօն հաշտուեցաւ: Իսկ Ուրսօ պահեց իր խոթոռութիւնն և աչքին տակէն կ'ղիտէր իր կարծեցեալ պետն և կ'մռտար:

— Հիմակ, ըսաւ Կլութօն, նախ քան խօսիլն այն արչաւանքին վրայ զոր պիտի կատարենք մեր ազնուականին առաջնորդութեամբ, քանի մը շիչ ձերմակ ջուր տնկենք: Է՛, սպասաւոր, սյուսաց նա:

Բայց դեռ Կլութօնին խօսքը բերանն էր, երբ գինեպանն օղիի շիշերն արդէն շարած էր սեղանին վրայ:

— Կոնծենք միասին, չան տղաք, յարեց պետն, վասն զի կապահովցնեմ ձեզ որ այս ժամուս ազնուականն արդէն ճանրան է:

Եւ Կլութօն կ'պարպէր արդէն շիշին կէսէն աւելին:

— Վիզս կ'կտրեմ, յարեց նա, եթէ ազնուականն քանի մը վայրկեանէն թաց խուխում եղած հօս չ'գտնուի: Եւ շիշ պարպեց:

Նոյնն բրու նաև Կրիլօն: Ուրսօ միայն չափաւոր կերթար:

— Տնկեցէք, կոնծեցէք, անիծից արմատներ, գոչեց վերստին Կլութօն — որ տակաւ կ'սկսէր օղիի ազդեցութիւնն կրել: — Տնկեցէք, վասն զի այս է իմ օրհնութիւնս: Ա՛հ, աւազակներ, մոսցանք մեր գործին վրայ խօսելու:

— Կրօ՛ղ, ընդ միջեց Կրիլօն, հազար անգամ չեն կրկներ: Բայց, սատանի ծնունդ, կ'կարծես թէ տասը հատը մէկէն կլլելու դեղահատեր են ասոնք:

— Աւելի դիւրին է, ըսաւ Կլութօն, քու դեղահատներդ երբեմն կոկորդին կ'փակչին և մեծ դժուարութեամբ վար կ'երթան, բայց իմիններս, իմ ճերմակ ջուրս, իւզի պէս կ'սահի:

Շիշերն արդէն սարսափած էին, Կլութօն կրկին ապսպրեց և ոտք ելնելով գէպի գուռը գնաց, բայց անձրեւէն որ հեղեղանման կ'տեղար, բան մը չիկրցաւ նսմարել մթութեան մէջ:

— Է՛հ, խերն անիծածս, գոչեց նա իր տեղը վերադառնալով, բայց ո՛ր մնաց նա. եթէ օձիքը ձեռք տուաւ արծաթ փետերուն, ապուշին աւանակին մէկն է ուրեմն:

— Պրըթօն մ'էնա, Ալութօն, ընդ միջեց կրիլօն, և այս պրըթօնները բոլորն ալ հանած շարած կ'ըլլան, մի վախնար:

Հազիւ աւարտած էր իր խօսքն, նոր անձ մը գիւնեռուհին ներս մտաւ:

Այս նորեկն, ճշմարիտ բարեկամ միւս երեքին, անհետխաբէ խոշորութեամբ ականջներ ունէր և Օսէյլար (Ֆէթակաշ) անունը կ'կրէր:

Երեք խմորներուն մտեցաւ և անոնց քով նստաւ:

— Ո՛ւր մնացիր այս ատեն, կրող, դոչեց Ալութօն լեզուն բերնին մէջ դառնալով և անոր բաժակը լեցնելով:

Նորեկ բարեկամն առաջին անգամ բաժակ մը հանեաւ պարպեց:

— Օ՛ն, անկէ, Օսէյլար, այսօր զատիկ է ըստ ազնուականաց:

— Վայ նզովից արմատ, մեմուաց Օսէյլար, դու ծերուկ ես, Ալութօն, և չես կարող ամեն օր ճերմակ հաց ուտել, իսկ ես, ան:

— Տեսնենք, հանած վարած, ըսաւ Ալութօն, ինչո՞ւ համար այսքան ժամանակ աւանակի պէս սպասել տուիր մեզ:

— Եւ, տակաւին երկար ժամանակ պիտի սպասէիր եթէ բաւական ճարպիկ չիինէի: Եւ սխաւ կամաց մը ձեռքը գրպանին զարնել, յորմէ մետաղի ձաղն մ'եւլաւ. այս ձաղնին վրայ միւս երեք ընկերներն միաբերան աղաղակ մ'արձակեցին:

— Եւ ողորմելին, առիւծի մը պէս կ'ուզէր կուտիլ հետս, բայց չգիտէր որ իմ զանախ շատ խորունկ կ'մանէ ուսերուն մէջ:

— Եւ դու զանի անդին զրկելու արհեստը գիտցար, ըսաւ Արիլօն:

Օսէյլար չպատասխանեց, այլ ձեռքը գրպանին մէջ խօթելով մեծկակ թղթապանակ մը հանեց և իր ընկերաց հիացած աչքերուն առջև դրաւ:

Գինեպանն ևս որ իր ընչաքաղց աչքերն անկած էր թղթապանակին վրայ՝ որ այնքան ոսկի կ'պարունակէր, խոր մունչիւն մ'արձակեց:

— Բայց սքանչելի բան մ'է . . . վայ անզգամ, դոչեց Ալութօն, մարդ փափաք կ'զգայ աղնուական, հարուստ լինելու:

— Այո՛, աղնուական է նա ում կ'վերաբերի դէրիններն, պատասխանեց Օսէյլար խորխտարար:

— Հըմ, ըրաւ յուսախար պեան:

— Նախ և առաջ պէտք է որ արկածն պատմեմ, շարունակեց Օսէյլար: Հոս գալու վրայ էի երբ լապտերի մը լոյսով մէկը տեսայ որ գիւնով էր և ունեւոր կ'երևէր: Կամաց կամաց ետևէն գացի, աչքիս այնպէս երեցաւ որ ստպատող մ'էր, բայց դանակը ձեռքս՝ անոր մազերէն բռնեցի և ճամբուն վրայ կեցուցի. սխաւ շան մը պէս ունալ, բայց դանակս սղոցեց անոր վիզն և բանը լմացուց. ան, դեղիններով լեփ լեցուն քսակ մ'ունէր, առի: Առանց վայրկեան մը կորսնցունելու, կամացուկ մը կ'ծիլը դրի, կ'վախնայի որ արծաթ փետա մը չ'նշմարէ զիս. ճամբան ալ որչափ ցեխտտ էր. է՛ն, ինչ կ'ըսէք ճարպիկութեանս, հէ՛:

— Օ՛ն, գոռաց Ալութօն անհամբեր, մէջտեղ հանէ դեղիններն, ապա թէ ոչ հիմակ մէկ կառուփով քիթը կ'ջախջախեմ, կ'հասկնամ, շուտ:

— Օ՛ն, խաֆած ծերուկ, այնչափ վախկոտ մի կարծեր զիս, գոչեց Օրէյլար հեգնարար:

Եւ կ'պատրաստուէր թղթապանակն գրպանին մէջ դնել:

— Է՛հ, մի պահեր դանոնք, գոչեց Ռերսո որու համր լեզուն բացուեցաւ իտես սակիներուն, պէտքէ բաժնել դանոնք:

— Ինձի ալ բաժին, յարեց Կրիլօն:

— Երբէք պատասխանեց Օրէյլար խնդալով, ես կենացս մէջ այսքան դրամ տեսած չունէի, մէկ կուտ չեմ տար և ո՛չ մէկուն. օն ծերուկս, գո՛հ եղիր աչքով միայն լուներով դեղիներն, ա՛հ ինչ . . . :

Փամանակ չունեցաւ լմնցնելու:

Կլութօն անոր վրայ յարձակած էր, և կոկորդէն բռնելով՝ կ'ջանար խեղդել դանի: Ապա դառնալով միւս երկուքին.

— Հասէք, ընկերներ, շո՛ւտ, հանէցէք դանակնիդ, գոչեց նա, դեղիները մերն են:

Երեք դանակներու երկայն և նուրբ սայրերն շողացին լսատերին աղօտ լոյսին մէջ և մխուեցան՝ երկուքը խեղճ Օրէյլարի սիրտն և միւսը՝ քունքերէն գանկին խորը: Տարաբաղդ Օրէյլար դիտապաստ և անկենդան ինկաւ իր սպաննիչներու ոտքն: Թղթապանակն զոհին գրպանէն ինկաւ, և տախտակամածին վրայ գլորելով՝ բացուեցաւ և բաւական թուով լուծ սակիներ գուրս թափեցան:

Քինեպանն խոր մունչիւն մ'արձակեց իտես այդ սակիներուն որ սակայն իր գրպանը չ'սխտի մտնէին, բայց հաճութեամբ դիտեց նաև որ մի քանի հաս գլորելով մինչև իր սեղանին տակ եկան:

Մարդասպաններն, տակաւին դաշոյն ի ձեռին, և ճշմարիտ անգղներու նման ոսկիներուն վրայ ինկած էին:

Երբ իրենց կողոպուտն լմնցուցին, ոչ առանց փոխանակութեան մի քանի թեթև հարուածներու, երեք ընկերներն վերցուցին զոհին դիակն, մինչդեռ գինեպանն իր սեղանին ետևի կողմէն կ'բանար փորիկ դանակ մ'ուրկէ վար գլտորեցին Օրէյլարի արիւնաթաթախ մարմինն:

Ապա դոյլ մը ջուր բաւական եղաւ արեան ամեն հետք ջնջելու:

Երեք ընկերներն իրենց տեղն վերադարձան, և Կլութօն, սոսկալի պաղարիւնութեամբ, կրկին օղի ապսպրեց, սեղանին վրայ մնացած վերջին բաժակներն սարսկելէ յետոյ:

Նոյն պահուն, գինեպանն, երեք աւազակներն աչքին ծայրով դիտելէ յետոյ, կամաց մը ծուեցաւ և ակնարկ մը նետեց սեղանին տակ, ուր գտաւ քանի մը ոսկի, զգուշութեամբ և արագապէս ժողվեց դանոնք և սկսաւ համրել:

Միւս երեքն ալ իրենց ոսկիներն կ'համրէին. Կրիլօն մինչև քսաներկու համրեց, Ռերսո տասնևհինգ, և Կլութօն տասն:

Իսկ գինեպանն, աւելի բարեբաղդ, մինչև երեսուն համրեց:

Երեք ընկերներն կ'չարունակէին խմել. միայն Ռերսո քիչ մը խելքը գլուխը կերակէր, իսկ Կլութօն աւելի կ'կակազէր քան կ'խօսէր:

— Ա՛հ, ցնդած, գոչեց Ռերսո, բայց դու աստուածաժախ մարդ մը կ'երևիս, գինովին մէկն ես, հի-

մակ մեր ազնուականն հոս պիտի գայ և քեզ դինով պիտի տեսնէ :

Կլութօն իրր սլատասխան ի մի ումայ սլարպեց ամբողջ շինն , որով անզգայ վիճակի մէջ ընկաւ , հաւասարակշռութիւնն կորսնցուց և տախտակամածին վրայ գլորեցաւ ողեսպառ :

Սոյն վայրկենին գինետան դուռը բացուեցաւ , երկայն վերարկուով մը փաթթուած և թաղիքէ գլխարկով մը մինչև դէմքին կէսը ծածկուած մարդ մ'երեւցաւ սեմին վրայ :

Ուրսո աչքերն անոր վրայ դարձուց :

— Նոյն ինքն է , մրմուաց :

Այս բառերն ելեքարացուցին իր երկու ընկերներն , Կրիլօն վեր ցատկեց իր տեղէն , իսկ Կլութօն ի զուր փորձեց ոտքի վրայ կանգնիլ :

Նոյն միջոցին նորեկ անձն ներս կ'մտնէր :

Ըսենք անմիջապէս թէ ո՞վ էր այս անձն :

Այս անձն էր ժիւլ Շամէլ :

Ուրսո իր սրնդաց վրայ երեքալով և զգալը բազկին տակ , յառաջացաւ դէպի Շամէլ և անոր ներկայացուց ամթուակ մ'որու վրայ նստաւ միւսն :

Ուրսո և Կրիլօն ոտքի վրայ կանդնած էին անոր առջև յարգական ձևով :

Շամէլ ակնարկ մը նետեց Կլութօնի վրայ :

— Հապա ա՛յս , հարցուց :

— Ներողամիտ եղիք , սլատասխանեց Կրիլօն խուլ ձայնով մը , չափէն աւելի թըջած է կոկորդն , սլեաք է փոխել տալ զինք , ապա թէ ոչ վազ առաւօտ գլուխը ծանր կ'ըլլայ :

— Օ՛ն , մեկդի թող այդ գողի լեզուդ , ըսաւ

Շամէլ սրամտեալ , և լրջօրէն խօսինք , գործը ձեր կարծածին չափ թեթեւ չէ :

Կրիլեօն շիտիմած կ'երևէր : Կլութօն վեր վերցուց դուխն և Շամէլին նայեցաւ ահռելի և ծամածուռ դէմքով մը :

Շամէլ սարուռ մ'զլաց իր բոլոր մարմնոյն վրայ , տեսնելով այդ գոխային դէմքն :

— Ո՞վ է այն , հարցուց վերստին :

— Ա՛ն , սլարոն , սլատասխանեց Ուրսո , գինովին լէ՛ն է որուն ուշադրութիւն ընել իսկ չ'արժեր :

— Ո՞վ , ե՞ս , գոչեց Կլութօն , փորձելով ոտքի վրայ կանգնիլ , զի . . . զի . . . նովներ :

Եւ ահռելի հայհոյանք մը ժայթքեց բերնէն :

Շամէլ արհամարհոտ ակնարկ մը նետեց անոր վրայ , և միւս երկուքին դառնալով .

— Հիմակ , խօսքը երեքնուս մէջ , յարեց նա , արդէն զիտէք ձեր ընկերքն :

Ուրսո և Կրիլեօն գլուխնին խոնարհեցուցին :

— Հիմակ , շարունակեց նա , խնդիրն ուրիշի մը վրայ է որ կ'ուզէ մտանել զիս , յայտնելով իմ դաւս այն անձին որու հետ գործ պիտի ունենաք :

— Ո՛ւր սլեաք է քեզմէլ զանի , ըսաւ Կրիլեօն :

— Ո՛չ , սլեաք է խնայէք անոր կենաց : Երբ սա անտառն մտնէ միւսն փնտաւելու , անմիջապէս պիտի բռնէք զինքն և ձերբախալէք՝ իրր հեղինակ սպառնութեան . նոյն միջոցին ոտախալութիւնն վրայ պիտի հասնի և մնայածն լմնցնէ :

— Ուրեմն գլխատման պիտի դատապարտուի , ըսաւ Կրիլեօն :

— Անտարախոյս , սլատասխանեց Շամէլ , և այս

պարագային մէջ հնար եղածին չափ պէտք է պա-
ղարիւն լինիք, որպէս զի վրանիդ կասկած չ'հրաւ-
իրէք, ապա թէ ոչ քաներնի՞ քոսածէ: Բայց պար-
տիք իմ հրահանգացս համեմատ շարժիլ, ինչպէս
վարուեցաք երբեմն Պէշրէշ անուն անձին համար:

— Այո՛, այո՛, կ'յիշեմ հիմակ, ըսաւ Ռերսօ, այն
ալ չ'կրցաւ մեր ձեռքէն սրծիլ:

— Բայց վաղը բոլորովին տարբեր կերպով պիտի
դորձէք:

— Ի՞նչ պարտինք ընել, հարցոց կրկնեօն:
— Հրահանգներն վաղ առաւօտ կանուխ իմ տանս
մէջ պիտի ընդունիք, հասկցա՞ք:

Եւ ոտք ելաւ:
— Զգուշացէ՛ք ուժերնիդ վատնելէ, ըսաւ նա
ոտք ելնելով և լեցունկեկ քսակ մը սահեցնելով
Ռերսօի և իր ընկերոջ ձեռքին մէջ, որք ուրախու-
թենէ սկսան ցաթկրտել:

Եւ դուրս ելաւ:
Երբ երկու ընկերներն առանձին մնացին, նշանա-
կիչ ակնարկ մը փոխանակեցին իրենց մէջ և մօտե-
ցան Ալութօնի որ այլ ևս կենդ անութեան նշան չէր
ցուցնէր:

Ռերսօ և Արկլեօն ծուեցան անոր վրայ և գրպանը
խառնեցին:

Բայց Ալութօն, հակառակ իր գինովութեան, խնա-
ցաւ իր ընկերաց զիտաւորութիւնն և ոտքի վրայ
ելնելու ճիգ մ'ընելով:

— Օ՛ն, արբիւններ, գոչեց, չպիտի առնէք փայ-
լուն գեղիններս:

Բայց չ'կրցաւ աւելի երկար ոտքի վրայ կենալ, և

վերստին գետին ինկաւ իբր անդգայ դիակ մը, և
զլուխը պատին ընդհարեցաւ:

Յայնժամ, ցաւէն մռնչելով, հանեց դաշոյնն և
ուզեց նետել դայն Ռերսօի որ քանի մը քայլ ետ
քաշուեցաւ:

Բայց դաշոյնն իր անդոր ձեռքէն սահելով իր վրայ
ընկաւ, և իր սրունքին մէջ մխուեցաւ: Ալութօն
գալարեցաւ, թաւալեցաւ տախտակամանին վրայ՝
սարսափելի հայհոյանքներ ժայթքելով:

— Օ՛ն, ոտք ել, գոչեց նմոյ Ռերսօ, ահաւասիկ
գեղիններդ գրպանիդ մէջ են:

Գինովն, վստահելով իր ընկերոջ խօսքերուն, ոտք
ելաւ անոր օգնութեամբ և գայթ ի գայթ գուրս
ելաւ գինեառնէն:

Արկլեօն արդէն մեկնած էր, միայն Ռերսօ մնա-
ցած էր:

Գինեպանն յափաքայլ յառաջացաւ դէպի նա՝
ձեռքն անոր երկնցնելով:

— Ի՞նչ, կուղես որ վճարեմ, անդգամ, ըսաւ Ռեր-
սօ, սպասէ՛, քեզ հետ հաշիւ ունինք կարդաղրելու,
մի վախնար:

Գինեպանն կապարագոյն դարձաւ:

— Ես բան մը չ'գտայ, թոթովեց նա:

— Ա՛հ, թշուառական, դ՛ո՛ւ ինքդ կ'մատնես գքեզ,
գոչեց Ռերսօ դէպի սեղանն յառաջանալով, դու կը
կարծես, անդգամ, թէ ես չ'տեսայ երբ դեղիններն
ձեռքիդ մէջ կ'համրէիր, գրեթէ մինչև երեսուն
համրեցիր:

Եւ գլորոցն բացաւ:

— Գրամս, դրամս ունաց գինեպանն:

Եւ ուղեց Ուրսոի վրայ յարձակել, բայց սա հանեց զանակն՝ սպառնալով որ տեղէն չչարժի, միտջգեռ միւս ձեռքով կ'պարպէր զգրոցն:

— Ահա հատ մը միայն կ'թողում քեզ, պէտք է անով դո՛ւ լինիս:

Եւ դուրս ելաւ:

Երբ զինետունէն դուրս ելաւ, առաջին անգամ հանդիպեցաւ տարաբաղդ Կլութօնին որ գետնին վրայ տարածուած էր: Մօտեցաւ նմա և ուղեց ձեռքն զինովին գրպանը խօթել, բայց Կլութօն, զրսի զով օղէն կիսովին սթափած, ոստում մ'ըբաւ գոչելով — Դեղինե՛րս:


— Վա՛ր առ թաթերդ, ըսաւ Ուրսօ, կեցի՛ր, հի մա՛յ պիտի սորվիս թէ ի՛նչպէս մարդուն քիթը կ'կուտրեն:

Եւ զանակն մխեց անոր սիրտն:

Թշուառն զայլարեցաւ ցեխին մէջ, ուղեց պոռալ, բայց կոկորդին մէջ մարեցաւ ձայնն: Մեռած էր նա: Յայնժամ Ուրսօ ձեռքը խօթեց Կլութօնի գրպանին մէջ ուսկից հանեց հինգ Լո՛ւի՛ճ, միւսներն աներևոյթ եղած էին:

— Ձէ՛ր արժէր այսքան չնչին բանի համար անդին շրկել զանի, բայց այնպիսի դաս մը տուի իրեն որ յաւիտեան մտքէն չպիտի ելնէ:

Եւ հեռացաւ նա, քթին տակէն մրմուռով Մարտիկէն:



ՊԼՈՒԽ Պ.

ՈՒՐ ՇԱՄԷԼ ՎԵՐՍՏԻՆ ՏԵՍԱՐԱՆ ԿԳԱՅ

Այժմ կ'խնդրենք մեր ընթերցողներէն որ Շա՛մէլի զինետան մէջ տեղի ունեցած տուածին ականաւ տես լինելէ յետոյ, հաճին մեզ հետեւիլ Բրովանս փողոցին մէջ: Սոյն փողոցին մէջ տեղ կ'գտնուի լայնանիստ և բարձր տուն մը: Այս տուն եռայարկ է:

Միջնայարկին պատահաններն լուսոյ խորձեր կ'արձակէին դէպի դուրս, և, հակառակ ամրապինդ գոցուած պատահանաց և անձրևի միօրինակ չռինդին, ուրախութեան բարձրագոյ աղաղակներ լսելի կ'լինէին:

Որովհետև մեր պատմութեան ողին կ'պահանջէ որ գիտնանք այդ լուսավառութեան և խրախճանութեան պատճառն, վայրկեան մը պիտի մտնենք այդ տան մէջ: Անցնինք նախ բակէ մ'որու հանդիւ պակաց ծայրն կ'բարձրանայ լայն սանդուխ մը որ լուսաւորուած է ձեղունէն կախուած փայլուն սողպատէ հինգստեղնեան ջահով մը: Վեր ելնենք սանդուխէն և մտնենք ընդարձակ և չքեղասկիս զարդարուած սրահ մը: Աքանջելի և թանկագին գորգեր կ'զարդարեն այս սրահին չորս որմերն: Բիւրեղեայ երեք փառաւ որ ջահեր, իւրաքանչիւրն քսան ստեղունքով, եռանկիւն մը կ'կազմեն սրահին մէջ տեղ: Չորս հսկայածև հայելիներ կ'ցլացնեն և զիւ-

Թահան առատութեամբ կ'բազմապատկեն ջահերու երփներանգ լոյսն :

Սրահին չոր անկիւններն , շարժուն աստիճանաց վրայ՝ դրուած են հոյակապ անօթներ որոց մէջ դեղուղէչ կ'բարձրանան գորգինաներ (dahlias) և ֆափեւներ՝ վարդագոյն և սպիտակ ծաղիկներով :

Սոյն չքեղազարդ սրահին մէջ տեղ շտկուած է սեղան մ'որու շուրջն բազմած են քսանի չափ անձինք : Յաօճապակեայ անօթ մը՝ հաղուազիւտ գեղեցկութեամբ՝ դրուած է երփներանգ ծաղիկներով ծանրաբեռնեալ սեղանին մէջ տեղ :

Բոլոր այս բազմականաց մէջ մին միայն ամենէն աւելի ուշադրութիւն կ'գրաւէ : Այս բազմական , կարմրագոյն թաւչէ թիկնաթուռի մը վրայ նստած , ունի անուշ դէմք մը և սև մազեր . նրբենի և վայելուչ պիսեր և մետաքսանման ու ցանցաւ մազերով մօրուք մը թեթևակի կ'բոլորեն իր աղնիւ և ծիծաղուն դէմքն :

Հազիւ քառասուն տարեկան կ'թուի :

Իր սև թիկնոցին լամբակէն (boutonniere) անցուած է կարմրեղր ժապաւէն մը :

Իր փոքր ինչ թուխ գոյնն , և ձախցտին վրայ ունեցած թեթև սպի մ'ենթադրել կ'տան թէ վաղեմի պինորական մ'է նա :

Իր քով նստած է մանկամարդ կին մը՝ դալկադէմ , սև և նուազկոտ աչերով : Իր եպենոսի նման սև մազերուն վրայ կ'կրէ գոհարազարդ ոսկի վարսակալ մը :

Նէ հազած է մետաքսեայ գորշագոյն շրջադէստ մը , մերկ թողով իր բազուկներն և սպիտակ կուրծքն .

Թանկադին մարգարտէ մանեակ մը կ'չըջտապատէ իր ձիւնախայլ պարանոցն :

Երկու տղաք , մին տասներեք և միւսն տասն տարեկան , նստած են նէրա մօտ :

Մնացեալ բազմալանք կ'բազմանան երկու սեռէ երիտասարդներէ և մի քանի ծերերէ :

— Կ'տեսնեմ , սիրելիդ իմ Բրէվալ , ըսաւ սեղանակիցներէն մին , խօսքն ուղղելով անոր որ նստած էր թիկնաթուռի վրայ և որ կ'նախագահէր սոյն ընտանեկան երեկոյթին . կ'տեսնեմ , սիրելիս , որ օդն փոքր ինչ աննպաստ է ձեր ճամբորդութեան . այս տեսակ օդերուն ճամբաներն անանցանելի կ'լինին :

— Կարճատե փոթորիկ մ'է , պարոն Պօզէլ , և ոչ այլ ինչ , պատասխանեց սա , և կ'յուսամ թէ վաղը գեղեցիկ օդ մը պիտի ընէ : Մնաց որ , կատքով ճամբորդութեան մէջ վախնալու բան մը չ'լայ :

— Այո , գիտեմ , բայց խոստովանեցէք որ միշտ ախորժելի չէ սոսպիսի սարսափելի օդով մը ճամբորդել :

— Բայց չէք կարող մի քանի օր յետաձգել ձեր ճամբորդութիւնն , ըսաւ տժգոյն և նիհար երիտասարդ մը որ նստած էր Բրէվալի դիմաց :

— Անկարելի է , բարեկամ , պէտքէ որ վաղը մեկնիմ Մարսի իա , գործերս գիտ հոն կ'կոչէն . . . արդէն մինչև հիմակ հոն գտնուելու էի . . . :

— Եւ որքան ժամանակ պիտի տեւէ ձեր ճամբորդութիւնն , յարեց երիտասարդն :

— Եւ ոչ ես ինքս գիտեմ : Մարսի իա գործերս լննցնելուս պէս պիտի անցնիմ Այաչչիօ և անալի

Հում. ըսել է ճամբորդութիւնս պիտի կրնայ անել ինն կամ տասն ամսոյ չափ, և . . . :

— Հայրիկ, ըսաւ երկու տղոց փոքրագոյնն՝ ընդ միջեւ իր հարն, վերադարձիդ ինչ պիտի բերես ինձ :

— Շատ մը բաներ որ քեզ հաճելի պիտի լինին :

— Հապա դո՞ւ, Օկրուդէն, յարեց Բրէվալ՝ երկցադուռնին ուղղելով, ինչ կ'փափաքիս որ բերեմ քեզ :

— Ես, հայրիկ, պատասխանեց տղան մեղամաղձատ դէմքով մը, ուրիշ բանի չեմ փափաքիր բայց միայն քու ընդ փոյթ վերադարձիդ, երջանիկ և քաջաուող :

— Շնորհակալ եմ բարեմաղթութենէդ, որդեակ իմ, ըսաւ Բրէվալ արտասուալից աչօք, եկէ՛ք երկուքդ ալ որ գրկեմ զձեզ :

— Այո՛, ըսաւ իր երկու կողմը նստեցնելով զունոնք, այո՛, ես ևս կ'փափաքիմ՝ որչափ կարելի է՝ չուտով վերստին տեսնել զձեզ : Զգիտեմ թէ որչափ պիտի տեսէ ճամբորդութիւնս, բայց կ'յուսամ թէ վերադարձիս դարձեալ ողջ առողջ և երջանիկ պիտի գտնեմ զձեզ :

Նոյն պահուն սրահին դուռը բացուեցաւ և սպասաւոր մը ծանոյց զալուստն Պ. Թէօֆիլի :

Այս նորեկ անձն քսանիննէն երեսուն տարեկան երիտասարդ մ'էր, նշանակիչ և պարզամիտ դէմքով : Նա ունէր միջակ հասակ մը և տկար կազմ : Յանցաւ մօրուք մը կ'ծածկէր իր ծնօտին ծայրն, և իր փոքրիկ այլ կենդանի և սևաթոյր աչերն զուարթութիւն ու երջանկութիւն կ'արտայայտէին :

Շնորհալի ձևով ընկերութիւնն բարեկէ յետոյ, յառաջացաւ դէպի Բրէվալի և անոր ձեռքը բանեւով :

— Բարե, արքայդ խնձորից, ըսաւ նա :

Բրէվալ իր քով նստեցուց զանի :

— Խնդրեմ, սիրելի պարոն Թէօֆիլ, ըսաւ աիլին Բրէվալ, դեռ կ'անձրեմ արդեօք :

— Կ'անձրեմն ալ խօսք է, պատասխանեց Թէօֆիլ, լրջօրէն կ'խօսիք. բայց կ'չսակնամ, հոս այնչափ ազատով էք որ դուրան անյած գացածը չէք լսեր : Տարերք չլի՛ս այսպէր իր զամ ես, աիլին, և երկնից սահանք բացուած :

Այս խօսքերուն վրայ Տիլին Բրէվալ տմոռնեցաւ, իր ամուսնոյն մօտալուտ ուղեորութեան գազախօրն շատ անհանդիստ կ'ընէր պինք. բայց անվրդով մնաց, յուսաւով միշտ որ փոթորիկը վերջապէս պիտի դադրէր :

— Հապա Ֆիլի՛ք, հարցուց Բրէվալ, ինչ և դու նա :

— Ֆիլիք, սիրելիս, իբրև յաջողակ դերասան, վերջ տուաւ կատակերգութեան մը զոր սկսածք Քառօի տան մէջ :

— Քառօ՛, մրմնաց Պօպէլ, օ՛, կ'ձանչեմ զանի, ճշմարիտ . . . :

— Աւագակ մ'է, լմնոց Թէօֆիլ :

— Ինչ անցաւ մէջերնիդ, հարցուց աիլին Բրէվալ իր տխուր մատուցմերն ցրուելու հաւար :

— Ա՛հ, ոչինչ բան մը, պատասխանեց Թէօֆիլ զուարթօրէն : Փոքրիկ վիճարանութիւն մը պատմութեան վրայ. Քառօ որ, փակադ ծի մէջ, կատկած երկնիկութեան մը կեղբուն ըրած էր իր տունն, կ'յայտ-

տնէր իմինն զլսովին հակառակ կարծիք մ'ի մասին Սէն-Պարթէլըմի ցաւալի միջողէպին: Այս վիճարանութիւն տեւեց աւելի քան կէս ժամ, և ես, արքայականս, չկարենալով ընդունիլ որ Շարլ Գ. խորհած և պատրաստած լինի այս քստմնելի կտորածներն; հարկադրեցայ հեռանալ սրահէն, իմ տեղս թողլով եղբայրս՝ Ֆիլիբ, որպէս զի խօսք հասկըցնէ տան տիրոջ:

— Գոնէ եղբայրդ կրցա՞ւ յաղթել Քառօր, հարցուց Բրէվալ:

— Այո՛, կատարելապէս: Քառօրիւրի և աւանակի պէս յաղթուեր է, պատասխանեց Ֆիլիբ խնդալէն ձաթելով:

Բայց այն ինչ կ'պատրաստուէր բացատրել իր յանկարծական զուարթութեան պատճառն, և ահա դուռը բացուեցաւ և սղասաւոր մը ծանոյց դալուստըն Պ. Ժիւլ Շամէլի: Նոյն պահուն ժամացոյցն առաւօտեան ժամը երկուք կ'զարնէր:

— Ի՛նչպէս, դուք հո՞ս, այս ժամուս, ըսաւ Բրէվալ ոտք ելնելով և աթոռ մը ներկայացնելով այցելուին, շնորհակալ եմ որ զիս չէք մոռցած:

— Այս տիկնայք պիտի ներեն ինձ անշուշտ, ըսաւ Շամէլ, որ այսքան ուշ ատեն կ'գամ ընդմիջել առ ընտանեկան հանդէսն: Բայց գիտնալով որ վաղ առաւօտ կանուխ պիտի մեկնիք, չ'րցայ դիմադրել ձեր ձեռքը սեղմելու հաճոյքին, սիրելիդ իմ Բրէվալ: Այսպիսի անյարմար ժամանակ մը դալս զբաղմանցս շատութեան տուէք: Ժամը քանի՞ն պիտի մեկնիք:

— Ժամը եօթին, եթէ ողջ նեկէ:
— Օղջ բացուեցաւ, անձրեն դողրս ծ է և երկինք,

որ ժամ մ'առաջ այնքան մութ էր, այժմ աստեղազարդ կ'փայլի:

— Աւելի լուս եթէ այդ պէս է, հաւանականաբար հիտիտն պիտի անցնիմ Պուլօնէի անտառէն: Կ'սիրեմ ոտքով չրջագայութիւնն: Մտադիր եմ նաև փոքրիկ այցելութիւն մը տալ ի Ռիւլլլ:

— Եւ միթէ մտքերնիդ դրած էք անպատճառ երթալ մինչև Մարսիլիա:

— Կրնամ միթէ այլապէս ընել, սիրելիդ իմ Շամէլ: Գիտէք որ այդ առևտրական քաղաքին մէջ իմ ներկայութիւնս կարևոր է:

— Բայց, պարոն Շամէլ, ըսաւ տիկին Բրէվալ՝ միշտ տխուր և խոհուն, կարելի չէ՞ արդեօք որ ամուսինս ուրիշ մը փոխանորդ կարգէ ի Մարսիլիա:

— Ո՛չ ոք, տիկին, պատասխանեց Բրէվալ, տան մը պետն պարտի ամեն ինչ անձամբ տեսնել:

— Ճիշդ է, սիրելիս, բայց ձախորդ ձամբորդութիւններ կան, և տայր երկին որ նախազգացումներըս վրիպ'ին:

— Խե ես դու, ինչ բան կարծել կ'տայ քեզ որ այսպիսի պարզ և անշուք ձամբորդութիւն մը աղիտարեր լինի ինձ: Մարսիլիա աշխարհիս ծայրը չէ և կարծեմ ո՛ր է անապատէ մ'ալ չպիտի անցնիմ:

— Անշուշտ, սիրելիդ իմ, ըսաւ Շամէլ ոտք ելնելով: Մինչև Բրոպէնս ձամբորդութեան մը մէջ ոչինչ կայ վախճալու, և տիկինն կ'սխալի իր նախազգացմանց մէջ: Թող տուէք ինձ ուրեմն, մեկնելէ առաջ, մաղթել ձեզ բարի ձամբորդութիւն մը և բարի յաջողութիւն ձեր դործոց մէջ:

— Կ'յուսամ, տիկին, շարունակեց նա դառնալով

դէպի տիկին Բրէվալի, որ ձեր ամուսինն սղջ առողջ տեսնելու երջանկութիւնն կ'ունենաք, և զայս կը մաղթեմ իրեն ի բոլոր սրտէ:

Եւ ուղղուեցաւ դէպի դուռն:

— Կանչեցէք սպասաւորս, ըսաւ նա տան ծառայելէն միոյն:

Միևնոյն ժամանակ յաղթանդամ և կորովի անձ մը, քիչ շատ տրիզեալ (galonné) և թեխն տակ կրելով վերարկու մը, ներկայացաւ իր տիրոջ: Սա աննշմարեի նշան մ'ըրաւ անոր և անմիջապէս սպասաւորին աչերն յառեցան Բրէվալի վրայ որ մինչև դրան սեմն եկած էր իր բարեկամին ընկերանալու համար: Այս սպասաւոր, ընթերցողն արդէն գուշակած է, ոչ այլ ոք էր այլ մեր վաղեմի ծանօթն՝ Ուրսօ, կլութօնի սպաննիչն և այս միջոցին Շամէլի սպասաւորն և մտերիմ խորհրդակիցն:

Երբ Բրէվալի տունէն բաւական հեռացան, Շամէլ վայրկեան մը կանգ առաւ և դառնալով իր սպասաւորին՝ որ իր ետեկն կ'զար՝ ըսաւ.

— Անշուշտ լաւ տեսար զանի և միտքդ պահեցիր:

— Ա՛հ, լաւ դրոշմեցի զանի մտքիս մէջ, անհոգ եղիք, ձեռքէս չկրնար արծիլ:


— Եւ պիտի կրնաս զանազանել միւսէն որու դէմքըն նկարագրեցի քեզ:

— Վաղը, վաղը կ'տեսնենք:

— Ուրեմն հիմակ զնա վերցուր ընկերդ իր տեղէն և զդուշացիր որ միւսը տունէն դուրս չեղնէ, վասն զի եթէ մի անդամ Բրէվալ իմանայ գործն, կորսուած ենք:

— Անհոգ եղիք, պատասխանեց Ուրսօ, լաւ պահ պանութիւն պիտի ընեմ:

— Գնա՛ ուրեմն, ըսաւ Շամէլ հեռանալով, և ճիշդ որոշեալ ժամուն ժամադրապայրն գտնուէ:



ՔՂՈՒԽ Ք.

ՏՈՒՄ ՄԸ ՊՈՒԼՕՆԵՒ ԱՆՏԱՌԻՆ ՄԵՋ

Այն ինչ առաւօտեան ժամ վեց կ'հնչէր ի Մատլէն, երբ կառք մը մը Բոյալի փողոցէն ելնելով մտաւ Շան-զէլիդէի մեծ պողոտան, և մի քանի վայրկենէն հասաւ Արք-տը-Թրիօնֆի առջո:

Գեղածիծաղ օր մ'էր: Երկինք կ'սկսէր ծիրանեգոյն ներկուիլ նորածագ արևուն առաջին նշոյլնեքով: Բարիզ կ'զարթնոյր: Մեծ ճամբուն բոլոր երկայնքն տակաւին ոչ ալ ինչ կ'տեսնուէր բայց միայն մի քանի գիւղացիներ, իրենց ձիերով և սայլակներով, որք կ'դիմէին քաղքին զանազան կողմերն: Արք-տը-Թրիօնֆի առջև հասնելով՝ կանդ առաւ կառքն. համազգեստով մարդ մը որ նստած էր կառավարին քով, վար իջաւ և դանակին մտենալով.

— Ո՞ր ճամբան պիտի բռնենք հիմակ, հարցուց մարդու մը որ կ'գտնուէր կառքին մէջ:

Նա որու կ'ուղղուէին այս խօսքերն՝ զլուխը դուրս

հանեց դռնակէն և շորս կողմն արագ ակնարկ մը նետելով .

— Ձախ կողմի ճամբան բռնեցէք, ըսաւ, և քէ-ցէք մինչև լճերն :

Մէկ ստուռնով սպասաւորն նետուեցաւ իր նստա-րանին վրայ :

Կառքն նոյն հետայն շարունակեց իր ճամբան, և տասը վայրկեան շանցած կ'դտնուէր Պուլոնեի ան-տառն : Նոյն պահուն հիասքանչ էր անտառն : Ա-սաւօտեան թեթև քամին մեղմիկ կ'շարժէր հինաւ-ուրց կաղնիներու տերևներն և այն ինչ բարձրացող արեգական ճառագայթներն կ'թափանցէին դալա-րուտ գմբեթներուն մէջ և երկիրն կ'ծածկէին ան-հուն ոսկեհատիկներով :

Ղճերուն մօտ հասնելով՝ կառքը կանգ առաւ :

Այն անձն որ սոյն հրամանն տուած էր՝ դուրս ելաւ :

Ապա կառավարն և սպասաւորն վար իջան իրենց կարգին :

— Ի՞նչ պարտինք ընել հիմակ, պարոն Շամէլ, հարցուց սպասաւորն :

— Նախ, պատասխանեց մեր դիւցազնն, ու շաղ-րութեամբ դիտեցիք որ անտառ սպահներն զձեզ նշմարեցին թէ ոչ :

— Ա՛հ, խաչոր, պատասխանեց Ուրսօ, միշտ մեծ մեծ տան մը համազգեստաւոր սպասաւորի մը կեր-պարան առած, աչքերս շորս բացած էի . . . :

— Ասկից դատ, յարեց կառավարն որու կրիչնօն լինելը դիւրաւ սխալի ճանշնայ ընթերցողն, շան պէս կ'վախնա՞ք որ զլուխնիս պարանոցէն չթուցունեն :

— Ա՛հ, թշուառական, հապա եթէ ճանշնային զձեզ . . . :

— Է՛հ, պարոն վարպետ, շարունակեց Ուրսօ, այն ատեն պիտի ներկիք մեզ անշուշտ եթէ մէկ կողմ թողլով զձեզ՝ սատանաներու պէս կծիկը դնէիք . . . :

— Օ՛ն, գոչեց Շամէլ համբերութիւնը հատած, վերջացուց՝ քսօսքերն, մեր գործին նայինք, ժա-մանակն կ'մօտենայ, հիմակ ժամը վեցուկէս կ'զարնէ և մեր մարդն արդէն ճամբան ըլլալու է . ես հօս պիտի մնամ անոր սպասելու համար, դուք երկուքդ կառքը տարէք մեր եկած ճամբուն ծայրն և ջանացէք ծածկել զայն տերևախիտ կաղնիի մը ներքև, որպէս զի այն կողմէն անցնող ոտտիկաններն հոտ չառնեն : Խոհեմութիւն, վերստին կ'կր'նեմ : սպասեցէք հօն մինչև որ հասնի երկրորդ անձն որու զիմազիծն ուր-ուազրեցի ձեզ : Անկէ անդին զիտէք ձեր ընկիւն . . . :

Երկու ընկերներն ցաթ կեցին իրենց նստարաննե-րուն վրայ և կառքն հեռացաւ . . . :

Առ այժմ թողունք որ Շամէլ և իր մեղսակիցք սպասելու վրայ լինին իրենց զօհին, և մենք փոխադ-րուինք Էմիլ Տէգրիփի տան մէջ :

Այս միջոցին ժամն առաւօտեան եօթն է : Փոթո-րիկն բոլորովին դադրած էր և պայծառ արև մը կը լուսաւորէր իր սենեակն :

— Խեղճ Բրէվալ, ըսաւ նա ինքնիրեն աճապարա-նօք հազուելով, երեկ չկրցայ իմաց տալ քեզ, բայց այսօր դեռ ժամանակ կայ : Օ՛հ, Շամէլ, թշուառա-կանն ամեն զգուշութիւն ձեռք առած է որպէս զի

չկրնամ տեսնել իր զոհն : Արքանեակներ ունի, ճիւ-
 անք : Այն քստմեկի դէմքն որ դաշոյն ի ձեռքն կա-
 սեցուց զիս երեկ, հասկցուց ինձ որ հարկ էր ետ
 դառնալ : Քայլ մ'եւս և ահա մեռած էի : Օղնութիւն
 կոչել, զո՞վ . . . այն սոսկալի ժամուն ուր փոթորիկն
 կ'դուար իր բոլոր սաստիութեամբ, և ոչ ոք կար
 փողոցին մէջ. բարկութենէ և կատաղութենէ խենդ
 դարձած՝ ստիպուեցայ տուն դառնալ և սպասել որ
 լուսնայ : Բայց ժամը եօթն է, Բրէվալ արդէն ճամ-
 բան լինելու է . . . : Գիտեմ որ նա Ռիւէյլ պիտի
 երթայ և իր սովորութեան համեմատ հետիտն պի-
 տի անցնի Պուլօնի անտառէն : Ժամանակն է եր-
 թալ զինք գտնելու . . . : Տայր երկին որ անոր հան-
 գիպէի : — Եւ Տէգրիվ, գուճատ և դողոջուճ, ա-
 ճապարանօք դուրս ելաւ տունէն :

Հաղիւ քանի մը քայլ առած էր, ինքզինք գտաւ
 զէմ առ զէմ Թէօֆիլի :

— Եստ կ'աճապարեք այս առաւօտ, սիրեկոյ իմ
 Տէգրիվ, ըսաւ նմա Թէօֆիլ՝ ճամբան գոցելով :

Տէգրիվ վարկեան մ'անոր նայեցաւ խոժոռ աչ-
 քով, և ապա հրելով դանի .

— Թողէք որ անցնիմ, պատասխանեց նմա : Բատ-
 մեկի դաւաճանութիւն մը կ'նի թուի Բրէվալի զէմ
 . . . այս առաւօտ . . . Պուլօնի անտառին մէջ : Ո՛հ,
 հրէ՛յը . . . : Ահա կատք մը, կեցի՛ր, կառավար : Յե-
 տոյ ամեն բան կ'իմանաք, պարտն Թէօֆիլ . . . :

Եւ Տէգրիվ, ինքզինքէն դուրս ելած, նետուեցաւ
 կատրին մէջ :

— Մինչև Արք-տը-Թրիօնֆ, գոչեց կառավարին,
 քառասուսակ մորակէ ձիերն, բոլոր զնաան իմ վրայ :

Թէօֆիլ, սրտաբեկ, արձանացաւ և զգալով որ
 ի մօտոյ սոսկալի տաամ մը տեղի պիտի ունենայ Պու-
 լօնի անտառին մէջ, դնաց ամիջապէս իմաց տալու
 թագին ոստիկանաց տեսչին :

Ժամը ճիշդ եօթուկէսին կառքն՝ որու մէջ կ'դա-
 նուէր Տէգրիվ, կանգ առաւ Արք-տը-Թրիօնֆի առ-
 ջև : Վար իջաւ կառքէն, կառավարին ստակը վճա-
 րեց և անտառին մէջ մտաւ :

Սարսուռ կ'ընթանայ իր անդամոց մէջ, իր կուրծ-
 քըն արագ արագ կ'ըլարախէ, յուսահատական կաս-
 կած մը կ'տանջէ զինք. կ'վախնայ յառաջ երթալէ,
 այլ չ'ուզէր ընկրկիլ. կարմրուն և ուռած աչքն կը
 դարձնէ ամեն կողմ, ինքզինք կ'ամբիօփէ՝ մօտիկ ընե-
 լու համար, բայց ոչինչ կ'լսէ, ոչ միմարդկային ձայն,
 այլ միայն թռչնոց դայլայլիկներն և առաւօտեան
 քամիէն չարժող տերեւներու մեղմ սօսափիւնն :

— Հասած չէ գուցէ տակաւին, ըսաւ նա իւ-
 բովի :

Քառորդէ մ'աւելի այսպէս սոսկալի անստուգու-
 թեան մէջ սպասելէ յետոյ՝ վերստին սկսաւ յառա-
 ջանալ յողդողդ քայլերով :

Վերջապէս անգամ մ'եւս կանգ առաւ և ա'նարկ
 մը նետեց իր ետին : Հեռուէն նշմարեց կառք մը որ
 յամրընթաց կ'թաւալէր ծառուղոյն եզերքէն, գրե-
 թէ կիսովին ծածկուած հինաւուրց ծառերու թանձ-
 րախիտ տերեւներուն տակ : Տէգրիվ բնաւ ուշադրու-
 թիւն չ'ըրաւ անոր և շարունակեց իր ճամբան : Մութ
 և նեղ ծառուղիի մը մօտ հասնելով տեսակ մը սար-
 անուռ զգաց իր բոլոր մարմնոյն մէջ. այս վայր չարա-
 դուլակ թուեցաւ իրեն. չափեց զինք չըճապատող

նեղ անջրպետին սահմաններն և այնպէս թուեցաւ իրեն թէ նախասահմանեալ և անտեսանելի ձեռք մը յառաջ կ'մղէր զինք. ոտուով մ'ըրաւ և իր առջև գտնուած մացառուտ պատնէջէն անցնելով՝ մտաւ մութ և ստուերախիտ ծառուղւոյն մէջ:

Այն ինչ Տէգրիվ մտած էր մթապստ ծառուղւոյն մէջ, կառքն, որ իրեն կ'հետեւէր, իրմէ քսան քայլ հեռու կանգ առաւ և երկու հոգի, ատրճանակ 'ի ձեռին, վար իջան անկէ, և քայլերնին ուղղեցին զէպ 'ի նոյն վայրն:

Տէգրիվ միշտ կ'ըսէր յամբ և տարտամ քայլերով, իր աչերն կ'հետազօտէին զաշարուտ մարդագետին նըն որ թուեցաւ իրեն թէ շատ կողմերէ կ'ոխտուած էր, և քանի մը քայլ անդին գետնին վրայ ինկած տեսաւ դաւազան մը և փողկապ մ'արնան բիծերով ծածկուած:

Սոսկման սարսուռ մ'անցաւ իր բոլոր անդամներէն, վայրիկ մը կանկ առաւ, յետոյ ինք'իր վրայ ճիգ մ'ընելով քանի մը քայլ ևս առաւ: Յանկարծ մաղերն քստմնեցան, դողդողաց, երերաց և շիջնալու համար ծառի մը կռթնեցաւ: Արեան բաղմաթիւ հետքեր կ'տեսնուէին ամեն կողմ և աւելի հեռուն, մարդագետնին վրայ, կ'կաղմէին ակօս մը:

Եւ սակայն աւելի առաջ դնաց հա, և, մինչև ծայրն հասնելու որոշմամբ, քանի մը քայլ ևս յառաջացաւ: Նոյն պահուն սոսկման ճիչ մ'արձակեց և ինկաւ գրեթէ նուազած:

Բրէվալի մարմինն բռուած էր մարդագետնին վրայ, և երեք լայն ու խորունկ վերքերէ սրիւնն կ'հոսէր տակաւին առատօրէն:

Տէգրիվի արձակած բարձրաձայն աղաղակին պատասխանեցին հրացանի երկու պայթիւններ:

Այս յանկարծական և կրկնալի պայթման վրայ քաղաքապահ զինուորներն քանի մը ոստիկաններ օդնական առած՝ վազեցին ամեն կողմ:

Նոյն պահուն իրենցմէ քանի մը քայլ հեռու պռալու ձայն մը լսեցին, յառաջացան և ծառերու մէջն տեսան մարդկային ձևեր որ արագ արագ կը շարժէին:

Ուրսո ու Արիլեօն էին սոքա որ բռնածէին Տէգրիվն՝ գունաթափ և խելայեղ: Սա կ'ջանար ազատել զինք ու ժգնապէս կաշկանդող ձեռքերէն:

— Ի՞նչ անցաւ ուրեմն հոս, հարցուց զինուորներէն մին մօտենալով երկու ծպտեալ շարագործներուն:

Ուրսո պատասխանեց ցած ձայնով և զլուխն հակելով որպէսզի չ'ձանչցուի:

— Սպանութիւն մը գործուեցաւ և մենք բռնեցինք ոճրագործն:

Եւ մատով ցոյց կ'տար զՏէգրիվ՝ մեռելի պէս գունատ, և աւելի հեռուն՝ Բրէվալի դիակն:

Իտես սոյն արիւնթաթախ և անկենդան մարմնոյն, ոստիկանք սոսկմամբ յետս ընկրկեցան:

Նոյն պահուն կառք մը՝ որ սրարչաւ կ'գար, կանգ առաւ ոճիրն գործուած վայրէն քանի մը քայլ հեռու:

Ուրսո և Արիլեօն նշմարեցին որ սոյն կառքէն վար կ'իջնէին ոստիկանութեան տեսուչ մը, երկու քաղաքապահ զինուորներ և երիտասարդ մ'որ անծանօթ էր իրենց:

— Բարեկամ, ըսաւ Արիլեօն Ուրսօի ականջն ի վար,

ժամանակն է կծիկը դնելու, եթէ ոչ հիմակ օծիքնիս ձեռք պիտի տանք:

— Կծիկը դնելու ժամանակն անցած է այլ ևս, պատասխանեց նմա Ուրսօ, լաւագոյն է հոս մնալ:

Կրիլեօն, ոչ առանց դժկամակութեան, հնազանդեցաւ:

Ոստիկանութեան տեսուչն, գունատ ճակտով և խոժոռ դէմքով, արհամարհոտ ակնարկ մը նետեց տարաբաղէ Տէգրիվի վրայ զոր տակաւին բռնած էին երկու սպասաւորներն, և որ կ'իթուէր թէ ոչինչ տեղեկութիւն ունի իր չորս կողմն անցածներէն, և զիսակին մօտենալով.

— Ի՞նչ խօսքով իւրեք, գոչեց խորապէս յուզուած:

Բայց անմիջապէս զսպելով իր կարեկցական զբաղումն որ այս վայրկենին անհաշտելի էր իր պաշտօնական հանգամանքին, հրամայեց անմիջապէս ձերբակալել յանցաւորն:

— Ի՞նչպէս, բացագանչեց Տէգրիվ շուարեալ և ինքնիրմէ դուրս ելած, ձերբակալել, զիս, և ի՞նչ պատճառաւ, ի՞նչ ըրի:

— Պարոն, պատասխանեց ոստիկանութեան տեսուչն, ինձ չվերաբերիր պատասխանել ձեզ: Սպաննութիւն մը գործուած է: Կասկածներ, մինչև իսկ հաւաստի վիայութիւններ կան որ դուք էք այս սպաննութեան հեղինակն: Յարգեցէք իշխանութիւնն և անձնատուր եղիք: Դատարանին առջև կրնաք արդարացնել զձեզ:

Տէգրիվ, մեռելատիպ, աչերն դաժան, կուրծքն շնչասպառ, մարմինն զսղլոզուած, իր չորս կողմն

կ'դիտէր այնպիսի նայուածքով մ'ուր կ'կարդացուէր ամենախորին յուսահատութիւն:

— Ես անմեղ եմ, գոչեց նա: Ես սպաննեմ Բրէվան, ևս, իր մտերիմ բարեկամն . . . ընդ հակառակն, ես էի որ ուզեցի ազատել զինք: Իր սպաննիչն է . . .

Բայց ժամանակ չունեցաւ շարունակելու:

Շամէլ վար իջած էր իր կառքէն և կ'մօտենար տեսչին:

Տէգրիվ, այն ինչ տեսաւ զՇամէլ, խռպոտ աղաղակ մ'արձակեց, աչերն ահագին կերպով բացաւ, բայց չկրցաւ բառ մ'իսկ արտասանել: Լեզուն, այսպէս ըսենք, կապուեցաւ բերնին մէջ:

— Պարոն տեսուչ, ըսաւ Շամէլ՝ բարեկելով, յուզեալ և կեղծաւոր դէմքով մը, այս մարդ — և մասով ցոյց կ'տար զՏէգրիվ — կ'ուրանայ յանցանքն որով կ'ամբաստանեն զինք: Կ'փափաքէի որ այդպէս լինէր, որովհետև կ'ցաւիմ իր վրայ, բայց ի՞նչ կարելի է ընել ակներև իրողութեան դէմ: Կառավարս և սպասաւորս կ'ըսեն թէ անսածեն անոր յարձակիչն իր զոհին վրայ: Ես չեմ կրնար ստուգապէս վկայել առ այդ, վասն զի կառքիս վարադուրներն դոց էին: Այսու հանդերձ, կրնաք սպասաւորներս ալ հարցաքննել:

Խուլ հռնդիւն մ'ելաւ Տէգրիվի կոկորդէն, իր ձեռներն զալարեցան, աչերն բոցեր արձակեցին և քայլ մը յառաջանալով դէպի Շամէլ.

— Վատ, մարդասպան, հաղիւ կրցաւ ըսել, ապա նուաղեալ ընկաւ ոստիկանաց թևերուն մէջ:

Այն ատեն տեսուչն դառնալով Ուրսօի, ըսաւ նմա.

— Խղճիւ կերդնո՞ւս խոստովանիլ զուտ ճշմարտութիւնն :

— Կ'երդնում, պատասխանեց Ուրսօ, հէք Տէգրիվի շափ դունանտ :

— Լաւ ուրեմն, յանուն օրինաց և առաջի Աստուծոյ որ զլեզ կ'ղիտէ, ո՞վ է յանձին Բրէվալի գործուած սպաննութեան հեղինակն :

— Նոյն ինքն է, ըսաւ Ուրսօ, մատովն ցոյց տալով զՏէգրիվ, միշտ նուազեալ: Ես և ընկերս տեսանք անոր այս խեղճ մարդուն վրայ յարձակիլն: Ի Նանթէս կ'տանէինք մեր տէրն որ ահաւասփկ: Զոհին արձակած աղիողորմ աղաղակներն լսելով կեցուցինք մեր ձիերն, և թողլով կառքն՝ շուտաքայլ դիմեցինք այն տեղն ուր այս արիւննայի տուամն տեղի կուեննար: Շատ ուշ էր. զոհն արդէն կ'գալարէր մահուան ջրաձգութեանց մէջ: Յասուլ զրթած, բայց նաև առանց շուարելու, ընկերս և ես ինկանք մարդասպանին ետևէն որ խոյս կ'տար մեր առջև էն: Յաջողեցանք բռնել զանի և երկու առորձանակ պարպեցինք օդին մէջ:

— Լաւ, ըսաւ ոստիկանութեան տեսուչն, բոլոր փաստերն ամբաստանելոյն դէմ են: Հիմակ, սլարոն Շամէլ, ներեցէք որ փոքր ինչ դեռ ևս սպասեցնենք զձեզ, բայց յընթացս ժողովին տեղեկագիր մը պիտի խմբագրենք որու մէջ պիտի ըսուի թէ մեհք, բոլոր հոս գտնուողներս, կ'ճանաչենք զսլարոն Էմիլ Տէգրիվ իբր միակ յանցաւոր տարաբաղդ Բրէվալի սպաննութեան գործին մէջ:

Եւ զրպանէն հանելով թղթապանակ մը, մատիտով զրեց հետևեալն:

« Մենք ստորագրեալքս, մի կողմէն՝ Բօլ Տիւքօ, տեսուչ ոստիկանութեան վեցերորդ շրջանակին, և միւս կողմէն՝ Ժիւլ Շամէլ և Թէօֆիլ Ռշնէ, մէկէ աւելի սպացոյցներով և ականատես վիաներու առջև կ'ճանաչենք Էմիլ Տէգրիվ իբր սպաննիչ Լուի տը Բրէվալի, երբեմն հեծելազօր սպայ, այժմ՝ վաճառական և դրամատէր: Եւ ըստ 302րդ յօդուածի պատժական օրինաց որ կ'տրամադրէ թէ, Ժորժապետնոթեան յանցանքով բռնուած ո՛ր է անհար մահուամբ կ'պարտուի: Յիշեալ Էմիլ Տէգրիվն կ'յանձնենք Արդարութեան բարձրագոյն Ատենին, որ սլիտի տայ իր վճիռն ըստ տեսակի յանցանաց:»

Եւ տեսուչն ստորագրեց տեղեկագիրն, ապա ներկայացուց զայն Շամէլի, որ առանց վարանման, և առանց այլադուներու նոյնպէս դրաւ ստորագրութիւնն:


Նոյն տեղեկագիրն ներկայացուեցաւ նաև Թէօֆիլի:

Սա ծառի մը կռթնած, և բոլորովին խոհուն, անտարբեր կ'թուէր իր շուրջն անցած բաներուն: Եւ սակայն տեսչին ձեռքէն առաւ տեղեկագիրն, և առանց զայն կարդալու և առանց ինչ ըրածն դիտնալու, զողոճուն ձեռքով նշանակեց անդ իր անունն, և խոյս տուաւ յուզեալ և արտասուելոց զէմքով:

Երբ ամեն ինչ լմնացաւ, ոստիկաններն կառքին մէջ դրին զՏէգրիվ, միշտ նուազեալ:

Նոյն կառքին մէջ նստեցան տեսուչն և ոստիկան մը: Ուրիշ կառքի մը մէջ, որ յատկապէս այս գործին համար բերուած էր, դրուեցաւ Բրէվալի դիակն:

Երկու կառքերն Բար/զի ճամբան բռնեցին : Շա-
մէի կառքն դէպի Նանթէո զարնել ձևացուց , բայց
ապս երկայն շրջան մ'ընելով՝ տասն վայրկենէն յե-
տոյ սրարչաւ ուղղուեցաւ դէպի Շան-զէիղէ :



ՓԼՈՒԽ Ե.

ՏՈՒՄԻՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐՆ

Հիմակ յետադարձ ակնարկ մը նետենք և փոխա-
դրուինք Լուի տը Բրէվալի տան մէջ :

Երբ սա ժամը վեց ու կէսին մօտ տունէն դուրս
ելաւ ի Ռիւէյլ իր քրօջ երթալու համար , տիկին
Քրէվալ , դեռատի կին մ'անուշ և համաիրելի գե-
ղեցկութեամբ , դեռ պատուհանին առջև նստած էր ,
աչերն յառած իր տան դուրսին վրայ ուսկից պահ
մ'առաջ իր ամուսինն աներևոյթ եղած էր իր տես-
ութենէն : Հազար ու մէկ նախազգացումներ կ'պա-
շարէին իր միտքն , և առանց կարենալ մեկնելու ,
կ'զգար որ անակնկալ դժբաղդութիւն մը կ'սաւառ-
նէր իր ամուսնոյն գլխոյն վերև : Բոլոր անդամներն
կ'սարսուային : Այս վիճակին մէջ մնաց բաւական ժա-
մանակ , խոհուն և մտատանջ , ապա խորունկ հառա-
չունք մը հանելով՝ ներս մտաւ , և , տխուր ու երա-
զուն , գնաց թիկնաթոռի մը վրայ նստաւ :

Առաջին անգամ իր աչաց հանդիպող առարկան
եղաւ Օկիւսդէն , որ , իրեն չափ տխուր , մտենալով
իրեն՝ ըսաւ .

— Այդքան մի տխրիր , մայրիկ , քաջութիւն , հայ-
րիկն շուտով պիտի վերադառնայ :

— Աստուած լսէ քեզ , աղան , ըսաւ նէ , դէպի Ի-
րեն քաշելով զանի և իր բազկաց մէջ սեղմելով :
Մինչև ի Ռիւէյլ կարճ ուղևորութիւնն չէ որ հոգ կը
պատճառէ ինձ , այլ միւսն :

— Պէտք է միշտ յուսալ , մայրիկ , որ ս և է ճախոր-
դութիւն չպիտի պատահի հայրիկին :

— Այո՛ , այո՛ , կ'յուսամ , ըսաւ տիկին Բրէվալ ոտք
երնելով և դողցես ականաց մտենալով պատուհա-
նին :

Այս միջոցին ժամը ութն կ'դարնէր :

Բակէն եկող խառնաշփոթ ձայներ տիկին Բրէվալի
ուշադրութիւնն գրաւեցին : Զգաց որ սիրտն կ'բա-
բախէր իր կուրծքին տակ և՛ առանց պատճառն
գիտնալու՝ ականջ դրաւ :

— Եւ , կ'ըսէր տան դռնապանուհին դրայուհւոյ
մը , կ'ըսեն թէ . . . :

— Կ'ըսեն թէ մարդաստղանութիւն մը դործուած է :

— Մարդաստղանութիւն մը . Սուրբ Կոյս , մար-
դաստղանն բռնեցին :

— Այո՛ :

— Աւազակը . . . :

— Աւազակ մը չէ : Ենորձքով հաղուած պարոն
մ'է որ սպաննած է ուրիշ պարոն մը :

— Աստուած իմ , իրան է որդեօք այս սակերը :

— Կարծեմ թէ այո՛ :

Տիկին Բրէվալ չ'ըրցաւ աւելի լսել: Դողդոջուն և բողբոջին յուզեալ, իր սենեակն մտաւ և դռնդակն հնչեցնելով կանչեց իր սենեկապանունին:

Փոքր սրահին դուռն՝ ուր նէ կ'դանուէր այս միջոցին, բացուեցաւ, և Շամէլ, գուռատ և ահարեկ դէմքով, երեցաւ սեմին վրայ:

— Տիկին, ըսաւ նա դէպի անոր յառաջանալով, քաջութիւն . . . : Բայց ժամանակ չունեցաւ լինցնելու: Տիկին Բրէվալ կապարի գոյն առաւ, չրթներն կապուտցան, և ջղաձգական սարսուռ մը շրջան ըրաւ իր բոլոր մարմնոյն մէջ: Մի քանի վայրիեան անշարժ մնաց այս վիճակին մէջ, ապա ինքնիր վրայ ճիգ մ'ընելով քանի մը քայլ յառաջացաւ դէպի Շամէլ և խեղդի աչքերով անոր երեսն նայելով՝ ըսաւ նմա.

— Պարոն Ժիւլ, յանուն Աստուծոյ, ինչ պատահեցաւ ամուսնոյս . . . :

Շամէլ, այս հարցական ականարկէն դուռնաթափ եղած, աչերն խոնհարեցուց և լուռ կեցաւ:

— Խօսեցէք, պարոն, ըսաւ հէք կիներն ուժգին սեղմելով նորա բազուկն: Անձկութիւնն աւելի անգութ է քան իրականութիւնն: Խօսեցէք, կուղեմ ամեն բան իմանալ: Ահ, նախազդացումներս, նախազգացումներս, գոչեց նէ յարտասուս բղձկեղով:

— Հանդարտեցէք, տիկին, ըսաւ Շամէլ, ջանալով թէ և ի վուր՝ յուզեալ երևիլ: Ձեր ամուսինն, այս առաւօտ, քիչ մնաց որ դաւաճանութեան մը զոհ լինէր: Հրէջ մը, չղիտցուիր ինչ պատճառաւ, անոր վրայ յարձակած է՝ զաչոյն ի ձեռին: Բարեբաղդաբար, նոյն ժամուն, Պալտինի անտառին մէջ . . . :

— Մի լինցնէք, պարոն, ընդմիջեց տիկին Բրէվալ, յանկարծ սաստիկ առեւութիւն մ'զգալով դէպի այդ մարդն որ իր ամուսնոյն բարեկամն կ'կոչէր զինք: Մի լինցնէք, պարոն, մնացածն զիտեմ . . . : Անօգուտ է ճշմարտութիւնն պահել ինձմէ . . . խեղճ Լուիս մեռած, վատարար սպաննուած է:

Եւ թշուառ կիներն, բողբոջին դողդոջուն, խելացնոր, աչերն մուգիւն, հեռացաւ Շամէլէն, և դնաց, հողոյն մէջ կրելով յուսահատութիւնն, թիկնաթոռի մը վրայ ընկաւ:

Նոյն պահուն սրահին դուռը բացուեցաւ, և փոքրիկ Օլիւսդէն, աչերն արցունքէն ուռած, սեմին վրայ երեցաւ:

Շամէլն տեսնելուն պէս՝ սարսուտաց: Նորա առջևէն անցաւ առանց բան մ'ըսելու, և դնաց մօրը բաղիւսց մէջ նետուեցաւ գոչելով հեծկլտանքէն հեղձամղձուկ.

— Ահ, մայրիկ . . . մայրիկ . . . իմ խեղճ հայրս զարկած, սպաննած են . . . ոչ ևս պիտի տեսնենք զինքն . . . :

Այս բառերն իւրեւ զերեզմանական արձագանք հնչեցին արտասուալի կնոջ ականջին:

Ուղղորդ վեր կանգնեցաւ նէ, որպէս թէ անտեսանելի զսպանակէ մը շարժուած լինէր: Իր գուռատ դէքն յանկարծ կարմրեցաւ, իր քունքերուն շնչբակներն ուժգին կ'բարբախէին:

Իր աչերն անթարթ էին, գրեթէ առանց ականարկի: Օլիւսդէն կ'արտասուէր, Շամէլ կ'վախնար:

Տիկին Բրէվալ այսպէս քանի մը քայլ յառաջացաւ, և Շամէլի առջև կանգ առաւ բողբոջին խոռվայոյզ:

— Պարոն, ըսաւ նէ, կ'տեսնէք որ ամեն ինչ գիտեմ, բայց բան մը կայ որ անծանօթ կ'մնայ ինձ . . . այն է մարդասպանն :

Շամէլ ակամայ քայլ մը յետս նահանջեց : Ա՛զգար որ այս յիմարական նայուածքն սիտի գուշակէր զայն :

— Ա՛հ, կ'հեռանաք, ա՛հ, կ'վախնա՛ք . . . լաւ ուրեմն, գտայ մարդասպանն . . . նա ահաւասիկ . . . հոս է նա, իմ առջևս, և հիմակ սիտի մեռնի :

Եւ տիկին Բրէվալ, ձեռներն դալարուն, դէմքն արիւննաուռչտ, նետուեցաւ Շամէլի վրայ և ուժգին բռնեց անոր կոկորդէն :

Շամէլ, այս յիմարական յարձակումէն յանկարծակի եկած, և զգալով իր կոկորդին սեղմուիչն մանկամարդ կնոջ փափուկ ձեռներէն այնպիսի ուժով մը որ յուսահատութենէ քառապատկուած էր, գերագոյն ճիգ մ'ըբաւ ճողորրելու համար այս սեղմումէն : Պրկեց իր անդամներն և անվրէպ հէք կնոջ բազուկներն սիտի փշրէր, երբ տեսաւ որ նէ տակաւ կ'կէքէր ինքն իր վրայ, մատերն թուլցան, արեան հեղեղ մ'ողողեց իր դէմքն, և անշարժ ու անկենդան ընկաւ տախտակամածին վրայ :

Տիկին Բրէվալ շանթահարիչ կաթուածէ մը զարնուած էր :

Փորրիկ Օկիւսդէն աղեկիղիկ ճիչ մ'արձակեց, և վազեց դէպի դուռն :

Շամէլ, տակաւին սաստկապէս յուզեալ, նոյնն ըրաւ և Թէօֆիլի դէմ առ դէմ դանուեցաւ :

— Ի՞նչ կայ, Աստուած իմ, գոչեց սա տեսնելով տիկին Բրէվալն անշարժ տարածուած տխտակամածին վրայ :

— Սա կայ որ, պատասխանեց Շամէլ իր բոլոր պաղարիւնութիւնն վերստանալով, իր ամուսնոյն մահուան լուրն աղիտաբեր եղաւ այս տարաբաղդ կնոջ : Զանացի, որչափ հնար էր, զգուշութեամբ վարուիլ, բայց չկրցայ իր որդւոյն՝ Օկիւսդէնի՝ բերանը գոցել : Նա էր որ լալով եկաւ իր մօր պատմեց տխուր ճամարտութիւնն : Աճապարենք սակայն . . . գոցէ դեռ ժամանակ կայ ազատելու զտիկին Բրէվալ : Զարկէք զանդակն, և իր սենեակին փոխադրել տուէք այս տիկինն . . . իսկ ես վազեմ բժիշկն կանչելու :

Եւ Շամէլ առաւ զլսարկն և դուրս ելաւ :

Քառորդէ մը յետոյ վերադարձաւ նա բժիշկին հետ :

Սա մտեցաւ տիկին Բրէվալի որ անշարժ տարածուած էր իր անկողնոյն վրայ, բռնեց նորա ձեռքն, մի քանի վարկեան դիտեց զայն բոլորովին մտախոհ, ապա դառնալով Թէօֆիլի և Շամէլի, որ անձկանօք կ'սպասէին, ըսաւ անոնց :

— Պարոնայք, ամեն օգնութիւն անօգուտ է :

— Լմեցուցէք, գոչեց Թէօֆիլ, սոսկումէն մոխիր կտրած :

— Տիկին Բրէվալ մեռած է. չնչերակի մը պայթում տեղի ունեցած է, յարեց բժիշկն :

— Ի՞նչ սոսկալի դժբաղդութիւն կ'գայ ուրեմն հարուածել այս ընտանիքը, գոչեց Թէօֆիլ : Ո՛հ, ճիւճալը, բայց շատ սուղ սիտի տուժէ նա այս վատութեան գործն :

— Այո՛, ըսաւ բժիշկն, բոլոր Բարիդ իմացաւ արդէն Բրէվալի դժբաղդութիւնն, և սակայն Աստուած միայն գիտէ յանցաւորն :

Բժիշկն անշուշտ չէր գիտէր Տէգրիվի բռնուիչ :

— Ի՞նչ կ'ըսէք, գոչեց Շամէլ, որ սարսուտիէն մազերուն քստմնիւն զգաց իր գլխուն վրայ :

— Կ'ըսեմ թէ Աստուած միայն կ'ճանաչէ յանցաւորն և հեղինակն սոյն կրկին սպանութեանց :

Շամէլ սարսուաց :

— Կ'կասկածի իմ վրայ, մտածեց նա :

Ապա ակամայ իր նայուածքն տարաբաղդ մեռելոյն վրայ նետելով, խղճի խայթի նման բան մ'զգաց :

— Այո՛, խորհեցաւ նա, ես եմ պատճառ այս կրկնակի դժբաղդութեան, և այսպէս կ'կործանեմ ամբողջ ընտանիք մը :

Օկիւսդէն, հուսկ ուրեմն խոնջ աղօթելէ և հեծկլտալէ, ոտք ելաւ, և ուզզակի դէպի բժիշկն յառաջանալով :

— Պարոն, ըսաւ նմա, մայրիկն չարթննար այլ ևս :

— Համբերութիւն, տղաս, համբերութիւն, մրմնջեց բժիշկն յարտասուս շարժելով, հարուածն զօրաւոր է, սակայն պիտի անցնի և մայրիկն քեզ պիտի յանձնուի :

— Կ'խարէք զիս, պարոն, ինչպէս խարեց այս մարդն, պատասխանեց տղան՝ Շամէլն ցոյց տալով :

Շամէլ սարսուաց : — Ո՛հ, այս տղան փորձանք մը պիտի բերէ գլխուս, ըսաւ նա իւրովի :

— Եւ ինչպէս խարեց զքեզ, հարցուց բժիշկն :

— Բսելով մեզ թէ հայրիկն վիրաւորուած էր միայն, և սակայն ինք քաջ գիտէր թէ մեռած էր նա :

— Ո՛հ, քրթմնջեց Շամէլ, այս տղան պատճառ պիտի լինի իմ կորստեանս :

Բայց և այնպէս ամուր բռնեց ինքզինքն, և մօտենալով բժիշկին և Թէօֆիլի, ըսաւ անոնց տխուր գիւտք :

— Պարոնայք, թող տուէք ինձ քաջու իւր, այս տեսարան չսխաղանց կ'յուզէ սիրան :

Այս յանկարծական մեկնումն զարմացուց թէօֆիլ : ձեռքն աչքերուն տարաւ որպէս թէ վանելու համար կասկած մը որ նոյն վայրկենին անցաւ իր մտքէն :

— Չեմ գիտեր թէ ինչո՞ւ համար այս մարդուն ներկայութիւնն անհանդիստ կ'ընէ զիս, ըսաւ Օկիւսդէն երբ տեսաւ Շամէլի հեռանալն, չղիաւմ, բայց կարծեմ թէ ամեն բանի կարող անձ մ'է, մինչև իսկ խնդճ հայրս սպանողն ալ ինքն է :

— Ո՛չ, զաւակս, ո՛չ, վանէ մտքէդ այդ սխալ կարծիքն, պատասխանեց Թէօֆիլ, ընդհակառակն նա էր որ հօրդ սպանիչն բռնեց : Առանց անոր անծանօթ պիտի ճար նա մեզ, զաւակս :

Նոյն պահուն սենեկին դուռն շառաջմամբ բացուեցաւ, և Բրէվաի քոյրն երեցաւ, դուռնատ և խառն ի խուռն հագուստներով :

— Ո՛ւր դրին զանի, գոչեց նէ, ո՛ւր է նա, կուզեմ տեսնել :

— Չո՞վ, տիկին, զո՞վ, պատասխանեց Թէօֆիլ դէպի անոր յառաջանալով :

— Ո՛հ, եղբայր իմ, շարունակեց Հանրիէթ, ես եղայ պատճառ քու մահուանդ, ո՛հ, գոնէ անգամ մը տեսնեմ զքեզ :

Եւ վազեց դէպի անկողինն : Բայց այն ինչ տեսաւ իր նուրիս անշարժ մարմինն, ահագին ճիչ մ'արձակեց և նուաղեցաւ :

— Տօքթէօր, օգնութիւն, հիմակ պիտի մեռնի, գոչեց Թէօֆիլ վեր վերցնելով և բազկաթոռի մը վրայ դնելով զնէ :

Թժիշկին մօտեցաւ նէրա և , վայրկեան մը նկատե-
լով զնէ՝ գլուխն թոթուեց լուսթեամբ :

— Ի՛նչ, տօքթէ՛օր, գօչեց Թէօֆիլ որ կ'դիտէր նու-
րա բոլոր շարժումներն, դարձեալ . . . :

— Ո՛չ, ո՛չ, անհոգ եղիք, պատասխանեց նա, ին-
աղում մ'է միայն :

Յետոյ գրպանէն փոքրիկ սրուակ մը հանելով մօ-
տեցուց Բրէվալի քրօջ ունեցերուն :

Նէ շարժում մ'ըրաւ , յետոյ ձեռքերն ձգտելով՝
վեր վերցուց գլուխն :

— Ի՛ր եմ, մըմնջեց նէ , եղբայր իմ . . . քոյր իմ
. . . սիրելիդ իմ Անժեկինա , ո՛չ ևս պիտի տեսնեմ
դքեզ . . . :

Եւ վերստին ինքն իր վրայ եքեցաւ , ապա գլուխը
վերցնելով և իր տեղէն վեր ցատկելով, վազեց դէպ
արկողինն, և , բազկացը մէջ առնելով հանգուցելոյն
անշարժ մարկինն .

— Ո՛հ, իմա Անժեկին , քոյր իմ, բարեկամահիգ
իմ, ո՛ւր ևս, գօչեց նէ , առ յաւէտ թողուցի՛ր զիս
. . . ո՛չ որ ունիմ այլ ևս այս աշխարհի վրայ, միայ-
նակ եմ, միայնակ . . . :

Թէօֆիլ զողողալով մօտեցաւ նմա :

— Տիկին , քաջութիւն , ըսաւ նա , անտարակոյս
մեծ է գժբաղղութիւնն , բայց սէտք է հանդուր-
ժել, ոչինչ դարման կայ այլ ևս :

— Ո՛հ, երկուքն ալ մեռան , գօչեց հէք կիսն վե-
տին սաստիութենէն , երկուքն ալ . . . :

Եւ սխառ հեծեծանօք արտասուել :

— Հիմակ , ըսաւ Թէօֆիլ բժիշկին գտնալով,
պէտք է մեր նուիրական պաշտօնն ի գլուխ հանելք :


Ծանօթք և ազդականք ընդ հուպ պիտի դան , շատ
մարդու ծանուցի գոյժն : Դու, Ժանէթ, ըսաւ սպա-
սուհւոյն որ անկիւն մը քաջուած կ'հեծկտար , սրբէ՛
արցունքներդ և գնա՛ ըսէ քրօջս որ անսխալէս հոս
գայ առանց վայրկեան մ'իսկ կորուսելու :

Ժանէթ դուրս ելաւ :

.

Մեր նկարագրած տեսարաններէն ի վեր վեց ժա-
մեր սահեր էին և տարաբաղդ Բրէվալի տունն լցու-
ած էր խուռն բազկութեամբ : Հանգուցելոյն (Բրէ-
վալի) մարմինն իր տունն փոխադրած էին այն ան-
դէն ուր գրուած էր , և կէս ժամ ետք , յուզարկա-
ւորաց չքեղթափոր մը կ'ուղղուէր դէպ յեկեղեցի ,
և անտի , Մոնմարգրի գերեզմանատունն : Բայց ինչ
որ ամենէն աւելի սրտածմիկ էր , և որ ամենուն ու-
շաղրութիւնն կ'գրաւէր , երկու դադաղներն էին
զոր կ'տանէին միևնոյն ժամանակ :

Խեղճ Հանրիէթ , երբ ինքզինք իսպառ բաժնուած
անսաւ իրեն համար ամենէն աւելի սիրելի երկու է-
ակներէն , սրբեց իւր արցունքներն, Աստուծոյ յան-
ձնեց ինքզինքն, որովհետև երկու որբեր ունէր միա-
թարելու : Տխուր , վհատ , սրտաբեկ մեկնեցաւ ա-
նոնց հետ : Արիւնջը տարաւ դանոնք , և յանձնեց ի-
րենց լանամակալուհւոյն հսկողութեան :



ՓՆՈՒԽ Զ.

ԲԱՆՏԸ

Մակայն Տէգրիվ փոխադրուած էր Ղատարանի բանտն, ուր կ'սպասէր երկրորդ դատաստանի մը, թէև առաջնոյն դէմ ոչ ոք բողոքած էր, և թէև քաջ գիտէր այն պատիժն որ պիտի սահմանուէր իրեն: Բայց որովհետև դատարանն նոյն օր ուրիշ կասրեորագոյն դատով մը պիտի դատէր, Տէգրիվի դասն հետևեալ աւուր ձգուեցաւ:

Յորմէ հետէ անդ հասած էր Տէգրիվ, գինք փակած էին փոքր և վատառողջ սենեկի մը մէջ, որու միակ կարասիքն էին անկողին մը և հասարակ փայտէ սեղան մը: Այս սենեկին երկու պատուհաններն կ'նայէին պարտէզի մը վրայ, բայց երկաթեայ յնպիսի հաստ ձողեր կ'կրէին զորս ամենէ ճարպիկ դատապարտեալն անգամ դժուարաւ պիտի կրնար սըղոցել քանի մ'օրուան մէջ: Բանտապահն որ այս խաւարչտին բանտին մէջ դրած էր զանի, կրկին բանայիով գոցած էր դուռն, և տարաբաղդ Տէգրիվ լսեց թանձր փականքին ճոնչելն ահագին բանալիին ճնշման ներքև:

Այս սենեկին մէջ էր որ նա սպասեց մինչև երևկոյեան ժամը չորսն:

Ժամը ճիշդ չորսին, քայլերու աղմուկներ՝ որ կը թուէին մտակեալ իր բանտին, հնչեցին բակին

մէջ: Անմիջապէս փականքն վերստին ճոնչեց, և դուռը բացուեցաւ: Բանտապահ մը, ահագին բանալիներու տրցակ մ'ի ձեռին, երևցաւ, հետն ունենալով երկու ստիկաններ:

— Կ'խնդրուի պարոնէն ինձ հետևիլ, ըսաւ նա Տէգրիվի որ ընկղմած էր մտածմանց մէջ:

Բանտապահին ձայնն լսելով՝ իրք ի քնոյ ընդոստ արթնցաւ:

— Ո՛ւր կ'տանին գիս, հարցուց նա:

— Հիմայ կ'տեսնէք, պատասխանեց բանտապահն ցրտութեամբ:

Կալանաւորն դուրս հանուեցաւ այս սենեկէն:

Նախ ընդարձակ դաւթէ մ'անցան, ապա տանս ստիճաններ է բաղկացեալ սանդուխէ մը վար իջնալով նեղ ու մութ բակի մը մէջ տեղն հասան:

Տէգրիվ սոսկաց, երբ իր առջև նետելով կանարկներն, տեսաւ բակին ամբողջ երկայնքն նեղ դուռներ, և, հակառակ մթութեան, կրցաւ կարդալ սևաներկ թուանշաններ զնդաններու սևաթոյր քարերուն վրայ:

Իր սիրտն ճմլեցաւ, արիւնն սառեցաւ իր երակաց մէջ, մազերն քաւնեցան գլխուն վրայ, և, իրք ջըղային բուռն ճգնաժամէ մը բռնուած, կանկ առաւ:

— Ո՛ւր պիտի տանիք զիս, դուչեց վերստին, ևս անմեղ եմ:

— Յառա՛ջ, ըսաւ ոտիկանաց մին, պիտի տեսնես:

Կալանաւորին դուրսն կքեցաւ իր կուրծքին վրայ, և ինք ընկաւ իր բանտապահաց բազուկներուն մէջ որ կ'տանէին գինք ընդ քարչ:

Մի քանի վայրկեան քալելէ յետոյ կանկ առին : Բակին ծայրն հասած և թիւ 32 դրան առջև կանգ առած էին :

Բանտապահն բանալին դրաւ բախանքին մէջ որ ճանչեց երկաթի ճնշման ներքև, դուռը բացուեցաւ :

Անցիր, ըսաւ զինուորներէն մին, և կոշտութեամբ հրեց զՏէգրիզ աւելի փոքր և աւելի մութ զնդանի մը մէջ :

Այս զնդանի մահ գատապարտուած մարգասպաններու յատկացեալ խղիկ մ'էր,

Տէգրիվ, դողդոջուն և հազիւ ոտքի վրայ կենալու կարող, քանի մը քայլ յառաջացաւ առ խարխաբ և հանդիպեցաւ խշտեակի մ'որ իրեն համար սահմանուած էր, և որու վրայ ընկաւ, խխուր և յուսահատուի շուրջ տեսաւ մի միայն թանձր խաւար մը, և ոչ այլ ինչ զգաց բայց միայն ստորեկրեայ զնդանին խոնաւութիւնն : Սոսկմամբ յետս ընկրկեցաւ, ուղեց փախչիլ, բայց դուռն գոցուած էր, և ինքն կ'գտնուէր միայնակ, աշխարհէն մեկուտի, ամենախորին լուրթեան մէջ : Յայնժամ իբր տեսակ մը զուռանցանքէ բռնուած, յարձակեցաւ հաստաբետտ դրան վրայ զոր ձեռքերով ու ոտներով կ'զարնէր :

— Ապիրտոններ, վատեր, գոչեց նա, ո՛ւր բերիք զիս . . . ո՛ւր ձգեցիք զիս . . . ո՛ւր ամուսինդ իմ . . . ո՛րդեակ իմ, ո՛չ ևս պիտի տեսնեմ զ՛նեզ, դատաւարտուած եմ մեռնելու . . . վատեր . . . և ես անմեղ եմ . . . ո՛չ ոչ . . . ես չէի զանի սպանողն . . . ո՛հ, վագրեր, ո՛ւր էք դուք . . . :

Այ մի արձագանք չսխառտախանց իր վտին, բայց միայն իր շուրջ տիրող արամազին լուրթիւնն :

Յայնժամ, մռնչելով, նման այն սուիւծներուն զոր կ'զրկեն իրենց ազատութենէն՝ երկաթեայ գառագիղի մը մէջ փակելու համար, կ'ջանայ խել գուռն իր ծխնիներէն, այլ ի զուր կ'ձմլուին, կ'խորտակուին իր մատներն, դուռն անդէն իսկ չչարժիր :

Վայրկեան մը լուռ կ'մնայ, աչերն դաժան, կուրծքն շնչասպառ . չէ կարող կանգուն կենալ իր դողդոջուն ոտից վրայ . վար կ'ընկնի և գլուխն ուժգրնապէս կ'ընդ հարի խոնաւ պատին :

Քառորդէ մ'աւելի մնաց նա այս վիճակին մէջ գրեթէ անզգայ . ապա կրկին վեր ցաթկելով .

— Ա՛հ, ճիւղ, դ՛ու հասուցիր զիս այս վիճակին, դ՛ու նետեցիր զիս այս զնդանին մէջ, ամենուն արհամարանաց և դատապարտութեան ենթակայ . . . և սա՛յայն ես անմեղ եմ, և դու ես յանցաւորն :

Հակազդեցութիւնն դրաւեց սակայն իր մարմինն, ծայրայեղ տկարութիւն մ'զգաց իր անդամոց վրայ, և, ոչ ևս կարենալով կանգուն կենալ, գետին ընկաւ և իր խղիկին մէկ անկիւնն կծկեցաւ : Վայրկեան մը վեր առաւ իր արտասուածութուրմ գլուխն, և իր ակնարկներն յածեց իր բոլորտիքն : Հակառակ մթութեան կարող եղաւ տեսնել սևաթոյր և խոնաւ որմերն ա՛հաւոր զնդանին ուր կ'գտնուէր : Չգաց որ կ'սարսաւար, և իր ակնաներն կրճտեցին եբբ իր մտտեսաւ ողորմելի խտեակն որու վրայ նստած էր պահ մ'առաջ :

Յայնժամ հազարումէկ խառնաչիտթ և գժնդակ գաղափարներ պաշարեցին իր միտքն : Առաջին անդամ իր՞մտաց առջև եկան այն սիրեցեալ էակներն որ իր դատապարտութեամբ սի:տի ընկղմէին թշուա-

առթեան և յուսահատութեան մէջ: Մտածեց իր
տմուսնոյն վրայ, իր դաւկին վրայ որ այնքան դե-
ռահաս էր տակաւին:

— Ո՛վ պիտի օղնէ այս հէք թշուառներուն, մըր-
մնջեց նա: Աւանդ, ինչ պիտի լինին նոքա . . . ո՛ սի-
րեցեալ ամուսինս, կրկին պիտի տեսնեմ դքեզ ար-
դեօք . . . ո՛վ որդեակ իմ, պիտի կարենամ համ-
բուրել դքեզ և անգամ մ'ևս սեղմել բազկացս
մէջ . . . : Առ ի՞նչ այս անիրաւութիւն, և ի՞նչ բրի-
քեզ, Աստուած իմ, որ այսպէս կ'սլաւոթեա պիտի . . . :

Իսկ դու, դաւաճան, վատազգի, դու որ բարե-
կամք կ'կոչէիր զիս, օգուտ քաղեցիր իմ անձնու իր-
ութենէս քու փառասիրութիւնդ յազեցնելու և
դործած ոճրիդ բոլոր սլատուհասն իմ վրայ թա-
փելու համար: Ա՛հ, դու կ'տանին յաղթանակն,
վասնզի գիտես որ ես անկարող եմ այժմ մաքառիլ
քեզ դէմ: Ո՛վ երկնային արդարութիւն, ո՛ր ես:
Ի՞նչ կրնամ ակնկալել մարդոցմէ երբ Աստուած կը
լքանէ զիս: Բոլոր սպացոյցք ինձ դէմ են, ամեն
ինչ կ'ընկճէ զիս: Ի՞նչ պիտի ըսեմ դատաւորաց իմ
անմեղութիւնս հաստատելու համար: Եթէ յայտնեմ
իրենց ճշմարիտ մարդասպանն, չպիտի հաւատան
ինձ, վասնզի վատազգին Շամէլ այնքան լաւ դիտցաւ
խաղալ իր դերն որ ոչ ոք կ'կասկածի իր վրայ: Ես,
իր մարդերէն բռնուած և ամբաստանուած, ինչպէս
պիտի կարենամ ըսել դատաւորաց. « կ'սխալիք,
Բրէվալի ճշմարիտ սպաննիչն, տհաւասիկ, զիս ամ-
բաստանողն է: » Ո՛վ Աստուած իմ, չպիտի հաւատան
ինձ, և դու գիտես, դու որ մարդոց սիրտը կ'կար-
գաս, որ ես անմեղ եմ:

Այս միջոցին քայլերու աղմուկներ հնչեցին բա-
կին մէջ: Այս քայլեր կ'թուէին մտեանալ բանտին:
Տէգրիվ յանկարծ ոտք ելաւ, քանի մը քայլ յառա-
ջացաւ դէպի դուռն, և սպասեց:

Չնդանին դուռը բացուեցաւ, և բանտապահ մը,
ճարտարից կանթեղ մ'ի ձեռ ին, մտեցաւ բանտարկե-
լոյն որու ներկայացուց, առանց խօսելու, կտոր մը հաց:

Տէգրիվ՝ ի տես բանտապահին՝ կապարի նման
ամգուենեցաւ:

— Ի՞նչ կուգէք ինձմէ, ըսաւ նա հրելով զանի, բա-
նի մը պէտք չունիմ, աւելի լաւ ունիմ մեռնիլ անօ-
թութենէ:

— Գիւրին է ըսել զայդ, բայց դժուար է դործա-
դրել: Ամենէ առաջ ինձ արուած հրամանն, դու
չես ուզեր այս հացն, բայց ես հոս կ'թողում զայն,
ինչպէս որ կ'ուզես այնպէս բրէ: Լաւ կ'ընես եթէ
ուտես, ջանա՛ քնանալ, ամեն բան կ'մտացուի քնոյ
մէջ: Գիշեր բարի:

— Մտիկ բրէք, բառ մը, կ'աղաչեմ, մի՛ լքանէք
զիս այսպէս: Գթացէք իմ վրայ: Իո՞ք անողոր ար-
գարութիւնն չէք, ամեն բանէ առաջ մարդ մ'էք
. . . դուցէ կին մը և գուակներ ունիք . . . լաւ ու-
րեմն, ես, ընտանեաց խեղճ հայր մը, դատապար-
տուած եմ յանցանքի մը համար զոր չեմ գործած
. . . : Անմեղ մ'եմ: Վատասիրտ մը, իր սոսկալի
փառասիրութեան յազուրդ տալու համար, զիս այս
անդունդին մէջ նետեց: Ես, մարդասպան — և կը
խնդար ջղաձղութեամբ — ես, Եմիլ Տէգրիվ, որ
կենացս մէջ ոչ ումեք չարիք գործած եմ . . . : Ա՛հ,
սոսկալի է այս:

Էմիլ Տէգրիվ անունն լսելուն, բանտապահն տծ-
դունեցաւ, ապա քայլ մը յառաջանալով, վերցուց
իր կանթեղն զլխուն բարձրութեամբ: Լուսոյ խորձ
մը գնաց ուղղակի ընկաւ բանտարկելոյն գունատ
երեսին վրայ:

Բանտապահն վայրկեան մը մնաց այսպէս խոհուն,
ապա վար դնելով իր կանթեղն, մտաեցաւ Տէգրիվի,
բռնեց նորա երկու ձեռներն, և յուզեալ ձանով
մ'ըսաւ.

— Կհաւատամ ձեզ, սիրելի վարպետս, կհաւա-
տամ ձեզ . . . դուք անմեղ էք:

Այս խօսքերուն վրայ, կալանաւորն քայլ մը յե-
տս նահանջեց:

— Ո՞վ էք դուք, գոչեց նա:

— Ո՞վ եմ . . . ո՞չ ևս կ'ձանաչէք զիս, իմ սիրելի
վարպետս . . . Մարգէնը չեմ, ձեր վաղեմի սպասա-
ւորն որու այնքան բարիք ըրիք:

— Մարգէն, դո՞ւք էք . . . ո՞չ, ներեցէք ինձ
զնեզ չձանչնալուս. բայց հոս այնքան մտած է, և
յուսահատութենէն աչքերս չեն կարող տեսնել
. . . : Լաւ ուրեմն, Մարգէն, կը տեսնէք որպիսի
ախուր կացութեան մէջ կ'գտնուիմ:

— Քաջութիւն, պարոն Տէգրիվ, ամեն յոյս կո-
րուած չէ գեռ: Կարելի չէ այսպէս անմեղ մը դա-
տապարտել: Եթէ իմ տկար ձայնս կարենայ հասնիլ
մինչև ձեր դատաւորաց ականջն, պիտի ըսեմ ան-
ոնց, ես որ այնքան տարիներ ծառայեցի ձեզ, թէ
լինչ տեսալ մարդ էք դուք: Բաց աստի, դուք ձեր
կողմն ունիք հանրային կործիքն: Ամեն մարդ զիտէ
դուք միշտ բարի, անըսողիւտ և առ ի՞շուստս

կարեկից եղած էք: Քաջութիւն ուրեմն, վարպետ
իմ, և . . . :

Նոյն պահուն զանգակ մը հնչեց բակին մեջ:

— Պարտիմ թողուլ գրէզ, սիրելի վարպետս,
ըսաւ բանտապահն . . . ինձ տրուած հրամանն
կ'արգիլէ զիս աւելի երկար մնալ բանտարկելոց մօտ:

— Լաւ, Մարթէն, հնազանդէ հրամանին: Բայց
ղիս թողէ առաջ, երդու ընցիր ինձ այնպէս ընել որ
կարենամ մեռնելէ առաջ տեսնել տիկին Տէգրիվն:

— Երբէք չ'պիտի մեռնիք, վարպետս, վասնզի
չ'պիտի համարձակին դատապարտել զձեզ, և պիտի
տեսնէք տիկինն, այդ բան արգիլուած չէ:

— Աստուած լսէ ձեզ, ըսաւ Տէգրիվ բանտապա-
հին երկնցնելով իր ձեռքն:

Բատապահն բռնեց զայն, սեղմեց գորովանօք, ա-
պա քաջուեցաւ՝ գոցելով դուռն իր ետևէն:

Տէգրիվ, իր վաղեմի սպասաւորին մխիթարիչ խօս-
քերէն սիրովեալ, գնաց իր խշտեակին վրայ նետուե-
ցաւ վայրկեան մը հանգստանալու համար:

Այսպէս ժամէ մ'աւելի մնաց քնափութեան վի-
ճակի մէջ որ ոչ արթնութիւն էր և ոչ քուն: Իր
մարմինն կ'հանդէք, բայց միտքն կ'թեւադէր իրեն
հազար և մէկ տագնապիչ մտածումներ: Իր երեւա-
կայութեան ցնորներն մարմին կ'ստանային և կ'պա-
շարէին զինք: Ինքզինք կ'տեսնէր, համակ դողդո-
ջուն, կառափնարանին ոտքն, զահիճն իր մօտ՝ աջ
կողմն կանգնած, և ձախ կողմն Շամել որ իրեն կը
նայէր ժպտելով և զինք կ'մղէր չարաչուք դահնային
(Couperet) ներքև:

Այս սոսկալի մը ճաւանձին տակ կ'հանչէր նա, չըն-

չառութիւնն տակաւ խոռովուն և շոող կ'դառնար :
 Իր ճնշեալ կուրծքն ուժգնապէս կ'բարձրանար , և
 արեան հոսում մը մտալուտ էր , երբ իր ահռելի
 երազոց մէջէն կարծեց լսել իր զնդանին դրան բա-
 ցուիլն : Ճիգ մ'ըրաւ ինքնիր վըայ , և , յանկարծ ոտք
 ելնելով , շիտակ և անչարժ կայնեցաւ :

Նոյն պահուն իրապէս բացուեցաւ իր բանտին
 դուռն , և կի՛ն մը , գունատ և դողդոջուն , երևցաւ
 սեամին վրայ :

Այս կնոջ կ'հետեւէր բանտապահ մը որ ձեռքը բռ-
 նած էր կանթեղ մը :

Տէգրիվ զարմանօք տեսնելով այս լոյսն որ այսպէս
 յանկարծ կ'ողողէր իր զնդանն , ուղեց ոտք ելնել ,
 երբ երկու բաղուկներ պարուրեցին զինք և արտասու-
 ուօք հեղձակիցուկ ձայն մ'ըսաւ իրեն

— Էմիլ , սիրելիդ իմ էմիլ , դու հո՛ս , դու այս
 ահռելի զնդանին մէջ :

Եւ Էլէօնօր , Տէգրիվի կի՛նն , երերալով ընկաւ իր
 ամուսնոյն բաղլաց մէջ :

Խեղճ կալանաւորն , զարմանքէն և ուրախութենէն
 համր դարձած , շէր կարող բառ մ'իսկ արտասա-
 նել , կուզէր խօսիլ , բայց խօսքերն կ'մարէին իր չըր-
 թանց վրայ :

Էլէօնօր սթափեցաւ , և դունատ , դողդոջուն և
 աչերն արտասուաթուրմ , ծունր լծած էր իր ամուս-
 նոյն քով և կ'դիտէր զնա առանց ինքն իսկ կարե-
 նալ խօսելու :

Տէգրիվ վերջապէս խղեց լուութիւնն :

— Ո՛ր ամուսին եմ , ըսաւ նոն , դիտե՛ս ինչո՞ւ հա-
 մար հոս եմ :

— Գիտեմ , պատասխանեց Էլէօնօր , գիտեմ որ
 սոսկալի յանցանքով կ'ամբաստանեն զքեզ , բայց
 Աստուած պիտի պաշտպանէ անմեղն :

— Ո՛վ իմս Էլէօնօր , ես իբր նահատակ կ'տանջու-
 իմ աստ , բայց քու ներկայութիւնդ այս վարչրկեա-
 նիս բալասան մը , կ'նետէ սրտիս մէջ : Մարդկանց ար-
 դարութիւնն , երևոյթներէն կուրացած , կ'դատա-
 պարտէ զիս այսօր և կ'ամբաստանէ իրր գործիչ ա-
 մենաանարգ յանցանքի մը , բայց այս արդարութիւն
 չէ կարող հասնիլ մինչև իմ խիղճս որ անպարտ կը
 հստակէ զիս , բայց դու ինչպէս կարող եղար մինչև
 հոս գալ :

— Ո՛հ , այնքան թախանձեցի , այնքան լացի որ ,
 վերջապէս շնորհ ըրին ինձ գալ տեսնել զքեզ վայր-
 կեան մը : Բայց ինձ շնորհեալ այս քանի մը վայր-
 կեաններն համբուած են , չեմ կարող երկար ժամա-
 նակ մնալ քեզ հետ , պէտք է որ թողում գրեզ , ա-
 ւանդ , ես որ կ'ուզէի քովդ մնալ զքեզ մխիթարելու
 համար : Եւ սակայն պէտք է երթամ , մեր դաւակն
 ևս իմ ներկայութեանս կ'կարօտի , կ'լայ , կ'տրտմի
 . . . ա՛հ , էմիլ , որքան տխուր է վիճակդ , բայց քա-
 ջութիւն . . . այս պահուն ամեն ինչ կ'ընկճէ զքեզ ,
 բոլոր վկայութիւնք քեզ դէմ են . բայց Աստուած ,
 որ մարդոցմէ աւելի լաւ կ'դատէ , պիտի բանայ քու
 դատաւորաց աչերն , և ճանաչել պիտի տայ անոնց
 ճշմարիտ յանցաւորն , այն անզգամն որ գործեց այս
 նողկալի սպաննութիւնն :

— Տիկին , ըսաւ բանտապահն իր կանթեղն առ-
 նլով , հաճեցէք ինձ հետեիլ , չէք կարող աւելի եր-
 կար մնալ հոս , ժամանակն անցած է , և . . . :

— Յանուն Աստուծոյ, ըսաւ Էմիլ յառաջանալով,
քանի մը վայրկեան ևս . . . :


— Չեմ կարող ինձ տրուած հրամանին դէմ գործել, պատասխանեց բանտապահն, և փափաք չունիմ բանտ մտնելու Մարդէնի պէս որ շատ սուղ պիտի վճարէ իր անհնազանդութիւնն : Օ՛ն, տիկին, յառաջ անցիք, և ամենքս հնազանդինք հրամանին :

Էլէօնոր վայրկեան մը մտածեց, ապա իր ամուսնոյն բաղկաց մէջ նետուելով և սեղմելով զանի իր սրտին վրայ, ըսաւ նմա արտասուելից աչօք .

— Մնաս բարեա՛ւ, կամ մանաւանդ ցտեսութիւն, սիրելիդ իմ Էմիլ . . . քաջութիւն . . . վերստին սիրտի դամ տեսնել դքեզ :

— Յտեսութիւն, Էլէօնոր, պատասխանեց դժբաղդն հեծկլտալով, ցտեսութիւն, եթէ հաճոյ է Աստուծոյ :

Եւ Տէգրիով, վերստին միայնակ և աշխարհէն կղզիացեալ տեսնելով ինքզինքն, ընկաւ իր խշտեակին վրայ, և հոն, երկու ձեռներով իր երեսն ծածկելով, այսպէս մնաց՝ խոհուն և խուրճ ամբողջ ժամեր :



ՊԼՈՒԽ Է.

ԿՆՈՋ ՏԿԱՐՈՒԹԻՒՆՆ

Դժբաղդ Բրէվալի ընտանիքէն կ'մնային մի միայն երկու որդեր : Այս երկու փոքրիկ դժբաղդ էակներըն յանձնուեցան անձնուէր հօրաքրօջ մը որ պիտի խնամէր զանոնք և մօր տեղ պիտի բռնէր անոնց :

Հանրիէթ Վիլքիթէտ մի քանի տարիէ ի վեր այրի մնացած էր անգլիացի երիտասարդ սպայէ մը որու հետ ամուսնացած էր օտար բանակաց ի Բարիզ մըտած պահուն, 1814ին, և որ մի քանի ժամանակէն յետոյ մեռած էր դէպ յԱմերիկա ըրած ճամբորդութեան մը մէջ : Երիտասարդ այրին որ հազիւ քսան երկու տարին թեակոխած էր, ամուսնոյն մահուանէն ի վեր առանձին կ'ընակէր ամառնային տուն մը, Բարիզէն քանի մը մլոն հեռու, Ռիւէյլ գիւղին մօտ : Եւ հաճոյք կ'զգար այս առանձնութեան մէջ և ախորժանօք կ'ճաշակէր գիւղական հեշտութիւններն : Շատ քիչ անգամ Բարիզ կ'զար, այնևս միայն տեսնելու համար իր եղբայրն զոր ոգւով չափ կ'սիրէր :

Բրէվալ, որ մ'առաջ այն օրէն յորում մտադիր էր մեկնիլ ի Մարսիիա, լուր զրկեց իր քրօջ իմաց տալու համար այցելութիւն մը հետևեալ օրուան համար : Խեղճ կիսն, իր եղբայրն տեսնելու և զանի իր տունն ընդունելու ուրախութենէն երջանիկ, առտու կանուխ տունէն դուս ելած էր զանի դիմաւոր-

րելու համար, երբ ժամը իննին միջոցներն հեռուէն նշմարեց ձիաւոր մը որ սրաբշաւ կ'ղիմէր դէպի Ռիւէյլ գիւղն: Պահ մը կարծեց թէ իր եղբայրն էր, բայց շուտով զգաց սխալին, երբ ճանաչեց ձիաւորն որ Ռիւէյլի գրադիրներէն մին էր և որ իրեն մտտեմալով, ձիէն վար իջաւ, և աչերն արտասուալից, դէմքըն այլայլած, զգուշութեամբ յայտնեց նմա աղետալի գոյժն:

Մանկամարդ կիսն ուժաթափ եղաւ: Գրադիրն երկու զիւղացիներու օգնութեամբ իր տունը փոխադրեց զանի, յետոյ ինքն շտապաւ հեռացաւ թողլով եղիւնին իր սպասուհիներուն ձեռաց մէջ: Երբ Հանրիէթ սթափեցաւ՝ շորհիւ Ռիւէյլի բժիշկին անմիջական օգնութեանց, հրամայեց լծել իր կառքըն և մեկնեցաւ դէպի մայրաքաղաք, ինչպէս արդէն տեսանք:

Այս դժբաղդ օրուան հետևեալ օրն, Հանրիէթ, տխուր, վշտաբեկ և խոհուն, փակուած էր իր սենեկին մէջ երբ յանկարծ լսեց իր դրան մեղմիկ զարնուիլն:

— Մտէք, ըսաւ նէ առանց տեղէն ելնելու:

Տարւօք կին մը ներս մտաւ:

— Ի՞նչ կ'ուզես, Մարկըրիդ, ըսաւ նէ:

— Տիկին, պարոն Ծամէլ կ'փափաքի տեսնել ըզձեզ, ինչ կ'հրամայէք:

Հանրիէթ դողաց:

— Թող մտնէ, ըսաւ նէ վայրկեան մը մտածել է յետոյ:

Հազիւ տրտասանուած էին այս բտուերն երբ Ծամէլ սեամին վրայ երեցաւ:

Տիկին Վիլֆրէտ, ի տես Ծամէլի, կաս կարմիր կտրեցաւ և անկարող եղաւ ոտք ելնելու:

— Ներեցէք ինձ, պարոն Ծամէլ, ըսաւ նէ, զիս հարուածող դժբաղդութիւնն այնքան մեծ է որ, այսպէս ըսեմ, անդամալուծեալ կ'զգամ ինքզինքս:

Ծամէլ նոյն վայրկեանն բնաւ չպատասխանեց, աչերն խոնարհեցնելով, և ինքն ևս կարմրելով իրր թէ զթութենէ բոլորովին տարբեր զգացումէ մը շարժուած լինէր, քանի մը քայլ յառաջացաւ դէպի Հանրիէթ, և նորա ձեռքը բռնելով:

— Քաջութիւն, տիկին, ըսաւ նմա: Գժբաղդութիւնն որ կ'հարուածէ զձեզ, անդարմանելի է, բայց բարեկամ մը կ'մնայ ձեզ: Բրէվալ ինձ համար եղբորմէ մ'աւելի էր: Սւաղ, տիկին, ձեր վիշտն մինչև հոգւոյս խորն կ'շարժէ զիս, և մինչև իսկ, եթէ ներելի է ինձ, կ'բաղձայի մխիթարել զձեզ և ձեր սրտին մէջ վերահաստատել անդորրութիւնն և յոյսը:

Այս խօսքերուն վրայ, որ այնքան հանդարտօրէն արտասանուեցան, Հանրիէթ նորէն կարմրեցաւ և գլուխն ծածկեց իր ձեռաց մէջ:

Ծամէլ դողդղաց, և իր աչերն յառած էր անոր վրայ:

Ինչու համար այս երկղիմի խօսքերն, ինչու այս տաղնասն՝ սոց և տխրութեան այս վայրկեանն մէջ:

Երկու խօսքով պիտի բացատրենք զայն ընթերցողին:

Վասնզի Ծամէլ, իր երիտասարդութեան ժամանակ սիրած էր Օրիորդ Ռիւէյլն, որ ապա տիկին Վիլֆրէտ եղաւ:

Սա, այն ինչ վարժարանէն ելած, և հաղիւ տասն և վեց տարեկան, իր ճամբուն վրայ ընդհարած էր կուսական սրտի մը համար այնքան վտանգաւոր այս խուժին, և զոր սէր կ'կոչէն: Շամէլ առաջինն եղաւ որ նորա սրտին մէջ արծարծեց այս կրակն, և նէ այնքան բուռն կերպիւ սիրահարեցաւ նմա, որ քանի մ'անգամ իր ծնողք խորհեցան հեռացնել զինք Բարիզէն, և վանքի մը մէջ փակել: Իր հայրն լաւ աչքով չէր նայէր այդ երիտասարդին որու համբաւն հեռի էր նախանձելի լինելէ, և ո՛չ մի կերպով չէր ուզեր տալ իր հաւանութիւնն ամուսնութեան մը զոր դժբաղդ կ'նախատեսէր. սակայն ի զուր, Հանրիէթ կ'ընդդիմանար նոցա բոլոր խրատուց, և բացէ ի բաց յայտարարած էր թէ անորմէ զատ ուրիշի հետ չպիտի ամուսնանայ: Իր ծնողք հարկադրեցան թողուլ մայրաքաղաքն և մեկնիլ Իտալիա, ուր բնակութիւն հարտատեցին Միլանի մէջ: Հոն մեռաւ Հանրիէթի մայրն, մինդեռ սա օր օրի կ'հիւժէր: Հայրն, վախնալով իր զաւկին կենաց սպառնացող վտանգէն, վերստին Բարիզ տարաւ զանի իր սիրահարին հետ ամուսնացնելու որոշմամբ: Բայց, դժբաղդարար, իրենց վերադարձին իմացան որ Շամէլ արդէն ամուսնացած և զաւակ մ'ալ ունեցած էր: Հանրիէթ հիւանդացաւ: Մի քանի ամիս ետք նէ կ'ամուսնանար այն Անկիլիացի երիտասարդ սպային հետ որու վրայ խօսեցանք զվսոյս սկիզբն:

Ժամանակէ մ'ետք այրի մնալով, Հանրիէթ իր ամուսնոյն վրայ լալով հանդերձ, և այսքան դժբաղդութիւններ կրելէ վերջ, դեռ ևս իր սրտին մէջ կը զգար իր վաղեմի սիրոյն վերածնիլն, աւելի բուռն

քան երբէք: Նէ քաջ գիտէր թէ Շամէլ ինքն ևս երկար ժամանակէ ի վեր այրի էր, և կ'յուսար որ օր մը բաղդն զինք պիտի միացնէր նորա հետ զոր երէք դադրած չէր սիրելէ:

Իր եղբօր մահն վերստին ջնջեց իր բոլոր յոյսերն և զինք ընկղմեց նորանոր վշտաց մէջ: Սյն ատեն երդում բրաւ խեղդել ուրիշ ո՛ր և է զգացում և իւր անձն նուիրել այն երկու որբերուն որոց միակ յոյսն էր, երբ այս անակնկալ երևումն Շամէլի զոր իրկար ժամանակէ ի վեր չէր տեսած, եկաւ վերստին արծարծել, նոյն իսկ իր վշտաց մէջ, այն գէշ մարուած կրակն որ սպառած էր գրեթէ իր ամբողջ երիտասարդութիւնն:

Վերստին կարմրեցաւ նէ, ինչպէս ըսինք, և իր գլուխն ձեռացը մէջ ծածկեցցի:

Եւ սակայն ճիգ մ'ըրաւ ինքնիր վրայ և բացաւ իր արտասոււաց կաթիլներով ակօսուած դէմքն:

— Շնորհակալ եմ, պարոն Շամէլ, ըսաւ նմա, ձեր առ իս ունեցած սէրն, և եղբօրս նկատմամբ անձնուիրութիւնն անհուն են:

— Պարտքս միայն կատարեցի, Էտիկին, և ոչ այլ ինչ, պատասխանեց Շամէլ: Բրէ վալի կորուստն, անտարալոյս, ձեր սրտին մէջ պիտի թողու պարապ մը զոր դժուար է ընուլ, բայց, եթէ դուք, ակիկին, կ'կորուսէք եղբայր մը, ես կ'զրկուիմ անկեղծ և անձնուէր բարեկամէ մը: Սյս կորուստ պիտի հակազդէ իմ առևտրական գործերուս իրայ, վասնզի անշուշտ գիտէք որ երկար ժամանակէ ի վեր, ես և ձեր եղբայրն, գործերու յարաբերութիւն մ'ունէինք, սակայն այս չէ որ վիշտ կ'պատճառէ ինձ:

Կրնամ տակաւին, առաջ Աստուած, տոկալ նմանօրինակ դժբաղդութեանց, բայց ամենէն աւելի զիս տխրեցնողն և իմ հոգիս սուգի մէջ ընկզմողն է մտածել թէ Բրէվալ, այնքան բարի և անկեղծ, վատութեամբ սպաննուած լինի անձէ մը որ իր բարեկամն կ'կոչէր զինք, և այնպիսի շարժառիթի մը համար որ մինչև ցայսօր անծանօթ մնացած է: Բայց հանդարտեցէք, տիկին, իր մահուան վրէժն պիտի լուծուի, և արդէն իր սպաննիչն՝ արդարութեան ձեռքն խնալով և դատուելով, ի մահ դատապարտուեցաւ:

— Ի՞նչ կըսէք, դոչեց տիկին Վիլթրէտ, արդէն դատապարտուած, այսքան չուտ . . . : Բան մ'ըսեմ ձեզ, պարոն Շամէլ, այդ մարդն, այդ Տէգրիվը հըրէչ մ'է, իր յանցաւորութիւնն ակներև է, խիղճս կ'ամբաստանէ զանի: Սակայն կարծեմ թէ օրէնքն հապճեպով շարժած և չափազանց խիստ եղած է . . . պէտք էր դոնէ մեղմացուցիչ պարագաներ գտնել այդ դժբաղդ մարդուն համար, և . . . :

— Շատ բարեսիրտ էք, տիկին, բայց օրէնքն անողոքելի է մարդասպանաց համար:

— Ճիշդ է, բայց Տէգրիվ ինքն ևս ունի ամուսին մը և զաւակ մը . . . և ս' գիտէ . . . հակառակ մեր բոլոր համոզմանց . . . ո՞վ Աստուած իմ, դու միայն կ'կարդաս սրտերն, դու միայն գիտես թէ այս մեծ աղէտին մէջ, որ կ'հարուածէ երկու ընտանիքներ, դատաւորք անմեղ մը դատապարտած են:

— Կ'հիանամ ձեր վրայ, տիկին, դուք կին մ'էք և դիւրաւ ի դուրս կ'չարժիք մինչև անգամ այն մարդուն բաղդին վրայ որ զձեզ թշուառութեան

մատնեց. բայց կարող էք վստահ լինիլ թէ դատաւորք անմեղ մը դատապարտած չեն: Սպաննութիւնն գործուեցաւ գրեթէ իմ աչացս առջև, և զուհին իմ բազկացս մէջ աւանդեց իր հոգին, երբ երկու սպասաւորներս իր սպաննիչն կ'ըռնէին: Ո՛հ, երբէք չպիտի մոռնամ այն սոսկալի վայրկեանն: Յուզումս այնքան մեծ եղաւ, որ դեռ այս վայրկենիս կ'ըզգամ զայն:

Եւ Շամէլ իր թաշկինակն տարաւ իր աչաց, ուր սակայն ոչ մի արասուք չէր երևէր:

— Եւ, ըսաւ Հանրիէթ, ջանալով զսպել զինքն հեղձամղձուկ ընող հեծկլտանքներն, մարդասպանն առանց ղիմադրութեան անձնատուր եղաւ . . . :

— Ընդ հակառակն, տիկին, կատաղութենէ յիմարացած, յանդգնեցաւ ամբաստանել զիս իբր ճշմարիտ մարդասպան ձեր եղբոր: Ապա, ծուռկերս ընկնելով, կ'աղաչէր ինձ, լալով, գթալ իր կնոջ և զաւակին վրայ: Բայց շատ ուշ էր, ոստիկանք արդէն մեր քովն էին, և ոստիկանութեան տեսուչն անմիջապէս հասնելով անձանմբ ստուգեց ոճիրն և ձերբակալել տուաւ ոճրագործն:

— Աւանդ, պարտիմ ընդունիլ ակներև ճշմարտութիւնն և դատապարտել զՏէգրիվ, բայց ես ինձ կ'հարցնեմ թէ ի՞նչ շահեցաւ այն սոսկալի ոճրէն զոր գործեց, ոճիր որ այնքան աղէտալի հետևանքներ ունեցաւ: Եւ սակայն, այս ամենուն հակառակ, չեմ կարող չարգահատիլ իր վրայ և իր ամուսնոյն, իմ մանկութեան բարեկամուհւոյս վրայ: Թշուառ կին . . . կ'տեսնէք, պարոն Շամէլ, կ'գթամ այլոց վրէժակին վրայ, մինչդեռ պարտէի խորհիլ իմ ցաւոցս

վրայ, բայց այս վայրկենիս, իմ վիճակէս կ'ըստեմ տարարաղբ տիկին Տէգրիվի կացութեան զառնութիւնն:

— Ո՛հ նորիէթ, դոչեց Շամէլ, թոյլ տուէք ինձ՝ տակաւին կոչել զնեզ այս անունով որ այնքան քաղցըրէ դուք՝ բարութեան հրեշտակ մ'էք, և կ'աքանչանամ ձեր վրայ: Մասնակից կ'լինիմ ձեր անհուն վշտին, բայց մխիթարուեցէք, տակաւին ձեզ կ'մնայ բարեկամ մը, եղբայր մը որ պատրաստ է զոհել իր անձն ձեզ համար:

— Մտիկ ըրէք ինձ, Հանրիէթ, յարեց նա իր ձեռաց մէջ բռնելով տիկին Վիֆրէտի ձեռներն, մըտիկ ըրէք և ներեցէք ինձ այս վայրկենիս անցեալն ձեզ յիշեցնելուս, բայց պիտէք որ իմ սիրտս երբէք դողբած չէ՛ ձերն լինելէ: Ներեցէք ինձ եթէ կ'յիշեցնեմ ձեզ այդ անցեալն, բայց մինչև ցայսօր, հակառակ իմ կրած բոլոր տառապանացս, հակառակ անողոր ճակատագրին որ զմեզ բաժնեց իրարմէ, ոչինչ կարող եղաւ ջնջել յիս այն սէրն զոր միշտ ունեցայ ձեզ համար, և որ, դեռ այս վայրկենիս իսկ, աւելի ևս կենդանի է քան երբէք:

Անշուշտ անպատեհ է այս վայրկենիս բացատրել ձեզ տակաւին ամեն ինչ որ կ'ըզամ ձեզ համար, բայց արդէն ըսի ձեզ զայն, Հանրիէթ, ներեցէք ինձ և գթացէք իմ վրայ . . . :

— Աստուած իմ, թոթովեց Հանրիէթ խիստ ցած այլ կատարելագոյնս յստակ ձայնով մը, Աստուած իմ, ես ևս երբէք չեմ մոռցած, բայց այս վայրկենիս պարտինք խեղդել մեր սրտին մէջ այս զգացումն որ տակաւին կ'զարթնու ի մեզ: Յիշեցէք որ

երկու որբեր կ'աղերսեն մեր ներկայութիւնն, և թէ պարտինք ամենէ առաջ կարգադրել տարարաղբ եղբորս գործերն:

— Պատրաստ եմ ձեր հրամանաց, պատասխանեց Շամէլ որ շէր կարող պահել, այս տխուր վայրկենանին մէջ, իր բոլոր ուրախութիւնն որով զբաւուած էր իր հոգին: Ի՞նչ պէտք է ընել առ այդ . . . :

— Արդէն ըսի ձեզ զայդ, բարեկամդ իմ, այս վայրկենիս շատ կարևոր գործեր ունինք կարգադրելու, և թէ պէտ զիտեմ թէ եղբորս հարստութիւնն երէն մեծագոյն մաս մը կ'կորսնցնեմ, անհրաժեշտ կերպիւ պէտք է որ ինձ օգնէք, վասն զի ես առանձին երբէք չպիտի յաջողիմ յարդարել այս գործն:

— Շատ լաւ, Հանրիէթ, ձեր տրամադրութեան ներքե եմ . . . : Զուականքս Բարիզէն հեռու կ'գտնուին, այնպէս որ ես առանձին եմ, բացարձակ տէր իմ ժամանակիս, գործածեցէք զիս որքան ժամանակ որ կամիք:

— Անսահման է ձեր անձնուիրութիւնն, և այդ մասին չնորհակալ եմ ձեզ ի բոլոր սրտէ: Տեսէք, հոն, իմ եղբորս տետրակները, քննեցէք զանոնք, ըրէք ինչպէս որ յարմար կ'ըստիք, մանաւանդ ինչ որ շահաւոր կ'տեսնէք երկու որբոց համար: Մեծ է վստահութիւնս ձեր վրայ, և ջանացէք կարելի եղածին չափ շուտով լինցնել, իսկ ես մտադիր եմ Սիւելյ վերադառնալ, վասնզի այս միջոցիս Բարիզի բնակութիւնն ատելի է ինձ . . . :

Շամէլ երջանիկ էր: Վիրջապէս ամեն ինչ կ'յաջողեր իրեն, և իր փառասիրութիւնն զոհացած էր: Իրէվալն սպաննել տալ, նորա գործոց գլուխն անց

նիլ, և Հանրիէթի սիրտն ևս զրաւել, այս էր ահա երջանկութիւնն որում կ'տենչար երկար ժամանակէ ի վեր: Բայց այս երջանկութեան հասնելու համար, պարտաւորուած էր արեան մէջ թաթխել իր ձեռներն, և խորտակել երկու անմեղ ընտանեաց սիրտըն: Այս վատագոյի արարածն, այս հրէշն, ոչ մի խղճի խայթ չունեցաւ Հանրիէթի առջև որ իր արտասուաց մէջէն կ'ժպտէր իրեն:

Իր խիղճն համր կ'մնար:

Իր ախտածէտ հոգին հեշտութեամբ տեսաւ որ այլևս ոչ այլ ինչ կ'մնար իրեն բայց միայն երկնցընել իր ձեռքն իւրացնելու համար ամեն ինչ որ վերաբերած էր Բրէվալի: Բաց աստի նորա քոյրն կ'սիրէր զինք, և այս սէրն էր մանաւանդ որ յաղթական կ'հանդիսացնէր զինք:

Հանրիէթի վերջին խօսքերն բաւական էին հասկցնելու համար իրեն թէ ուրիշ բան չունէր ընելու բայց միայն հրամաններ տալ:

Բայց և այնպէս զսպեց ինքզինքն, և որովհետև կեղծաւոր հոգի մը կ'կրէր, իր դիմաց տուաւ ուրախութեամբ և տրամութեամբ խառն արտայայտութիւն մը, ոտք ելաւ և իր ձեռներն երկնցնելով տիկին Վիլթրէտի, ըսաւ նմա.

— Կրնաք քաշուիլ ի Ռիւէյլ, Հանրիէթ: Գացէք որբերուն մօտ որ պէտք ունին ձեր ներկայութեան: Հոս կ'թողուք մէկը որ պիտի հսկէ ձեր շահուց վրայ: Ամեն կերպով պիտի ջանամ հաճելի լինիլ ձեզ, և մոռցնել տալ ձեզ, եթէ կարելի է, այս տխուր արկածներն: Վստահ եղիք իմ վրայ, և մի մոռնաք զիս: Միակ շնորհն զոր կ'խնդրեմ ձեզմէ, այս է որ

թոյլ տաք ինձ մերթ ընդ մերթ այցելութեան գալ ի Ռիւէյլ և մատուցանել ձեզ իմ յարգանքներս, և տեղեկութիւններ հաղորդել ձեզ ձեր գործոց մասին: Կ'ընդունիք զայս . . . :

— Այո, պարոն Շամէլ, ի բոլոր սրտէ կ'ընդունիմ ձեր այդ առաջարկն: Ձեր ներկայութիւնն՝ իմ տանըս մէջ՝ մխթարութիւն մը պիտի լինի, վասնզի ի ձեզ պիտի ատենեմ միշտ իմ դժբաղդ եղբորս ամենէ մտերիմ, ամենէ անձնուէր բարեկամս:

— Շնորհակալ եմ, Հանրիէթ, ըսաւ Շամէլ ակամայ կարմրելով, շնորհակալ եմ, և հիմակ թոյլ տուէք ինձ քաշուիլ: Հետս կ'առնում այս տետրակներըն խնամով քննելու համար զանոնք, և վաղ առաւօտ հաճոք պիտի ունենամ զձեզ տեսնելու յառաջ քան ձեր մեկնիլն ի Ռիւէյլ:

Հանրիէթ շնորհակալ եղաւ և նմա երկնցուց իր ձեռքն:

Շամէլ բռնեց զայն, և, դողդողալով, համբոյր մը զետեղեց անդ: Ապա քանի մը քայլ յառաջացաւ դէպի դուռն, բայց սեամին վրայ հասնելով, դարձուց գլուխն և ցանկութեամբ լի ակնարկ մը նետեց հէք արտասուելից կնոջ վրայ:

— Ի՛հ, ըսաւ նա իւրովի, դուրս ելնելով, իմն է նէ, ինչպէս նաև Բրէվալի հարստութիւնն:

ՓՂՈՒԽ Զ.

ԲԱՆՏԻՆ ԶՆԴԱՆԸ

Ինչպէս Շամէլի բերնէն իսկ իմացանք, Տէգրիվ մահուան դատապարտուեցաւ:

Արդարութեան պալատէն ելնելէն յետոյ, կրկին իր բանան առաջնորդուեցաւ և փակուեցաւ միևնոյն սենեկին մէջ ուր տեսանք զինք առաջին անգամ բանա մտած պահուն:

Երբ զինք ներս մտցնող երկու պահակներն հեռացան, և ինքն առանձին մնաց, մտտեցաւ պատուհանին և տխուր ակնարկ մը նետեց դուրսն:

Տեսաւ բնութիւնն գեղաժմիրա և գեղածիծաղ ջինջ կապուտակ երկնակամարին վրայ ճաճանչուէտ կ'փայլէր արևն և իր բարերար ճառագայթներով կ'ջերմացնէր մթնոլորան, և այս շքեղութեանց մէջէն վեհապանծ կ'բարձրանար մայրաքաղաքն իր հոյակապ շէնքերով և փառահեղ գմբէթներով:

— Ո՛վ Ստուած իմ, գոչեց նա, ամեն ինչ կորսուած է ինձ համար, ս'հ, այո՛, բարեաւ մնա բնութիւն հրաշագեղ, բարեաւ մնա:

Եւ սկսաւ լսլ:

Նոյն պահուն թռչնիկ մ'եկաւ թռոխի իր պատուհանին երկաթեայ ձողերէն միոյն վրայ, լսելի ընելով իր զուարթ դայլայլիկն. անմիջապէս ուրիշներ ևս եկան և զայն իրենց հետ առնելով յորձանապատոյտ շրջաններ բրին օդին մէջ:

— Որչնփ ազատեն այս փոքրիկ թռչուններն, դու չէց հէք կալանաւորն, որչնփ քաղցր և զուարթ է իրենց երգն: Նոքա երկիւղ չունին որ անիրաւ ատեան մը դատապարտէ զիրենք կամ կեանքէ զրկէ . . . : Ա՛հ, կ'հեռանան նոքա, և ես, հոս միտջնակ եմ: Մինչդեռ ամեն ոք կ'խնդայ, կ'շարժի, կ'յուզի ամեն ուրեք, ես անմեղս, մեռնելու դատապարտուած աստ կ'գտնուիմ այս զնդանին մէջ փակեցիկն զիս աւելցնելու համար իմ ցաւս, ցոյց տալու համար ինձ կենաց գեղեցիկութիւնն, և մտածել տալու համար ինձ թէ ընդհուպ պարտիմ թողուլ զայն: Եւ ինչո՞ւ թողուլ զայն, Աստուած իմ, ինչո՞ւ թողուլ այս կեանքն որ այնքան քաղցր, այնքան գեղեցիկ է. ինչո՞ւ մեռնիլ, ինչ ըբի ես, յանցաւոր եմ, անմեղ չեմ միթէ . . . : Ո՛վ Աստուած իմ, գթութեան ակնարկ մը նետէ իմ վրայ. տես իմ վիշտս, անմեղութիւնս: Որքան դժբաղդ եմ, ս'հ, ո՛չ, ամեն ինչ լինցած է ինձ համար, և պիտի մեռնիմ, իբր չորագործ մը, ամենէն դատապարտուած և նուատացած:

Եղուկ թշուառիս. բայց այս վայրկենիս ո՛չ ևս պարտիմ իմ վրայ խորհիլ: Իմ գաւակս, իմ ախուսինս ինչ պիտի լինին . . . ո՛չ, ոչ ևս պիտի տեսնեմ . . . ո՛չ ևս պիտի կրնամ սեղմել զանոնք բազլացո մէջ, ո՛չ, ամեն ինչ կորսուած է ինձ համար, առանձին եմ, օտար եմ ամենուն, ամենքն կ'դատապարտեն զիս, ամենքն կ'գարչին ինձմէ և ես անմեղ եմ, և մեղաւորն կ'ապրի և կ'վայելէ: Ո՛վ Աստուած իմ, եթէ շնորհէիր ինձ կինս և զաւակս տեսնելու երջանկութիւնն, ս'հ, որքան պիտի օրհնէի զքեզ:

պիտի ատէի աշխարհն, և պիտի երթայի առանձնութեան մէջ ապրիլ ընտանեացս հետ, գոնէ երջանիկ պիտի ապրէի ամեն անոնց հետ որ զիս կ'սիրեն: Աւաղ, աւաղ, այս երջանկութեան երազն աւելի կ'սպաննէ զիս քան այն մահն որ ինձ կ'սպասէ: Լաւ, քանի որ Աստուած կ'ըքանէ զիս, կ'հպատակիմ իր կամաց: Այսու հետև իրեն կ'մնայ դատել զիս և դատապարտել ճշմարիտ յանցաւորն:

Եւ Տէգրիվ, վշտէն և արտասուքներէն շնչահեղձ, այս դժնդակ մտածումներէն ջախջախուած, յուսահատ ընկաւ իր բանտին տախտակամածին վրայ:

Նոյն պահուն քայլերու աղմուկներ հնչեցին բակին մէջ, ապա դուռն բացուեցաւ և բանտապահ մը երևցաւ:

— Կրկին քու զնդանդ պիտի տարուիս, ըսաւ նա կերկերեալ ձանով մը, եթէ բան մը ունիս ըսելու, այժմէն ըսէ, չո՛ւտ: Ի՞նչ կ'փախաքիս:

— Վիճալաքիմ, պատասխանեց կալանաւորն, երկու տող բան գրել կ'նշու: Վհածիք ինձ տալ առ այդ պէտք եղածներն:

— Արգիլուած չէ այդ . . . : Ամեն բանտարկեալ իրաւունք ունի գրելու ում որ ուզէ:

— Շնորհակալ եմ, ըսաւ Տէգրիվ:

Բանտապահն դուրս ելաւ:

Եւր Տէգրիվ առանձին մնաց, ծնկան վրայ ընկաւ և իւր նիհար ձեռներն դէպ յերկին բարձրացնելով:

— Ո՛վ Աստուած իմ, գոչեց նա, ահաւասիկ ես ի մահ դատապարտուած, և սակայն անմեղ եմ: Աստուած իմ, թող քու կամքդ լինի . . . Աշխարհիս

վրայ կ'թողում յուսահատ կին մը և սիրեցեալ զաւակ մը, ո՛չ ևս պիտի տեսնեմ զանոնք . . . : Ո՛վ իմս Էտիար, ո՛ որդիեակ իմ, գըքեզ անգամ մը ևս տեսնելու և համարելու համար կ'տայի իմ բոլոր արիւնս կաթիլ առ կաթիլ: Բայց ինչ որ կ'մխիթարէ զիս, այն է թէ որ մը չպիտի անիծես դու իմ յիշատակս, վասն զի պիտի գիտնաս թէ քու հայրդ դատապարտուեցաւ յանցանքի մը համար զոր ինք չէր գործած: Գու աշխարհի առջև պիտի լուծես իմ վրէժս և պիտի պահանջես ահաւոր հաշիւ մ'այն մարդկային արդարութենէն որ աճապարեց մահուան վճիռն արձակել անմեղի մը գլխուն: Օր մ'անշուշտ պիտի գտնուիս դէմ առ դէմ ճշմարիտ մարդասպանին: Ես որ կ'ճանաչեմ զանի, կ'ներեմ իրեն ինձ դէմ գործած բոլոր չարեաց համար, բայց դու, անողբելի պիտի լինիս, դու պիտի լինիս նորա համար Աստուածային արդարութիւնն երկրի վրայ, վասն զի պէտք է որ սրբագործես քու հօրդ յիշատակն . . . :

Այս միջոցին իր մենախօսութիւնն ընդհատեցաւ գալտեամի բանտապահին որ սեղանի մը վրայ դըրաւ թերթ մը թուղթ, մեղան և գրիչ մը:

— Ահաւասիկ ինչ որ խնդրեցիք ինձմէ, ըսաւ նա քաջուկով:

Այն ատեն Տէգրիվ ճիգ մ'ընելով ինքնիր վրայ, տաք ելաւ, հաստատուն քայլերով մօտեցաւ սեղանին, նստաւ և գողգոջուն ձեռքով գրեց հետևեալն:

Սիրեցեալ ամուսին.

«Ամեն ինչ լմնցած է: Մարդկային արդարութիւնըն մահուան դատապարտեց զիս, և սակայն դուք

դիտւք, դու Աստուած իմ, և դու Էլէօնոր, որ ես անսեղ եմ: Վաղը, այո՛, վաղը, քու սիրելի Էմիլդ որ այնքան կ'սիրէր զքեզ, ոչ ևս պիտի լինի աշխարհիս վրայ: Գու այրի պիտի մնաս և զաւակս նրա: Էլէօնոր, երբ կ'մտածեմ թէ ընդ հուպ պիտի թողում զքեզ առ յաւէտ, և ոչ ևս պիտի տեսնեմ զքեզ, կ'լամ, ոչ թէ իմ վրայ որ կ'թողում այս աշխարհն ուր յաճախ պատուաւոր մարդն չատ աւելի կ'տասապի քան յանցաւորն, այլ վասն զի աշխարհիս վրայ կ'թողում, միայնակ և անմխիթար, երկու էակներ զորս ամենէն աւելի սիրեցի: Մնաս բարեաւ, Էլէօնոր, մնաս բարեաւ, սիրեցեալ ամուսին իմ: Մտիկ ըրէ սակայն դեռ ազօթքն այնմ որ քանի մը ժամ ունի ապրելու: Ախրանամ և կ'զգամ, որովհետեւ դիտեմ թէ որչափ կ'սիրես զիս, որ քու յուսահատութիւնդ մեծ պիտի լինի: Բայց, Էլէօնոր, դու պիտի մտածես, այս վշտաց և արտասուաց վայրկեաններուն մէջ, թէ միայն դու չես որ կ'տառապիս, թէ ունիս զաւակ մ'որու համար պարտիս զոհել ամեն ինչ: Այդ ազան, մեր ամենասիրելի որդեակն, պիտի լինի քու մխիթարութիւնդ: Հասկցուր նմա, բայց ոչ հիմակ, թէ իր հայրն մեռաւ, զոհ երթալով մարդկանց չարութեան և ըսէ անոր որ դայ ազօթէ երբեմն դերեզմանիս վրայ: Պիտի մեռնիմ ուրեմն ընդ հուպ, աւաղ, առանց զձեզ իմ քուս ունենալու, առանց կարենալու, կտաւիննաբան երթալէ առաջ, սեղմել զձեզ գրկացս մէջ: Աստուած իմ, ինչ ըրի ես որ այսքան սոսկալի փորձութիւն մը կրել կ'տաս ինձ . . . : Ճակատագիրն թէ ոչ ձեր արդարութիւնն է որ զիս կ'ընկճէ . . . :

Առ ինչ այս աճօթալի մահն, ինձ անմեղիս . . . : Ո՛հ, գլուխս կը մոլորի, և սակայն, Էլէօնոր, ինչ կրնամ ընել այլ ևս բայց միայն համակերպիլ, զըլուխ խոնարհեցնել: Մնաս բարեաւ անգամ մ'ևս, Էլէօնոր, մնաս բարեաւ. մտածէ իմ վրայ և ազօթէ թշուառ անմեղին համար: Մնաս բարեաւ, որդեակ իմ, էնառ բարեաւ առ յաւէտ . . . :»

Այս նամակը լմացելէ և կնքելէ յետոյ, Տէգրիվ իր աչերն վերցուց դէպ յերկին:

— Ո՛վ Աստուած իմ, զոչեց նա, կ'համակերպիմ, կ'խոնարհեցնեմ զըլուխ. թող քու կալքդ լինի: Գթայ իմ վրայ և ամեն անոնց վրայ զոր կ'թողում ասս յուսահատութեան մէջ: Այլ երեմ այս սոսկալի փորձութիւնն առանց արժանի եղած լինելու այնմ, բայց դու միայն զիտեսպատճառն: Քեզ կ'յանձնեմ ինքզինքս և կ'յուսամ քու արդարութիւնդ . . . :

Ապա նետելով գրիչն սեղանին վրայ, մտեցաւ պատուհանին, ձեռներն ունցուց երկաթեայ ձողերուն մէջ և զոչեց իր թոքերուն բոլոր զօրութեամբ:

— Մնաս բարեաւ, իմ Էլէօնոր, մնաս բարեաւ, որդեակ իմ, ո՛հ, երեցիք որ տեսնեմ զձեզ . . . տեսնեմ զձեզ . . . վերջին անգամ . . . :

Իր աչերն մթազնեցան, ակունջներն դռնեցին, ոտքերն դողողեցին, կքեցաւ ինքնիր վրայ և ընկաւ տախտակամած ին վրայ:

Երբ բացաւ աչերն, ինքզինք գտաւ ամենախորին մթութեան մէջ, վերստին տարածուած իր ողորմելի խշտեակին վրայ:

Մեռելային լռութիւն մը կ' սաւառնէր իր շուրջն:

Ձնդանին խոնաւութիւնն սառեցուցած էր իր անդամներն :

Եզկէլին ոչինչ ուշադրութիւն կ'ըներ առ այդ :

Մերթ ընդ մերթ կ'զգար իր որտին ուժգին բարսումն իր կուրծքին տակ :

Յնորքի նման, նախազգացման նման բան մ'ունէր զոր չէր կրնար մեկնել :

Կ'սպասէր, ոչ թէ փրկութեան, այլ գերազոյն և վերջին մխիթարութեան :

Նոյն պահուն ոտքառաց :

Կարծեց լսել հեռուէն հծծիւնի նման բան մը : Անձկութեամբ ականջ դրաւ :

Իր սիրտն ուժգին կ'արորէր, կուրծքն խորտակելու չափ :

Հծծիւնն դադրած էր, բայց մարդկան քայլերու շուրջ մ'որոշ կերպով մինչև իր ականջն հասաւ :

Ժամանակ չունեցաւ խորհելու :

Յանկարծ զնդանին դուռը բացուեցաւ, յանկարծական լոյս մը սողոցեց զայն. և մարդ մը ներս մըտաւ որու կ'հետեւէր կին մը համակ սևեր հագած և որ կեցաւ սեամին վրայ :

Մարդն ուղղակի սեղանին քով գնաց, անոր վրայ դրաւ իր ճարպալից կանթեղն, ապա դառնալով .

— Կրնաք մտնել, տիկին, ըսաւ նա, բայց պարտիմ դարձեալ կանխաւ իմացնել ձեզ թէ քաւորդ մ'ունիք միայն :

Եւ ինքն քաջուեցաւ :

Տեսարաններ կան զորս գրիչը կ'մերժէ նկարագրել, ինչ որ ալ լինի մատենագրի տաղանդն :

Արդարև, ինչպէս նկարագրել երջանկութիւնն և

միանգամայն յուսահատութիւնն այս երկու նահատակաց որ քաւորդ մը միայն ունին միասին անցունելու, մանրերկրորդ մ'իրենց համար, որ հազիւ կը բաւէ իրարու բազկաց մէջ նետուելու, և հեծկտանօք ըսելու համար միմեանց թէ յախտենականութիւնը ընդ հուպ պիտի բաժնէ զիրենք առ յաւէտ :

— Աստուած լսեց աղօթքս, ըսաւ Էմիլ, բազկացը մէջ սեղմելով իր ամուսինն : Գու եկար, դու, իմ հուսկ մխիթարութիւնս, սրտիս մէջ փոքր ինչ հանդարտութիւն բերելու . շնորհակալ եմ :

— Էմիլ, պատասխանեց թշուառ կինն, քու գերագոյն մխիթարութիւնդ այս է . Գու պիտի մեռնիս ընդ հուպ, լաւ, ընդ երկար բաժնուած չպիտի մընանք իրարմէ, ընդ հուպ պիտի գամ ետևէդ : Այո, հաւատա ինձ, յետ մահուանդ ոչ ևս պիտի ապրիմ . . . ոչ . . . ոչ . . . կ'զգամ որ կեանքն տակաւ խոյս կ'տայ ինձմէ : Ի խոր խոցուած է սիրտս : Յաւտենական մնաս բարեաւ չէ զոր պարտինք ըսել իրարու, ոչ . . . այլ մանաւանդ պէտք է ըսենք ցտեսութիւն . . . քանի մ'որ ևս, և ընդ հուպ պիտի գամ միանալ քեզ հետ :

— Ի՞նչ կ'ըսես, Էլիօնոր . . . դու մեռնիս . . . ոչ, ոչ, Աստուած չհաճիր առ այդ : Հապա մեր որդին Էտկամ, ինչ պիտի լինի նա, եթէ դու ևս լքանես զանի, ո՞վ պիտի խնամէ զնա :

— Երբէք մի վախճար, Էմիլ : Եթէ Աստուած առ ինքն կ'կոչէ զիս, պատճառն այն է որ բարիէ նա, վասն զի չուզէր որ քու մահէդ յետոյ ապրիմ ես, թշուառ և ընկերութենէն անարդուած, վասն զի կ'զթայ նա իմ յուսահատութեանս վրայ . . . : Բաց

աստի, եղբայրս պիտի դայ այս օրերս . . . Ես լուր
զրկեցի նմա: Դու գիտես որ նա շատ կ'սիրէ մեր
Էտկարն և պիտի խնամէ սրբն, իր քեռորդին: Աս-
տուած առ ինքն կ'կոչէ զմեզ երկուքս, բայց կ'թո-
ղու վրէժխնդիր մը, և այս վրէժ խնդ իրն, մեր որդին
Էտկարն է:

— Աստուած լսէ քեզ, պատասխանեց Տէգրիվ:

— Ո՛հ, Աստուած միշտ կ'լսէ ինձ, պատասխանեց
Էլէօնոր ժպտելով իր արատաւաց մէջն. բայց այս
ժպիտ սրտածմբիկ էր այս վայրկեանին . . . : Անտուած
և անակնկալ բան մը տեղի կ'ունենար իր վրայ:

Տէգրիվ աղշած անօր կ'նայէր:

— Այո՛, Աստուած միշտ կ'լսէ ինձ, շարունակեց
նէ, բայց, հանդարտէ՛, մի վախճար երբէք, ես պի-
տի սաշտպանեմ գրեզ: Ահա, տես . . . Ես դորա-
ւոր եմ . . . Թող դան, և պիտի տեսնեն: Բայց
ինչ կ'ըսեմ, կատակերգութիւն մ'է այս և ոչ այլ
ինչ . . . Շամել, մեր բարեկամն, ուզ'ց զմեզ վախ-
ցնել . . . Հո՛հա, Շամել, դու ուղեցիր խաղալ մեզ
հետ, բայց հիմակ, կարգը մերն է . . . : Ե՛հ, տո՛ւր
ինձ թեղ . . . օն շուտ, երթանք Էտկարն տեսնե-
լու:

Եւ նէ ընդ քարչ տարաւ իր ամուսինն զէպի զըն-
դանին դուռը որ իսկոյն բացուեցաւ:

— Ժամանակն անցածէ, ըսաւ պահակն, երևնա-
լով:

— Այո՛, այո՛, բարեկամ, գիտենք զայդ, ըսաւ
Էլէօնոր խնդալով, պատրաստ ենք:

— Ո՛ւր երթալու տիկին, պատասխանեց պահակն
զբան առջև կայնելով:

— Յանուն երկնից, պարոն, ըսաւ Տէգրիվ, գու-
նատ և դողդոջուն: Մտիկ մի ընէք նմա . . . տեսէք
ինչ վիճակի մէջ է:

— Ա՛հ, ճիշդ է: Ուրեմն ներեցէք ինձ, տիկին: Ան-
ցէք դուք նախ, եթէ կ'հաճիք, ձեր ամուսինն պիտի
հետևի ձեզ:

— Տարբաղդ կի՛նն, որու բանականութիւնն արդէն
սարսուած էր այնքան տառապանքներէ, քանի մը քայլ
յառաջացաւ, բայց իր ամուսնոյն բանտի դուռն իր
ետեէն գոցուելէ առաջ, Տէգրիվ ժամանակ ունե-
ցաւ խոնարհիլ դէպի նէ և վերջին համբոյր մը տալ:

Ապա, իբր զինով մը որ կ'զգայ երկրին խուսա-
փիլն իր ոտից ներքեէն, վերստին մտաւ իր զնդանին
մէջ, և գնաց, վշտէն ու յուսահատութենէն խենդ
դարձած, հեծկլտալով ընկաւ իր խշտեակին վրայ:

Իր ոյժն սպառած էր: Բուռն տենդ մ'իսկոյն երև-
ան եկաւ, և արդէն կ'սկսէր զառանցանքն:

Դժբաղդ Էլէօնոր, ինքզինք առանձին տեսնելով
պահապանին հետ, բոլորովին խելքը կորսնցուց: Ան-
միջապէս օգնութեան հասան, և իր տունն փոխա-
դրեցին զանի կիսամեռ վիճակի մէջ:

Բայց դառնանք Տէգրիվի:

Թողուցինք զանի տագնապալից վիճակի մը մէջ:
Չառանցանքով խառն տենդ մը շարունակած էր բո-
լոր զիշերն և այնպէս ուժաթափ ըրած էր զնա որ
հետևեալ օրն անճանաչելի էր դարձած: Մաղերն
ձերմկեր էին քանի մը ժամուան մէջ: Աչերն դա-
ժան էին: Նա կարծեց սակայն, իբր յերազի, իր
մտա լսել ձայն մը որ կ'ըսէր իրեն:

— Որդեակ իմ, կ'տառապիս:

— Ո՞վ էք դուք, ըսաւ Տէգրիվ, Զանալով կանգուն նստիլ իր խշտեակին վրայ :

— Խեղճ երէց մը որ կ'գամ մխիթարելու զձեզ :

Տէգրիվ, այն ինչ տեսաւ կրօնի պաշտօնեայն, ըզգաց իր անձին մէջ քաջութեան վերածնին :

— Շնորհակալ եմ որ եկար, պատասխանեց նա ցած ձայնիւ մը : Մտեցէք, կաղաչեմ, և օրհնեցէք զիս . . . : Հայր իմ . . . երբէք յանցաւոր չեմ . . . մահամերձ մը չէ կարող ստել . . . : Աչքերս կ'մըթագնին . . . առանձին ենք . . . մտիկ ըրէք, հայր իմ, ընդ հուպ պիտի ելնեմ Աստուծոյ առջև . . . լաւ ուրեմն, անմեղ եմ :

— Աստուած իմ, ըսաւ երէցն սարսուալով, վասն զի կ'զգար ճշմարտութիւնն տարաբաղդ զօհին խօսքերուն մէջ, բայց դեռ ժամանակ կայ . . . :

— Ո՛հ, ո՛չ, հայր իմ, ոչ ևս ժամանակ կայ . . . երբէք չպիտի յայտնեմ ճշմարիտ յանցաւորն, թող ներէ նմա Աստուած անոր ինչպէս ես կ'ներեմ : Բայց աճապարեցէք, հայր իմ, արձակեցէք զիս . . . կըզգամ որ այլ ևս քանի մը վայրկեան միայն ունիմ ապրելու . . . ո՛հ . . . գացէք նաև անոնց մօտ . . . զորս կ'թողում աշխարհիս վրայ . . . մխիթարեցէք զանոնք : Ըսէք անոնց թէ ես մեռայ . . . իբր նահապտակ . . . և . . . թէ կ'օրհնեմ զանոնք :

Չկրցաւ աւելի շարունակել :


Օրհասն սկսած էր :

Երէցն ի ծունր իջաւ և սկսաւ ոգեվարներու աղօթքներն :

Տէգրիվի աչերն անթարթափ և ապակենման դարցան . իր շրթներն դեռ կ'մրմնջէին, բայց ոչ մի յօ-

դաւոր ձայն չէր ելնէր այլ ևս նորա կուրծքէն : Մահուան դալուկն պատեց նորա դէմքն, արտասուաց երկու կաթիլներ մարգարտանման սահեցան իր կապարագոյն այտերն ի վար, և վերջին ջղաձգութիւն մ'եկաւ վերջ տալու եղկելոյն տառապանաց . . .

Անմեղ զօհն դողրած էր ապրելէ :



Գ Լ ՈՒ Խ Ք.

ՄՕՆՄԱՐԹԻԻ ԳԵՐԵԶՄԱՆԱՏՈՒՆԸ

Մեր պատմած տեսարաններէն տասն օր յետոյ, երեկոյեան ժամը վեցին մօտերը, երկու հոգի կ'սլորտըտէին Շան-ղէլիզէի ծառուղոյն երկանքը :

Անոնցմէ մին երեսունեւվեց տարեկան լինիլ կ'թուէր, ունէր բարձր, նրբաւարտ և վայելուչ հասակ մը, կատարեալ ձուածե դէմք մ'որու վրայ դրօշմուած էր մեղամաղճոտ խստութիւն մը, և զոր կ'զարդարէին զինուորական պէխեր և փոքր մօրուք մը, մեծ և սևաթոյր աչեր որոց վերև կ'բարձրանային նուրբ և սևորակ յօնքեր : Իր մոխրագոյն թաղիքէ զիրուեան լայնեզր գլխարկն կիսովին կ'ծածկէր եպէննօսի նման մազերն որոց գանգուրներն կ'իջնէին

մինչև ուսերն : Երկայն սև վերարկու մ'ամբողջապէս կ'ծածկեր նորա մարմինն : Հագած էր փայլուն ջնարակեալ կօշիկներ որ մինչև ծունկերն կ'հասնէին :

Այս մարդ, իր բոլոր անձին մէջ, Վենետիկցի ազնուականաց քաջածանօթ տիպարն կ'ներկայէր :

Յամբ այլ կանոնաւոր քայլերով կ'քայլէր նա, դըլուկն խոնարհած և մերթ ընդ մերթ խոր հառաչներ արձակելով :

Իր ընկերն կարճահասակ և գէր էր, երիկեանի մը (parvenu) կերպարանն ունէր :

Այն ինչ օրն կ'տարածամէր, Շան-գլիդէ կ'սկսէր լուսավառիլ և հոժ բազմութեամբ լեցուիլ :

Մեր երկու անձերն կ'ստորաէին միշտ, հեռանալով բազմութենէ գրաւուած տեղերէն :

Վերջապէս կանգ առաւ առաջինն, և դառնալով իր ընկերոջ որ կ'ջանար, ոչ առանց դժկամակութեան, հետևիլ նորա քայլերուն :

— Պարոն Քառօ, ըսաւ նմա, քաջ կ'տեսնէք որ ժամանակն է գործելու :

— Բայց առանց ճանաչելու այն անձեր որոց հետ գործ պիտի ունենաք, ինչպէս գործի պիտի ձեռնարկէք :

— Այդ ինձ կ'վերաբերի, դոչեց Վենետիկցին հառաչելով . առաջին անգամն չէ որ Բարիզ կլգամ : Բէ-Տիօ Սանդօ . քաջ կ'ձանաչեմ իմ մարդս և իր բոլոր բարեկամներն, Շամէլ կամ Թէօֆիլ . Ուրնէ երկար ժամանակէ ի վեր ծանօթ են ինձ : Յորմէ հետէ Տէզրիվ ամուսնացաւ քրոջս հետ, քանի քանի անգամ եկայ հոս, Բարիզ, զինք տեսնելու : Խեղճ քոյր : Քաջ կ'տեսնէք ուրեմն որ սխալ քայլ չեմ առնուր :

— Բայց ապահով էք, պարոն Տալտինի, որ պիտի յաղթէք բոլոր ձեր թշնամեաց, յարեց Քառօ :

— Օ', պատասխանեց սա . դուք Բարիզցիք չէք ճանաչէր թէ ինչ է Վենետիկցի մը երբ ուզէ վրէժ լուծել :

— Ուրեմն անխնայ պիտի ջախջախէք ձեր բոլոր թշնամիներն . . .

— Վրէժ պիտի լուծեմ' կ'ըսեմ ձեզ, մինչև իսկ ի վնաս կենացս : Բայց ամենէ առաջ պարտաւորութիւն մ'ունիմ կատարելու, մութը կ'կոխէ, և կը վախնամ որ ուշը չմնամ . Մոնմարթրի գերեզմանատունն պիտի իրթամ : Մնաք բարեաւ, պարոն, չընորհակալ եմ ձեզ ձեր ծառայութեանց համար :

Եւ Տալտինի հեռացաւ :

— Հոս կ'վերջանայ իմ պարտաւորութիւնս, ըսաւ Քառօ իւրովի, երբ տեսաւ հեռուէն իր ընկերոջ անբռնութեանը, վրէժս լուծեցի . տեսնեք ինչպէս Թէօֆիլ պիտի պրծի այդ Վենետիկցի Հերակլէսի ձեռքէն, բաւական խիստ դաս մը պիտի առնու և ուրիշ անգամ չպիտի յանդգնի խորխտալ իմ տանս մէջ :

Եւ սկսաւ առանձին շարունակել իր պտոյտն :

Այս միջոցին, Վենետիկցի ազնուականն արագօրէն կ'դիմէր դէպի Մոնմարթրը : Փողոցէ մը դառնալու միջոցին հանդիպեցաւ կնոջ մը որ մանկիկի մը ձեռքէն բռնած էր . անմեռնին ուշադրութիւն չըրաւ նմա և շարունակեց իր ճամբան :

Տասն վայրկեան յետոյ նա կ'գանուէր մեռելոց քաղքին դրան առջև :

Թէպէտ ժամանակն ուշ էր, սակայն պահապանն թոյլ տուաւ որ ներս մտնէ :

Մեռելական լուսթիւն մը կ'տիրեր մահուան այս ընդ արձակ ցանկապատին մէջ :

Գիշերային այցելուն մտաւ իր դէմն ելնող առաջին ճամբուն մեջ : Սիրտն սեղմուեցաւ , և իր դէմքն , այնքան խրոխտ , տխուր կերպարան մ'առաւ ի տես այն տխրատեսիլ շիրմաց որք երկայն սպիտակ գիծ մը կ'կազմէին ճանբուն երկու կողմերն : Աջանար խեղդեւ իր քայլերու աղմուկն , վախնալով զի մի գուցէ մեռեալք զարթնուն իրենց գերեզմաններէն :

Միշտ միևնոյն ուղղութեամբ կ'քայլէր , երբ երկայն ճամբուն ծայրն հասնելով , կանգ առաւ տեսակ մը սարսուռով , աչերն արասուածութեամբ և կուրծքն չնչասպառ :

Իր առջև և մեծ վարսաւոր ուռիի մը տակ տեսաւ սպիտակ մարմարէ դամբարան մ'անպաճոյճ երևոյթով :

Գոյնզդոյն ծաղիկներով լի անօթներ շուրջանակի կը զարդարէին այդ համեստ դամբարանն : Նախազգացում մ'ազդարարեց նմա թէ պէտք չէր աւելի հեռու ելթալ : Դէպ առաջ խոնարհեցաւ , և աստեղաց աղօտ լոյսով , կըրցաւ կարդալ այս պարզ տապանագիրն .

ԱՍՏ ՀԱՆԳՉԻ ԷՄԻԼ ՏԷՉՐԻՎ

Տալտինի չէր սխալած , իր տարաբաղդ քեռայրին նշխարներն ծածկող շիրմին առջև կ'գտնուէր : Ուստի առաջին տպաւորութիւնն անցնելէ յետոյ , ծունըր իջաւ և իր գլուխն յենելով ցուրտ քարին վրայ , սկսաւ հեծեճամօք արտասուել : Ապա դէպ յերկին բարձրացնելով իր ձեռներն .

— Աստուած իմ , գոչեց նա , վկայ եղ իր , դու ևս ,

իմ վշտիս և արտասուացս , և ներէ ինձ եթէ վրէժխնդրութիւնս անողոք լինի : Դու ևս , բարեկամդ իմ , սիրելի Էմիլ , կ'երգնում քեզ որ այս երեկոյ կ'գամ աստ ստանալու այն ոյժն ու քաջութիւն որու պէտք պիտի ունենամ այն սոսկալի պաշտօնին մէջ առ որ կ'սարտաւորէ զիս իմ խիղճս : Այո' , եղբայր իմ , եթէ դու երկնից բարձունքէն , ուր կ'գտնուիս , կ'ներես քու թշնամեացդ , ես որ տակաւին կ'կոխեմ այս երկիրն ուր դու այնքան դժբաղդ եղար , ի տես այն վշտաբեկ ամուսնոյն , ի տես այն որբին որ զրկուեցան քու սիրոյդ գգուանքէն , ի ներկայութեան այս նշխարաց որ կ'հանգչին այս գերեզմանին մէջ , կ'աղաչեմ քեզ , ներէ ինձ , եթէ չեմ յարգեր քու վերջին կամքդ , բայց եղբայր իմ , վրէժդ պիտի առնում . . . :

Ապա ոտք ելնելով՝ գոչեց .

— Այո' , վայ , վայ իմ թշնամեացս :

Եւ գերեզմանատունէն գուրս ելաւ :

Շան-ըլիզէ հասնելով , կայսրուհւոյն ծառուղւոյն մէջ մտաւ , և իջաւ մինչև Գոնգորտի հրապարակն : Աջ կողմն զարկաւ , Մատչենէն անցաւ և ծառուղիներէն Բարիզ մտնելու վրայ էր , երբ կարծեց ճանաչել՝ ամբոխին մէջ՝ Թէօֆիլ Ռընէ :

Անյլեհեր յառաջացաւ դէպի նա , և կեցնելով զանի .

— Պարոն , ըսաւ նմա , երկու խօսք ունիմ ձեզ ըսելու :

Թէօֆիլ Ռընէ , գլխէն մինչև ոտքը չափեց զանի , շարժում մ'ըրաւ նեղանալով որ ուրիշի մը տեղ կը դներ զինք , և յատասխանեց նմա .

— Պարոն, պատիւ չունիմ զձեզ ճանաչելու :
 — Բայց ես, պարոն Թէօֆիլ Ռընէ, շատ լաւ կը ճանաչեմ զձեզ : Տարաբաղք Էմիլ Տէգրիվի աներձագըն եմ, և կ'գամ հալիւ պահանջել ձեզմէ ձեր վատութեան համար . . . :

Այս խօսքերուն վրայ, Թէօֆիլ Ռընէ դժգունեցաւ, բայց առանց վրդովելու .

— Ի՞նչ իրաւամբ վատ կ'կոչէք զիս, պարոն, և ի՞նչ փոյթ ինձ եթէ դուք Էմիլ Տէգրիվի աներձագըն էք :

— Վատ կ'կոչեմ զձեզ, վասն զի Տէգրիվ յանիրաւի ամբաստանուեցաւ և մահուան դատապարտուեցաւ իբր սպաննիչ Բրէվալի, մինչդեռ դուք, պարոն, կ'ձանչէիք ճշմարիտ մարդասպանն և փոխանակ անմեղն պոշտպանելու, նորա դատապարտութիւնն ստորագրեցիք :

Թէօֆիլ խորտակուած էր :

— Ճշմարիտ են այս ամենն, բաւ Տարտինի, ուժգնապէս սեղմելով նորա բազուկն :

— Պարոն, ստիպուած չեմ ձեզ պատասխանելու, վասն զի իրաւունք չունիք զիս հարցաքննելու խնդրոյ մը վրայ որ միմիայն ոստիկանութեան կ'վերաբերի, սակայն նկատելով ձեր վիշտն և Էմիլ Տէգրիվի հետ ունեցած ազգականութիւնն, սայլափ միայն կ'ըսեմ ձեզ թէ գործուած սպանութեան բոլոր վիպութիւնք իրեն դէմ էին : Ոստիկանք վրայ հասան և ձերբակալեցին զինք՝ նոյն իսկ զոհին արիւնաթաթաւ մարմնոյն մօտ : Իշխանութիւնն միջամուտեց և ի դատաստան կոչեց զիս . չկրցայ ուրանալ, հակառակ կամայց, իմ ներկայութիւնս ոճրի մը և

կատարման որ տեղի ունեցաւ գրեթէ աշացս առջև :

— Այդ ամենէն բան մը չհասկցուիր, պարոն, և կը պնդեմ իմ խօսքիս վրայ : Դուք վատութիւն գործեցիք ամբաստանելով անմեղ մը : Այդ ոճիր որ գործուեցաւ գրեթէ ձեր աշաց առջև, կ'բաւէ ինձ համոզուելու համար թէ ձեր խղճմտանաց մէջ, Բրէվալի ճշմարիտ սպանիչն Էմիլ Տէգրիվ չէ . . . : Պարոն, ես իտալացի եմ, և վրէժխնդրութիւնս սոսկալի պիտի լինի . . . կ'ըսէք թէ վրայ հասան և բռնեցին : Կ'ազարարեմ ձեզ յայանել ինձ բռնողներու անուններն, ապա թէ ոչ պիտի նկատեմ ըզձեզ իբր մասնակից ոճրին :

— Կ'նախատէք զիս, պարոն, քոչեց Թէօֆիլ բարկութենէ գունատ . պէտք չունիմ ասկէ աւելի խօսիլ ձեզ :

Եւ քանի մը քայլ առաւ հեռանալու համար :

— Օ՛, չպիտի կրնար փախչիլ ձեռքէս, ըսաւ Տարտինի կեցնելով զանի, ախաները սեղմեալ և բերանը փրփրուն : Այդ մարդու անունն, ապա թէ ոչ պիտի ապրակեմ և թքնեմ ձեր երեսն հրապարակին մեջ տեղ :

Թէօֆիլ, հակառակ իր քաջութեան, զգաց որ անկարելի էր զիմադրել այս մարդուն, որու սրտմտութեան չափն լեցուած էր :

Վերջ տալու համար այս գայթակղական տեսարանին որ տակաւ կ'սկսէր անցորդաց ու շաղրութիւնն գրաւել, Թէօֆիլ զսպեց զինք խեղդող բարկութիւնըն և սպասախանեց Տարտինիի .

— Այն մարդ որ ականատես վկայ եղաւ ոճրին, կ'կոչուի Ժիւլ Շամել :

— Օ՛ն, հարկ չկար այդքան սպասել յայտնելու համար այդ հրէշին անունն : Լաւ ուրեմն, գիտցէք, պարոն, որ այդ Շամէլն սպաննել տուաւ խեղճ Տէ-
գրիվն :

— Կ'չափազանցէք, պարոն, կ'ամբաստանէք ան-
մեղ մ'առանց փաստի :

— Անմեղ մը, նա՛, այն թշուառականն, որ սպա-
սաւորի կերպարանք մտած երկու ահարկու աւա-
զակներու ձեռքով գործեց այս պօղալի ոճիրն : Ամեն բան գիտեմ, պարոն, ձեռացս մեջ ունիմ այդ
դաւադրութեան բոլոր թեւերն, և կրնամ ապահով-
ցնել զձեզ թէ Շամէլ շալտի կրնայ փախչիլ ձեռ-
քէս : Բարիք եկայ յատկապէս այս բանին համար :
Լուծել երկու զոհերու վրէժն, Տէգրիվի որ ոչ ևս է,
և իմ դժբաղդ քրոջս որ բանավարութիւնն կորսն-
ցուց : Կ'սխիւմ ձեզմէ, պարոն, ձեզմէ որ վատու-
թիւն ունեցաք ամբաստանելու անմեղ մ'առանց
չօչափելի փաստերու :

Մի վախնաք, պարոն, երբէք չպիտի սպաննեմ
զձեզ : Իտալացիք ևս Ֆրանսացւոց չափ քաղաքավար
են : Փոխանակենք մեր այցետոմաններն, և վաղը ի-
րարու զրկենք մեր վկաններն :

— Շատ լաւ, պարոն, պատասխանեց Թէօֆիլը,
քանի որ անպատճառ կուղէք դարնուիլ ինձ հետ,
և հաստատելու համար ձեզ թէ ձեր կարծածին չափ
վատ չեմ, վաղը ժամը ութին, վկաներս ձեր տունն
պիտի լինին . . . :

Արդարև, հետևեալ օրն, Թէօֆիլի և Տալտինիի
վկաններն որոշեցին որ մենամարտն տեղի ունենայ
նոյն օրն իսկ ի Պուժիվալ :

Միջօրէին մօտ էր երբ երկու հակառակորդք իրա-
րու հանդիպեցան որոշեալ տեղն :

Անգութ ծիծաղ մը Տալտինիի շրթներն կ'փոթ-
էր : Գրտինքն որ կ'ողողէր իր ճակատն, և ահարկու
նայուածքն բաւական կ'յայտնէին իր հոգւոյն վի-
ճակն :

Թէօֆիլ գունատ էր, բայց իր անվեհեր կերպա-
րան բաւական կ'յայտնէր թէ նա անխռով պիտի
դիմագրաւէր մահուան :

Այն ատեն վկաններն յառաջանալով քննեցին զէն-
քերն, հեռաւորութիւնն չափեցին և նախնական
անհրաժեշտ պայմաններն կարգադրեցին : Որոշուե-
ցաւ որ իւրաքանչիւրն իրեն յատուկ ատրճանակն
գործածէ և քսան քայլ հեռուէն պարսկեն :

Վկայք արդէն քաջուած էին, երկու սոսիք դէմ
առ դէմ կ'դտնուէին :

Վայրկեան մը սպասեցին, յետոյ նշանն տրուե-
ցաւ : Լոյս մը, ապա բոմբիւն մը դղրդեց արձա-
զանքներն, այնպէս թուեցաւ թէ մէկ հարուած մի-
այն նետուած էր :

Թէօֆիլ գողդ ոջեց և ինկաւ :

Տալտինիի դնդակն նորա սիրտն մտած էր :

Վկայք մօտեցան տարաբաղդ Թէօֆիլի որ դիակ
մ'էր այլ ևս, և իր կառքին մէջ փոխադրեցին զայն :

Տալտինի իրենին մէջ մտնելով, կ'ըսէր ինքնիրեն,

— Հիմակ կարող միւսինն է, այն ատեն վրէժ-
խնդրութիւնս կատարեալ պիտի լինի :

ԳՂՈՒՆ Ժ.

ԵՐԿՈՒ ԵՂԲԱՐՔ

Բանտապահն որ էլիօնորի հետևեցաւ նորա բանտէն դուրս ելած պահուն, յանձնեց այս դժբաղդ կինն քաղաքային զինուորի մը: Սա Տէգրիվի հասցէն խնդրելով, վտօթաց իրեն յանձնուած կինն տեղափոխել կառքի մը մէջ որ քանի մը քայլ անդին կ'ըստ պատէր:

Կառքն սրարչաւ մեկնեցաւ:

Բոլոր ճամբուն մէջ տարաբաղդ կ'ինն հանդարտ մնացած էր, բայց տուն հասնելուն պէս, դառանցութիւն եկաւ վրան՝ սաստիկ տկարութեամբ միացած որ տեւեց շատ ժամեր: Երբ սթափեցաւ, ինքզինք տարածուած գտաւ իր անկողնոյն մէջ, չըջապատեալ քանի մը ծանօթ բարեկամուհիներէ որք կ'ջանային խնամել զինքն և մխիթարել:

Յարգելի երէցն, որ ներկայ եղած էր Տէգրիվի վերջին վայրկեաններուն, անկողնէն քանի մը քայլ անդին կայնած էր, տխուր և լսին, մերթ ընդ մերթ իր ակնարկներն յառելով այս անմեղ զոհին վրայ: Այն ատեն կ'հառաչէր, և արտասոււթուրով աչօք, կ'աղօթէր ցած ձայնիւ:

Այն օրէն ի վեր շարաթ մ'անցած էր և հիւանդն օրէ օր կ'հիւժէր: Կապոյտ չըջանակ մը բոլորած էր իր աչերն, ճակատն խորշոմած էր, և սոսկալի դու-

նատութիւն մը ջնջած էր նորա նիշար այտերու գոյնն:

Եօթներորդ օրն, երեկոյեան դէմ, իր սեկեկին դուռը յանկարծ ուժգնակի բացուեցաւ, և երկայն սև վերարկուով մարդ մը ներս մտաւ զլխարկ ի ձեռին:

Հիւանդին եղբայրն էր: Քանի մը քայլ յառաջացաւ դէպի հիւանդին անկողինն:

Սա կ'ըրէր զանի առանց ձանչելու:

— Սիրելիդ իմ Լէօնորա, գոչեց Տալտինի խեղճուկ ձայնով մը, չէս ձանաչեր եղբայրդ . . . :

Այն ատեն հիւանդն ուզեց վեր ելնել և գրկել զանի, սակայն ոյժը չբաւեց, մի միայն ձեռներն թուլակի շարժեցան, և իր աչերն փայլեցան իրենց խառնչին մէջ. յետոյ թոթովեց բառ մը զոր նա միայն հասկցաւ, վասն զի նորա ձեռքն բռնելով գոլգոթուն այլ ազդու ձայնիւ ըսաւ նմա.

— Լէօնորա, վրէժդ պիտի լուծեմ:

Նէ ժպտեցաւ դառնութեամբ և արտասուաց երկու կաթիլներ սահեցան իր այտերէն:

Վենետիկցի աղնուահանն յարեց.

— Քոյր իմ, Աստուած կ'զրկէ զիս Բարիզ, որպէս զի գտնեմ և պատժեմ այս ախուր և սոսկալի պատմութեան ճշմարիտ յանցաւորներն: Մի վրդովիր, դերն զոր պիտի կատարեմ այս տուամին մէջ որ տակաւին չէ վերջացած, բնաւ ո՛ր և է ցաւալի հետևանք չպիտի ունենայ ինձ համար: Ես գործիք մ'եմ Նախախնամութեան ձեռքն, և պիտք է, կ'ըսեմ, պատժուին յանցաւորներն:

Լէօնորա մոլորուն աչօք կ'ըրէր զանի, և կար-

Ճեա չէր հասկնար նորա խօսքերն : Եւ սակայն , իր եղբոր ձայնն յուզած էր զինք , և փոքր առ փոքր կ'իթուէր զարթնուլ երկարատև երազէ մը :

— Ո՛հ կ'իմանամ , կ'իմանամ , ըսաւ նէ , յանցաւորներն . . . ճիւղներն . . . ո՛ր եղբայր իմ , զգուշացիր . . . զքեզ ևս կ'սպաննեն . . . :

— Երբէք մի վախնար , Լէօնորա , խոհեմութեամբ պիտի շարժիմ : Հանդարտէ , հանգիստ եղիր : Այս պահուն պիտի թողում զքեզ , սակայն ընդ հուպ պիտի վերադառնամ զքեզ տեսնելու :

Եւ Տալտինի , խոնարհելով հիւանդին վրայ , համբուրեց նորա ճակատն , յանձնեց զանի այն պառաւ կանանց , որ խնամած էին զանի և դուրս ելաւ տունէն , մեծաքայլ ուղղուելով դէպի Ֆէյլի փողոցն :

Ժամը այն ինչ ութն զարկած էր , և թեպէտ խոր մթութիւնն մը կ'տիրէր , այս փողոցի երևոյթն աւելի ևս կ'սաստկացնէր զայն :

Տալտինի աներկիւղ մտաւ Շա-կրիի գինետունն : Բարեբաղդարար Ուրսո միայն , իր մօտ ունենալով շիշ մը , նստած էր սեղանի մը քով և խոր մըտածման մը մէջ սուզեալ կ'իթուէր :

Վէնէտիկցին մօտեցաւ նմա : Գինետունն սրբապէր էր , գինեպանն միայն մէկ անկիւնն կ'սորդար :

— Ուրսօ , պոռաց նմա , մօտենալով , ինչ բանի վրայ կ'մտածես :

Սա , այս անակնկալ հարցումէն յանկարծակիի դալով օտարականին կ'նայէր առանց անոր պատասխանելու :

— Ըսէ տեսնենք ուրեմն , յարեց Տալտինի , ինչ բանի վրայ կ'մտածես :

— Ձեզի ինչ , պատասխանեց Ուրսո ուսերն վեր ընելով : Ազնուականաց հետ յարաբերութիւն չունիմ :

— Ի՞նչ կ'նշանակէ այդ բառ , ընդմիջեց վէնէտիկցին :

— Այսինքն այն մարդոց հետ որ մեր խմորէն չեն և ձիերու պէս յարդ ուտել միայն գիտեն , գնա :

— Սակայն ես օտարական մը չեմ :

— Անմենեկին , պարոն Բարիզցի , թէև Բարիզցի ալ չէք նմանիր , վասնզի Իտալացի կ'հօտիք , թողէք զիս . . . բայց ամենէ առաջ ո՞վ էք դուք :

— Քու զոհիտ ստուերն , գոչեց Վէնէտիկցին հանդիսաւոր ձայնով մը :

Ուրսո այս խօսքերն լսելով սարսուաց :

— Տակաւին չես հասկնար , շարունակեց Տալտինի , քու զոհերդ այնչափ շատ են , որ չես հասկնար տակաւին թէ որու համար կ'խօսիմ , հիմակ պիտի ըսեմ քեզ զայն . . . :

— Ոչինչ կ'ուզեմ գիտնալ , ունաց Ուրսո իր տեղէն ցատկելով , և երկայն դաշոյն մը քաշելով , զգուշացիր , եթէ զէշ դիտաւորութիւններ ունիս ինձ դէմ :

Այս թշնամական ցոյցէն , Վէնէտիկցին և ոչ իսկ տեղէն շարժեցաւ :

— Աեցիր հող , գոչեց նա , երբ գործելու վայրկեանն հասնի , այն ատեն պէտք է գործես , առ այժմ գո՛հ եղիր պատասխանելով : Ըսիր ինձ թէ երբէք յարաբերութիւն ունեցած չես ազնուականաց հետ :

— Այո , նաև Իտալացիներու հետ :

— Ազգութիւնն բնաւ գործ չունի հոս, պատասխանէ ինչ որ կ'հարցուի քեզ:

— Բայց ես ժամանակ չունիմ մտիկ ընելու:

— Պէտք է որ ունենաս:

— Բայց, եթէ յարարերութիւններ ունեցած չեմ ազնուականներու հետ, չեմ ճանչեր զձեզ և . . . ձեր . . . ներկայութիւն կ'ենդէ զիս:

— Նոյնիսկ զիս չճանչնալուդ համար է որ հիմակ պիտի ճանչցնեմ քեզ իմ ով լինելս:

— Պէտք չունիմ ճանչնալու:

— Ես էմիլ Տէզրիվ, կ'կոչուիմ գոչեց Վէնէտիկցին հանդիսաւոր ձայնով մը, կ'ճանչե՞ս այս անունն . . . :

Ուրսո ասչեցաւ այս բառերուն վրայ:

— Բայց Տէզրիվ մեռած է, պատասխանեց նա տխուր ձայնով մը:

— Գիտես որ Տէզրիվ մեռած է, հա՛, հա՛, և ինչպէս մեռաւ նա . . . :

Ուրսո զարհուրած կ'թուէր այս մարդուն ներկայութենէն որ կ'կախարդէր զինք:

— Բայց մեռած է . . . կրո՞ղ, պատասխանեց նա:

— Մեռած է . . . բայց պէտքէ զիտնաս թէ ինչ կերպով մեռաւ:

Չարագործն իր բոլոր անդամներով կ'սարսուէր:

— Ո՞վ էք դուք որ այսպէս կ'ստիպէք զիս պատասխանելու:

— Չոհիդ ստուերն եմ, հրէչ դու, և կ'գամ հաշիւ պահանջել քեզմէ գործած ոճրիդ համար:

Այս բառերն լսելով, Ուրսո զարոյթէն կատղած կրկին ուղեց յարձակիլ Վէնէտիկցիին վրայ, բայց

սա բռնելով նորա ձեռքէն և ուժգնապէս սեղմելով դէպ իրեն քաշեց զանի և իր ոտից տակ բռեց: Յետոյ մէջքէն ատրճանակ մը հանելով նորա քներքին վրայ զետեղեց փողին ծայրն:

— Թշուառական, ըսաւ նմա, խօսէ՛, ապա թէ ոչ պիտի մեռնիս:

— Ի՞նչ կուզէք որ խօսիմ, պատասխանեց Ուրսո ողորմուկ ձայնով մը:

— Ո՞վ գրդեց զքեզ սպաննել Բրէվալն Պուլօնեի անտառին մէջ, և Տէզրիվն զատապարտել:

— Բայց ձեր դատակարգէն անձ մը, պարօն:

— Եւ անունն ինչ՞ էր:

— Շամէլ, պատասխանեց աւաղակն կերկեր ձայնիւ մը:

— Եւ որո՞նք էին ընկերներդ:

— Մէկ ընկեր ունէի միայն, Կրիլլեօն անուամբ:

— Եւ ո՞ր կարելի է գտնել զանի:

— Իրեն կ'սպասէի հոս, ուր որ է կ'գայ հիմակ:

— Լաւ ուրեմն, այժմ դու ևս պարտիս գիտնալ, գոչեց Վէնէտիկցին, թէ ոչ մի յանցանք անպատիժ չմնար երկրի վրայ, հրէչ, դու մարդասպան մը և գրապարտիչ մ'եղար միանգամայն: Գո՛ւ, գճուճ շահու մը համար, օգնեցիր ճիւղալի մ'իր նողկալի խորհուրդներն ի գլուխ հանելու: Գո՛ւ եղար պատճառ անմեղի մը զատապարտութեան: Լաւ ուրեմն, պէտք է որ մեռնիս:

— Գլթութիւն, գլթութիւն, գոչեց Ուրսո՝ ի զուր թըրպըրտաւով:

— Գլթութիւն քեզ համար, հրէչ դու, պատասխանեց Տալտինի. գլթութիւն քեզ համար որ չգլթա-

ցիր անմեղի մը վրայ, որ թշուառութեան և ցաւոց մէջ ընկղմեցիր տարաբաղդ կին մը: Մեռի՛ր, վասնզի ոճիրներուդ չափը լրացաւ այլ ևս, մեռի՛ր, թշուառական, վասնզի անարժան ես ապրելու, մեռի՛ր վասնզի ընկերութեան բեռ մ'ես:

Եւ քաշելով ձգանն, գնդակ մը զետեղեց նորա կուրծքին մէջ:

Ապիրատն ահռելի ճիչ մ'արձակեց, տախտակա՛մածին վրայ գալարեցով:

Գինեպանն, ընդոստ արթննալով, կարծեց թէ արիւնահեղ կռիւ մը ծագած է աւազակաց միջև, և խոյս տուաւ:

Վենետիկցին, տակաւին զէն ի ձեռին, գունատ և սարսուալից, կ'դիտէր չարագործն որ կ'գալարէր մահուան ջրաձգութեանց մէջ:

Տարաբաղդն ճիգ մ'ըրաւ սակայն, Տալտինիի վրայ յառեց իր մահամերձ նայուածքն:

— Դուք չէք վրէժ լուծողն, ըսաւ նա, նուազեալ ձայնով մը, կ'տեսնեմ հոս Աստուծոյ մատն . . . այո՛, Աստուած է . . . պարոն . . . որ, ուր ուրեմն սրբոմիտելով գործած ոճիրներուս վրայ . . . կ'հարուածէ զիս ձեր ձեռքով . . . Պարոն կարծուածին չափ չար չէ բնութիւնս . . . ո՛չ . . . և իմ զղջումս անկեղծ է . . . : Գաղղիացի չեմ ես, իտալացի եմ: Դուք որ նոյնպէս իտալացի կ'թուիք, կարելի է կ'ձանաչէք Վենետիկի մէջ Տալտինեան հարուստ և ազնուական գերդաստանն. լաւ ուրեմն . . . ես մին եմ այդ ընտանեաց անդամներէն, անունս է Վիթօրիօ Տալտինի:

Եթէ կայծակ մ'իյնար իր ոտից առջև, Վենետիկցին այնքան չափաի զարհուրէր, որքան զարհուրե-

ցաւ չարագործին բերնէն ելած խոստովանութիւնն լսելով: Վայրկեան մ'անշարժ մնաց՝ վայրագ աչօք դիտելով զանի, ապա նորա վրայ նետուելով, և իր բազկաց մէջ առնելով զանի:

— Ըսէ՛, ըսէ՛, գոչեց նա մօտէն դիտելով նորա դէմքն, դու Տալտինի մ'ես, անունդ Վիթօրիօ է, քոյր մը, եղբայր մ'ունէիր:

— Ո՛հ, այո՛, քոյր մը . . . զոր կ'կոչէինք չքնաղն Լէօնորա . . . և . . . և եղբայր մը . . . :

— Եւ ի՞նչ կ'կոչուէր եղբայրդ . . . :

— Ալֆրէտօ, մրմնջեց Ուրսօ:

— Ա՛հ, վայ թշուառիս, գոչեց Վենետիկցին մազերըն փեթտելով, եղբուկ թշուառիս . . . ինչ ըրի . . . ինչ ըրի . . . եղբայրս սպաննեցի . . . Վիթօրիօ, եղբայր իմ . . . դու եղբայրս ես . . . ո՛հ, եղբայրս զոր այնքան կ'սիրէի . . . :

Ուրսօ, իր տկանջին հնչած այս բառերն լսելով, ելեկտրական ցնցում մ'իր վրայ զգաց, յանկարծական ոստիւն մ'ըրաւ, և իր աղօտ նայուածքն Վենետիկցին վրայ սևեռելով վայրկեան մը քննեց զանի, ճանչցաւ, ապա կրկին տախտակամածին վրայ իյնալով:

— Ալֆրէտօ, Ալֆրէտօ, եղբայր իմ . . . ներէ՛ ինձ, գոչեց . . . ան՛, երջանիկ կ'մեռնիմ . . . ան՛ Կիօ Կեօլուլ, Կիօ Կեօլուլ . . . օ ֆօ ֆուֆուլուլ . . . Ալֆրէտօ . . . :

— Այո՛, եղբայր իմ, ես եմ . . . ես, եղբայրդ, գոչեց վենետիկցին հեծկլտանքէն խեղդուկ ձայնով մը: Ասրէ՛ եղբայր իմ, ապրէ՛, վասն զի վերստէն գլտայ զքեզ, միասին երջանիկ պիտի լինինք . . . : Դու

տակաւին հարուստ և ազնիւ մարդ մը պիտի լինիս . . . : Եթէ դու գաղղիացի աւազակ մ'եղար, կրնաս ազնիւ իտալացի մը դառնալ . . . : Եւ Լէօնորա, եղբայր իմ, որ այնքան կ'սիրէր զքեզ, այնչափ երջանիկ պիտի լինի զքեզ կրկին տեսնելով . . . :

— Բարբիզ է նէ, մրմնջեց Ուրսօ :

— Այո՛, եղբայր իմ, Բարբիզ է, և իր ամուսինն է որ Տէզրիվ կ'կոչուէր, իր ամուսինն զոր դուք մեռնելու դատապարտեցիք բանտին զնդաններուն մէջ :

— Ո՛հ, վայ թշուառականիս . . . ա՛հ, եղբայր իմ . . . ներէ . . . ներէ, ինչ ըրի . . . քրոջս ամուսինն . . . : Ա՛հ, շատ լաւ ըրիր զիս սպաննելով . . . թըշուառական մ'եմ ես . . . :

Արեան ժայթքում մ'ընդհատեց նորա խօսքերը :

— Ներէ, եղբայր իմ . . . ներէ, յարեց նա կրկին, և աղբթէ եղբորդ համար զոր հաճոյքներն և փառասիրութիւնն այնքան նուաստացուցին . . . : Անգամ մ'ես, ներէ, եղբայր իմ . . . :

Եղկելին չկրցաւ աւելի խօսիլ, արեան նոր ժայթքում մը վերջ տուաւ իր տառապանաց :

Վենետիկցին վերցուց իր եղբոր դիակն, համբուրեց նորա ճակատն, յետոյ կրկին թողլով զայն տալատակամածին վրայ, դուրս ելաւ զինետունէն, աճրոյղ Ֆէվ փողոցը կտրեց և ուղղուեցաւ դէպի Սէն :

— Հարկ է վերջ տալ այս սոսկայի կենաց, ըսաւ ինքնին. եղբայրս մեռաւ, և ես սպաննեցի զանի, Լէօնորաս մահամերձ է, է՛թիլ գերեզմանն է, ինչո՞ւ ապրիմ այլ ևս . . . :


Բայց յանկարծական դաղափար մ'անցաւ մտքէն :

— Հապա քեռորդի՞ս, ըսաւ իւրովի, ինչ պիտի լինի

նա, տակաւին շատ դեռահաս և շատ տկար է, իմ օգնութեանս կ'կարօտի : Խմենք ցմբուր վշտաց դառն բաժակն, և, մանաւանդ վրէժինդրութիւն : Եթէ եղբայրս սպաննեցի, միևնանքն չպիտի կրնան փախչիլ ձեռքէս :

Եւ Բօն-Նէօֆէն անցնելով միջնաքաղաքէն դուրս ելաւ :

Հետևեալ օրն կարգը Շասէլինն էր :



ԳԼՈՒԽ ԺԱ.

ՄԵՄԱԳՈՒՄԱՐ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ ՄԸ

Բիզըրլուս փողոցին ամենէն հին և խարխուղ տուներէն միոյն չորրորդ յարկին մէջ, ողորմելի խշտակի մը վրայ տարածուած էր եօթսունամեայ ծերունի մը, կապարազոյն, ոսկրուտ և վախ դէմքով, ճաշատ գլխով, քունքերուն վրայ միայն կրելով նուրբ և փայլուն սպիտակ մազերու մի քանի հիւսակներ :

Ծերունուն մօտ նստած էր դեռատի երիտասարդ մը՝ հազիւ քսան և հինգ տարեկան, քաղցր և մեղամաղձիկ զիմադծով, վճիտ կապուտակ աչերով, ձուածև և զրեթէ անմօրուս դէմքով :

— Հայր, կ'ըսէր նա ծերունունոյն, ճշմարիտ է որ հանգուցեալ Բրէվալն շատ զէջ կ'վարձատրէր առ

ինքն ունեցած անձնութիւնս, որով հարկադրուած էի միշտ շքաւորութեան մէջ ապրիլ, վասն զի երբէք չկրցայ, հակառակ ըրած խնայողութեանցս, ազատել զձեզ այն շլթաներէն որք կ'պահէին զձեզ բանտին մէջ, սակայն կ'յարգէր զիս անսահման վստահութեամբ, հաղորդելով ինձ զազանիք մը որ մինչև իսկ իր կնոջ անձանթի է:

— Բայց, սրգեակ իմ, պատասխանեց ծերունին՝ իր ոսկրուած ձեռքը դնելով երիտասարդին ուսին վըրայ, եթէ քու պաշտպանիդ յիշատակը սիրելի է քեզ, սրջափ աւելի պարտիս երախտապարտ լինիլ այնմ, որ, առանց զքեզ ճանաչելու, վեհանձնորէն վճարեց բոլոր պարտքերս և քակեց շլթաներս: Աւանդ, եթէ մայրդ ողջ լինէր տակաւին, սրջափ երջանիկ պիտի լինէի: Սրգեակ իմ, յարգէ այն մարդն որու շնորհիւ կարող եղայ կրկին տեսնել և անգամ մ'ես գրկել զքեզ . . . : Իր վեհանձնութիւնն յոյժ մեծ է: Ա՛հ, որդեակ իմ, հրեշտակ մ'է այդ մարդն. ինչ կ'կոչուի նա:

— Ժիւլ Եամէլ, պատասխանեց երիտասարդն մեղմ ձայնիւ:

— Եւ քեզ կ'հանդիպի՞ երբեմն, սրգեակ իմ:

— Այո, հայր, ստէպ հարցումներ կ'ընէ իրձ պաշտպանիս գործոց վրայ, և չ'զիտեմ թէ ինչո՞ւ այնքան հետաքրքիր է այդ մասին: Եւ այսօր, հայր, լուր գրկեց ինձ երթալ գտնել զինք այն գրասենեակին որ երբեմն Բրէվալինն էր, վասն զի, կ'ըսէ, կարևոր բաներ ունի ինձ հաղորդելու:

— Ա՛հ, որդեակ իմ, գոչեց ծերունին, ուրախութեամբ լի նայուածքով, կ'տեսնե՞ս, շքով քեզ թէ

այդ մարդ քու բարիքդ կ'ուզէ: Վաղեմի պաշտպանիդ նկատմամբ ունեցած հաւատարմութիւնդ արժանի կ'ընէ զքեզ իր յարգանաց: Ահաւասիկ ինչո՞ւ համար կ'ուզէ պաշտօն մը տալ քեզ իր քով:

— Ա՛հ, հայր իմ, ճշմարիտ է ինչ որ . . . գուցէ ապերախտ մ'եմ ես . . . բայց բան մը կայ որ զիս կ'տանջէ . . . :

— Յայտնէ՛ ինձ զայն, սրգեակ իմ, յայտնէ ինձ զայն, և եթէ պէտք լինի՝ խորհուրդ կ'տամ քեզ:

— Հայր իմ, շարունակեց երիտասարդն աչերն արտասուօք լեցուած, այս մարդն կ'ուզէ ամօքել և բարելաւել իմ վիճակս, վասն զի գիտէ թէ սրտիս խորը կ'պահեմ կարևոր գաղտնիք մը: Այս մարդն, հայր իմ, ներեցէք ինձ այսպէս խօսելուս, զձեզ շլթաներէն ազատեց և ձեր պարտքերն վճարեց մի միայն անոր համար որ ստիպէ զիս, իր առատածեւնութեամբ ընկճելով, յայտնել իրեն այս գաղտնիքն: Այս մարդն, հայր իմ, կ'փախաքի տէր լինիլ Բրէվալի բոլոր հարստութեան և նօրաքրօջ հետ ամուսնանալ: Երկուքն ալ կ'սիրեն զիրար. Բրէվալի քոյրն է որ նմա յանձնած է հանգուցեալ պաշտպանիս բոլոր գործերն: Ամեն օր երբ մուտք կ'սկսի կոխել, կ'երթայ Աիւէյլ, ուր կ'ընակի այդ կինն, և միայն առաւօտուն Բարիդ կ'վերադառնայ: Միայն, երէկ իրիկուն, տեսայ որ նա կ'ղեգերէր Մօմարթրի դերեզմանատան կողմերն, աչքէ չ'հեռացնելով մարդ մը որ իր գացած կողմն կ'ուղղուէր: Հայր իմ, կասկածելի բան մը կայ այս մարդուն մէջ, և եթէ իր արտաքին կերպարանքն և գործերն հրեշտակ մը կարծել կ'տան զինք, ինչպէս դուք կ'ըսէք, ինձ այնպէս

կ'թուի թէ սատանի սիրտ մ'ունի նա :

— Ո՛րդեակ իմ, ինչ կ'ըսես . . . : Բայց հոգածու թիւնն զոր ցոյց կ'ապ Բրէվալի գործոց համար, կը հաստատէ թէ նա կ'ուզէ պահպանել որբերու ստացուածքն, քանի որ Բրէվալի քրոջ հետ սիտի ամուսնանայ : Այս ընտանիքին համար իր անձը կ'ըրո՛հէ, և պէտք է խոստովանիլ թէ այս մարդն անկեղծ և պատուաւոր մէկն է :

— Հայր իմ, չ'զիտեմ, բայց բան մը կայ որ զիս կ'տանջէ . այս մարդ զոր դուք պատուաւոր և անկեղծ կ'գանէք, կ'ուզէ յափշտակել Բրէվալի հարստութիւնն, և տիկին Վիլիբրէտի հետ ամուսնանալով՝ տէր լինիլ Բրէվալի հարստութեան, ապա . . . :

Երիտասարդն ընդհատեց իր խօսքն խոր հառաչ մը հանելով :

— Այսօր, յարեց նա, ինչպէս ըսի ձեզ, ժամադրութիւն մը նշանակեց ինձ իմ վաղեմի պաշտպանիս գրասենեակին, որ այժմ իրն եղած է : Ինձ հետ խօսելիք ունի . . . : Ինչո՞ւ համար, ինչ է իր դիտաւորութիւնն : Եթէ բարի էր իր դիտաւորութիւնն, պէտք էր թողուլ զիս յայտնելու տիկին Վիլիբրէտի թէ ինք՝ տիկինն՝ մեծ հարստութեան տէր է . և ինչո՞ւ ինք միայն կ'ուզէ գիտնալ այդ գաղտնիքն . . . : Բայց արդէն ժամը ինն կ'ըլարնէ, պարտիմ մեկնիլ, հայր իմ, պէտք է անպատճառ գտնուիմ ժամադրաւայրն :

— Գնա՛, գնա՛, որդեակ իմ, Աստուած պահպանէ զքեզ և ի վրէպ հանէ նախազղացումներդ :

Երիտասարդը դուրս ելաւ :

Իր ամենէն առաջին գործն եղաւ մտնել Սէնթ-

Մարկրիթ եկեղեցին ուր քառորդ ժամէն աւելի ծընրող իր աղօթեց, յետոյ ոտք ելնելով դուրս ելաւ եկեղեցիէն և ուղղուեցաւ այն տեղն ուր կ'սպասէր իրեն Շամէլ :

Սա առանձին կ'գտնուէր իր նոր վաճառատան մէջ, պառկած քան թէ նստած մեծ բազլաթոռի մը վրայ և խոր երազներու մէջ սուզեալ :

— Բարի եկար, բարեկամդ իմ, ըսաւ նա ժպտելով, ա՛ն սա աթոռն, նստէ քովս և խօսակցի՛նք :

Երիտասարդն նստաւ նորա մօտ, աչերն խոնաւ և տխրութիւնն երեսին վրայ նկարուած :

— Գիտես ինչու համար հոս կանչեցի զքեզ, բարեկամդ իմ, սկսաւ Շամէլ, ջանալով իր դէմքին տալ այնպիսի քաղցրութիւն մը և այնպիսի ժպիտ մը որ բնական չ'իւն իրեն :

— Եւ ոչ իսկ կրնամ գուշակել, պարոն, պատասխանեց երիտասարդն աչերը խոնարհած :

— Բայց ինչո՞ւ համար այդ քան տխուր ես, բարեկամ, ըսաւ Շամէլ յուզեալ . կ'կարծես թէ շատ դժուարին բան մը լինի քեզ համար ինչ որ քեզի՛ք կ'խնդրեմ :

— Ո՛հ, այո՛, պարոն, յոյժ դժուարին :

— Է՛, ինչ, ընդ միջեց Շամէլ :

— Մի քանի օրէ ի վեր կ'խնդրէ ինձմէ այն գաղտնիքն զոր ես միայն գիտեմ :

— Ա՛հ, ահաւասիկ բռն խնդրոյն եկանք : Այս գործին մէջ ինչ բան կայ որ կ'գարմացնէ զքեզ : Ինձ կ'վերարեթի այդ գաղտնիքն, պարտիս յայտնել ինձ զայն, վասն զի հիմակ ես եմ Բրէվալն :

— Կարելի է, պարոն, բայց . . . :

— Ի՞նչ շահ ունիս պահելով ինձմէ այդ գաղտնիքն:

— Անհուն շահ մը, սլարոն, պատասխանեց երիտասարդն ազդուապէս, կենացս հետ միայն պիտի կարենաք կորզել ինձմէ այս գաղտնիքն. երբէք չպիտի գիտնաք դայն, մինչև որ որբերն տեղեակ լինին այնմ:

— Բարեկամդ իմ, յարեց Շամէլ ողորջալի ձայնով մը, եթէ այդ գաղտնիքն յայտնես որբերուն, ո՞ր և է շահ մը չպիտի ունենաս:

— Եւ ես արդէն շահ մը չեմ սպասեր:

— Լաւ ուրեմն, շարունակեց Շամէլ առանց այլայլելու, եթէ իմանամ այդ գաղտնիքն, կ'կարծեմ թէ ապերախտ պիտի լինիմ, ո՞հ, ո՞չ, պէտք եղածէն աւելի պիտի վարձատրեմ դքեդ:

— Ո՞չ, սլարոն, ոչ, այն գաղտնիքն, այն տեղն ուր պահուած է գանձն, երբէք չպիտի իմանաք, գոնէ ինձմէ, և եթէ կ'ուզէք, իրաւունք ունիք ինձմէ խլելու կեանքս:

— Օ՛հ, ծայրայեղ ապերախտութիւն, գոչեց Շամէլ լի զայրոյթ իւր: Յաման երիտասարդ, ապերախտ սիրտ. կ'կարծեմ թէ կարողութիւն և իրաւունք չունիմ հայրդ ևս մեռցնել տալու, վերստին բանտերուն մէջ նետելու, կ'կարծեմ թէ անկարող եմ:

— Ո՛հ, այո՛, գոչեց երիտասարդն նորա ծունկերն ինչալով, այո՛, ունիք այդ իրաւունքն. մեռցուցէք զիս հոս, ձեր ոտից աւջև, քաղցր է ինձ մահն: Մեռնելով ձեր առջև, պիտի օրհնեմ դձեզ. բայց մատնիչ մը լինիլ, որբերու ապագան կործանել, երբէք: Լաւագոյն կ'համարիմ որ հայրս ընդ միշտ բաժնուի ինձմէ, քան դրժել վերջին երգմանս զոր

ըրի վաղեմի պաշտպանիս. վասն զի, եթէ նա անարդար գտնուեցաւ ինձ նկատմամբ, թողով զիս միշտ չքաւորութեան մէջ, սակայն յարգեց զիս անսահման վտահութեամբ, և ամպարիչտ մը պիտի լինէի եթէ դրժէի երդումս. խիղճս միշտ պիտի յանդիմանէր զիս, և յուսահատութենէ ինքզինքս պիտի սպաննէի: Եւ խեղճ Անդուան սկսաւ դառնապէս արտասուել:

— Այս տեսարաններն գրեթէ բնաւ չեն յուզեր զիս, ընդ միջեց Շամէլ, որու մեղօք գանգեալ սիրտն տեղի չէր տար գթութեան, պիտի յայտնե՞ս ինձ այս գաղտնիքն, այո՛ կամ ո՞չ, պատասխանէ ինձ, եթէ ոչ հայրդ ընդ միշտ պիտի բաժնուի քեզմէ:

— Լաւ ուրեմն, սլարոն, գոչեց երիտասարդն ոտք ելնելով, դուք անողբելի էք, և կ'ուզեմ ազատել հայրս: Որբերու ապագան կործանուած է, և ինձ ոչ այլ ինչ կ'մնայ բաց միայն մեռնիլ:

Եւ երիտասարդն անոր ներկայեց փոքր բանալի մը, ցոյց տալով նմա մեծ գրասեղանի մ'ետև քառակուսի ձև մը սրահակին վրայ:

Ապա քանի մը քայլ առաւ քաշուելու համար: Բայց Շամէլ կեցուց զանի:

Յանկարծական գաղափար մ'անցաւ նորա մտքէն, դժոխային գաղափար մը՝ սաղայնէլեան ժպիտով խառն:

— Որպէս զի խիղճդ բոլորովին հանգիստ լինի, ըսաւ նմա, եկ վաղը միասին երթանք այցելութիւն մը տալ տիկին Վիլթրէտի, նմա ևս յայտնէ այն գաղտնիքն զոր հաղորդեցիր ինձ, կ'ուզե՞ս . . . :

Աղօտ ժպիտ մը բոթեց Անթուանի շրթներն:

— Այո՛, սլարոն, այո՛, գոչեց նա, մեծ բարիք մը

պիտի լինի այդ ինձ համար, աւելի մեծ քան միւս բոլոր ձեր բարիքներն, վասն զի հայրս ինձմէ չպիտի զրկէք :

— Վաղը, ժամը տասին, կ'սպասեմ քեզ :

— Այո՛, պարոն, այո՛, ճշգրտապէս պիտի լինիմ, որոշեալ ժամուն պիտի գամ գտնել զձեզ :

Եւ երիտասարդն դուրս ելաւ :

Շամէլ վայրկեան մը բոլորովին խոհուն մնաց. այս վայրագ ոգին գտած էր միջոց մը այս նոր խոջընդոտէն ազատուելու համար :

— Զոհ մ'ըս, ըսաւ ինքնին, հարկ է այն. դէպ ուղիղ պիտի դիմեմ նպատակիս, մինչև իսկ եթէ հարկ լինի զոհել հարազատ զաւակներս, պիտի հասնիմ : Ամեն խոջընդոտ պէտք է խորտակուի : Իսկ այն Վենետիկցին, էհ ուրեմն, պարոն, պէտք է սպասես ինձ այն տեղն զոր որոշեցի քեզ : Յուսամ թէ ընդունեցիր հրաւէրս. չպիտի կուրիս ինձ հետ, ապահով եղիր, անհետ պիտի լինիս երկրիս երեսէն առանց ձեռք տանելու սուրիդ՝ ինքզինքդ պաշտպանելու համար : Մի կարծեր թէ մեղաւկիցներէս մին սպաննելով՝ աւրեցիր իմ գործս. ո՛չ, պիտի երթամ մինչև վերջն և դու որ արդելք մ'ես ինձ, պէտք է բնաջինջ լինիս : Եւ այն երիտասարդն որ սպաննացու ինձ, ահ, նախարանն պիտի լինի այն տուփն որ վաղը պիտի կատարուի : Երկուքն մէկ օրուան մէջ, և ապա, ոչինչ . . . քանի մ'օրէն բոլոր նախանձորդներէս ամենէն երջանիկն, ամենէն հարուստն պիտի լինիմ : Զոհերէս երկուքին հարստութիւնն իմինիս վրայ աւելնալով միջոնատէր մը պիտի լինիմ : Այժմ տեսնենք ինչ կ'պահէ այս Պլուտոսն :

Եւ ուղղուեցաւ դէսլ ի անկիւնն, քաշեց գրասեղանն, պատուեց սրահակն, զսպանակ մը հրեց, և քառակուսի մարմարիոն մը դետին ինկաւ :

Որմին մէջ զէտեղուած ուրիշ փոքր քառակուսւոյ մը մէջ տեսաւ եպենոսէ արկղիկ մը. բացաւ զայն և նշմարեց քառածալ թերթ մը թուղթ :

Այս թուղթն կ'պարունակէր միմիայն այս բառերն.

« Այն պարագային յորում յանկարծակեան մահ մը, կամ ուրիշ ո՛րէն է անակնկալ արկած մը պարագի, հրեցե՛ք որիմացե երկրորդ զսպանակ մը, և որիտի գործէ՛ք փոխարէն որո՞ւմ մը ուրում մէջ կ'գործուին որսը մէկն զքանս՝ արժողութեամբ որսմարտներ » :

Շամէլի աչերն շլացան :

— Տաս միլիօն, զոչեց նա, ինչ հարստութիւն և ինչ ապագայ . . . :

Ապա դողդոջուն ձեռքով զսպանակն հրելով՝ գրաւեց տուփն, բացաւ զայն և մէջը տեսաւ անհամար պանքտոմներու կոյտ մը :

Շամէլ ոյժ չունեցաւ զանոնք համբելու : Այս անբաւ հարստութեան առջև իր բոլոր մարմնոյն վրայ տեսակ մ'անհնարին տկարութիւն զգաց : Ամեն բան կրկին իր տեղը դրաւ, և գնաց վերստին թաղուեցաւ իր բազլաթուին մէջ :



ՓՂՈՒԽ ՉՔ.

ԵՂԻԱՅԻ ԵՒ ՔՈՅԻ

Երբ Տալտինի Մոնմարթրի գերեզմանատունէն ելաւ, մտադրեց երթալ տեսնել իր քոյրն: Երկու օրէ ի վեր բացակայ լինելով, չէր գիտեր թէ դեռ կ'ապրէր նէ թէ ոչ մեռած էր:

Եւ ուղղուեցաւ դէպի Տէգրիվի տունն:

Թեթև քայլերով սանդուխէն վեր ելաւ և հիւանդին սենեակը մտաւ:

Սա, որ դեռ կ'պահէր կենաց մնացորդ մը, տեսնելով իր եղբայրն, հիւանդագին ժպտեցաւ և ձեռքն երկնցուց իր եղբոր:

Սա մօտեցաւ և նորա ճակատն համբուրելով,

— Քոյր իմ, ըսաւ նմա, խղճս իմ վրայ, բայց ես պարտաւորութիւնս կատարեցի:

Հիւանդին դէմքը խոթուեցաւ:

— Ի՞նչ կ'ըսես, Ալֆրէտօ, միմեջեց նէ, վախճամ թէ . . . :

— Հանդարտէ՛ . . . գիտես որ խոստացայ էմիլի յիշատակին վրէժը լուծել . . . լաւ ուրեմն, իր դահիճներէն մին ոչ ես կ'ապրի . . . :

— Ա՛հ, եղբայր իմ, Աստուած պիտի պատժէ ըզքեզ: Վրէժխնդրութիւնն սոսկալի բան մ'է . . . Էմիլ ներեց, ինք . . . :

— Գիտեմ, և ես ալ պիտի ուզէի ներել, ոչ թէ

գթալով այն թշուառականաց որ այնքան չարիք հասուցին մեզ, այլ միայն Վիթօրիօի, մեր սիրեցեալ եղբոր համար:

— Վիթօրիօ, միմեաց հիւանդն: Ո՞ւր է նա . . . տեսա՞ր զանի . . . :

— Թշուառական մ'եմ ես ինքս. բայց, Լէօնորա, ինձ մտիկ ընելէ առաջ մի դատասպարտեր զիս:

— Ի՞նչ կայ, Աստուած իմ: Խօսէ՛ . . . քաջութիւն ունիմ ամեն ինչ լսելու . . . : Այնքան տառապանքներ կրած եմ և այնքան քիչ ժամանակ ունիմ ապրելու որ նոր դժբաղդութիւն մի բոլորովին հանդարտ և սպարաստ պիտի գտնէ զիս: Խօսէ՛, եղբայր իմ, ինչ եղաւ Վիթօրիօն . . . :

— Վիթօրիօն, ըսաւ Տալտինի տժգունելով և ձեռներն գալարելով, Վիթօրիօն ոչ ևս է: Վիթօրիօ մեռած է . . . և ես սպաննեցի զանի, առանց ճանաչելու, վասն զի ուրիշ անուն մը կ'կրէր նա և ամօթալի արհեստ մ'ի գործ կ'ընէր:

Հիւանդն որ նմանօրինակ խոստովանութեան մը չէր սպասեր, անձկութեան ճիչ մ'արձակեց և նուազեցաւ:

Տալտինի, ինքնիրովն դուրս ելած, օգնութիւն կոչեց: Աղեր հոտոտել տուին հիւանդին, բայց ի դուր, նուազումն կ'շարունակէր:

Բժիշկ կանչեցին որ անմիջապէս եկաւ: Սա մօտեցաւ Լէօնորաի անկողնոյն, և վայրկեան մը նկատելով զնէ, տխրութեամբ գլուխը թոթվեց:

— Տօքթէ՛օր, գոչեց Ալֆրէտօ, ջղաձգօրէն բժիշկին ձեռքը սեղմելով, յանուն Աստուծոյ, ինչ կայ . . . :

— Ոչինչ աղետալի, առ այժմ. հիւանդն պիտի սթափի իր երկար նուազումէն. բայց չեմ կարող երաշխաւորել այդ նուազման հետեանքն: Հիւանդն չսիտազանց տկար է: Վիշտերն արդէն բարոյապէս սպաննած են զինք, և ապագային ջանացէք զգուշանալ մեծամեծ յուզումներէ: Իր կեանքը թելէ մը կախուած է: Լաւագոյն է քաշուիլ և առանձին թողուլ զնէ: Իր թմրութիւն երկար չպիտի տեւէ: Ահաւասիկ, տեսէք, արդէն իր կուրծքն կ'բարձրանայ: Երթամ ամսիչ դեղ մը պատրաստել տամ, և անմիջապէս պիտի վերադառնամ: Եկէք, դուրս ելնենք . . . :

Տալտինի ընդ քարչ դուրս ելաւ հիւանդին սենեակէն:

— Հանդարտեցէք, ըսաւ նմա բժիշկն, դուք էրիկ մարդ էք, և պարտիք քաջութիւն ունենալ ճշմարտութիւնը լսելու . . . :

— Տոբթէօր, կ'իմանամ ձեր միտքն, յոյս չկայ այլ ևս . . . :

— Բայց միայն հրաշքով մը, սակայն:

— Ա՛հ, տոբթէօր, կատարեցէք այդ հրաշքն, և զձեզ պիտի օրհնեմ:

— Պարոն, մեր գիտութիւնն սահման մ'ունի որմէ անդին կարելի չէ անցնիլ: Ձեր քոյրն այնպիսի բուռն յուզումներ կրած է, որ հակազդած են իր ջղային դրութեան վրայ: Ամենափոքր ցնցում մը կրնայ, վայրկեանէ վայրկեան, մահացու լինիլ նմա: Զգուշացէք այսուհետեւ նորա առջև սպանութեան և վրէժխնդրութեան խօսք ընելէ: Հանդարտեցէք, և զուցէ Աստուած կամ բնութիւնն գործէ այս հրաշքն:



Նոյն սահուն սպասաւոր մը ներկայացաւ և Տալտինի յանձնեց տոմսակ մը:

Սա տենդոտ ձեռքով բացաւ զայն, և մէկ ակնարկով աչքէ անցուց:

Այն ատեն իր դէմքն յետին ծայր գունատեցաւ, աչերն կայծեր արձակեցին:

— Հրէշը, գոչեց նա, կ'յանդգնի ասպարէզ կարգալ ինձ . . . : Տոբթէօր, դուք տեղեակ էք այս տխուր պատմութեան որ սգոյ և թախծութեան մէջ ընկզմեց զիս և իմիններս: Աւէք, կարդացէք այս տոմսակն, և ըսէք ինձ թէ պարտաւոր չեմ ընդունիլ այս հրաւերն, և ապիրատին արեամբ լուծել վրէժն այն ամեն շարեաց զոր հասուց մեզ:

Բժիշկն, անխռով և անտարբեր, առաւ տոմսակն Տալտինի ձեռքէն, և կարդաց հետեւեալն.

« Պարոն,

« Որովհետեւ այնքան լաւ տրամադիր էք ի մենա-
« մարտութիւն կոչելու զիս, կ'դիմաւորեմ ձեր իղ-
« ձերն, և կ'փութամ դո՛հացնել զձեզ: Վաղը, ա-
« ռաւօտեան ժամն ութին, ձեր վիպից հետ գլտ-
« նուեցէք որոշեալ տեղն:

« ԺԻԻԼ ՇԱՄԷԼ»

— Լաւ ուրեմն, տոբթէօր, այսօրինակ ապիրատութիւն մ'արժանի է միթէ խնայուելու. մենամարտութեան կ'հրաւիրէ զիս թշուառականն, բայց երբէք չպիտի մենամարտիմ մարդասպանի մը հետ, վասն զի, համոզուած եմ, տոբթէօր, թէ այս հրէշն է որ սպաննել տուաւ վերջ վալ: Ո՛չ, այդ անզգամն

պէտք է ջախջախուի իրր միաստկար դաղան մը, և, վիայ Աստուած որ նա իմ ձեռքէս պիտի ընդունի իր մասն: Վաղուան չղիտի սպասեմ և, այս վայր-կենէս իսկ, կ'երթամ զինք գտնելու:

Եւ Տալտինի, կատաղի և այլայլմէ եղած, քանի մը քայլ առաւ դէպ ի դուռն:

Իժիչլին, այս մոլեգին բարկութենէն ահաբեկ, և ուզելով արգելուլ նոր ոճրի մը գործադրութիւնն, վազեց և դրան ու Տալտինիի միջև կեցաւ:

— Պարօն, ըսաւ նմա, բարկութիւնն այն աստի-ճան կ'իւրացնէ զձեզ որ չէք տեսներ թէ երբէք իրաւունք չունիք սպաննել մարդ մը որ կ'ուզէ օրինաւորապէս կուռիլ ձեզ հետ: Ձեր անձին սպահո-վութիւնն և պատուոյ ամենէն տարրական սկզբունքներն կ'ստիպեն զձեզ ընդունիլ իր հրաւերն: Կ'ընդունիմ թէ այդ մարդ հրէշ մ'է, սակայն ձեզ չ'վերաբերիր պատժել զսնի: Թողք այդ հոգն Աստուծոյ որ թոյլ չպիտի տայ անշուշտ այն թշուառականին իր ձեռներն մխել նաև ուրիշ զո՛ր մը արեան մէջ: Մանաւանդ թէ ուրիշ պարտաւորութիւն մը ունիք կատարելու. այս պահուս չէք կարող թողուլ այս սուսն ուր ձեր քորն՝ գուցէ՝ քանի մը վայրկեան միայն ունի ապրելու երկրի վրայ:

— Իրաւունք ունիք, տորթէօր, պատասխանեց Տալտինի իր գողո՞ղուն ձեռքը ձակաին տանելով: Այո՛, պարտիմ մնալ: Քոյրս մահամերձ է, և այժմ կ'հասկնամ թէ պէտք չէ թողուլ զանի:

— Լաւ ուրեմն, յարեց բժիշկն իր գլխարկն առնելով, կ'թողում զձեզ, վասն զի հիւանդներս պէտք ունին իմ խնամոցս: Եթէ երբէք նոր բան մը պա-

տահի, կանչեցէք զիս, և անմիջապէս պիտի դամ:

Այս խօսքերն ըսելով, բժիշկն սեղմեց Տալտինիի ձեռքն, պատուիրելով հանդարտ լինիլ, և քաշուեցաւ:

Տալտինի ինքզինք առանձին գտնելով, թիկնաթո-ոի մը վրայ ընկաւ, և կատաղութեան արտասուքներ սկսան այրել իր արտեանունքներն:

Հետեւեալ օրն, առաւօտեան ժամը վեցին մօտ, Տալտինի մտաւ իր քրոջ սենեակն, մօտեցաւ նմա և նորա ձեռքը բռնելով.

— Մնաս բարեաւ, Լէօնորա, ըսաւ նմա, պահ մը գուրս պիտի ելնեմ, բայց չուտով պիտի վերադառնամ:

Լէօնորա գուհատ, հիւժեալ և հազիւ շնչելու կարող, նուազուն աչերն սևեռեց իր եղբօր վրայ, և ըսաւ հազիւ իմանալի ձայնով մը.

— Եզրայր իմ . . . կ'զգամ թէ մօտ է մահս . . . մի՛ թողուր զիս . . . :

— Հանդարտէ՛, քոյր իմ. . . պէտք է որ անպիտ-ճառ մեկնիմ. բայց բնաւ մի վախճար, պահէ մը պիտի վերադառնամ:

Լէօնորա չպատասխանեց բնաւ, այլ գոցեց աչերն, և Տալտինի տեսաւ արցունքի մը սահիլն հիւանդին նիհար այտին վրայ: Խոնարհեցաւ նորա վըրայ, համարեց նորա ձակատն, և առանց բան մը ըսելու, ախուր և մտախոհ, դուրս ելաւ տունէն:

Ժամը եօթ ու կէսին Տալտինի մեծ քայլերով կը-ճեմէր Շանդ-Էլիզի մէջ, անձկութեամբ սպասելով ժամադրութեան ժամուն, երբ սպասաւոր մը մօտեցաւ նմա, և բոլորովին շնչասպառ, արտասուալից ա-

չօր գուժեց արիւն Տէրրի մահն :

Այս լուրը շանթահարեց զՏալտինի . նստարանի մը վրայ ընկաւ , և հոն մնաց քանի մը վայրկեան , անշարժ և անխօս . ապա վեր ելնելով ըսաւ սպասաւորին որ տխուր և լին՝ իր հրամանաց կ'սպասէր .

— Ետ լաւ , բարեկամ , կրնաք քաշուիլ : Պահէ մը ես ինքս պիտի գամ տուն :

— Ա՛հ , Եամէլ , ըսաւ Տալտինի իւրովի , երբ առանձին մնաց , չափն անցաւ այլ ևս , երբէք մենամարտի մը մէջ քեզ հետ կուուելու պատիւն չպիտի ընեմ քեզ : Ո՛չ , դու պէտք է մեռնիս կատաղի շան մը պէս :



ԳԼՈՒԽ ԺԳ.

ՇԱՄԵԼ Ի ԳԼՈՒԽ ԿՉԱՆԵ ԻՐ ԳՈՐԾՆ

Մինչդեռ Տալտինի կ'սպարաստուէր ընդ առաջ երթալ իր մահացու թշնամոյն , կառք մը Պուլտնի անտառէն դուրս կ'ելնէր , կ'կարէր Սէն դեան՝ Սիւրէզի կամուրջէն անցնելով , չրջան կ'ընէր համանուն զիւզին դէպ ի հարաւակողմն , և քառորդ է մը յետոյ կանգ կ'առնուր Սէն Վալէրին լեռան ստորոտն , ճիշդ այն ճամբուն վրայ որ կ'աանէր դէպ ի լեռան վրայ բացուած քարահատներն :

Երկու մարդ վար իջան կառքէն :

Ստոնցմէ մին , միւսէն աւելի տարիքոտ , հրամայեց կառավարին հեռանալ պահ մը , մինչդեռ իրենք կը մտնէին կրճին մէջ :

Ընթերցողն անշուշտ կրցաւ ճանաչել Եամէլ և իր երիտասարդ ընկերն յորմէ խլած էր իր վայի գանձուն գաղտնիքը :

— Լաւ ուրեմն , ինչո՞ւ տխուր է դէմքդ , քանի իմ , ըսաւ Եամէլ որ մտահոգութեամբ կ'աեսնէր իր ընկերոջ դէմքին վրայ նկարուած խորին տխրութիւնը :

— Ի՞նչ հարկ կայ , պատասխանեց նա , այցելել լեռան քարահատներն . ինչ հետաքրքրական բան կայ հոն , ինչո՞ւ չենք շարունակեր մեր ճամբան . . . :

— Վասն զի անկարելի է մեզ այս պահուս երթալ տիկին Վիլթրէտի տունն , դեռ ժամանակ կայ : Առայժմ , երթանք ակնարկ մը նետել զմեզ շրջապատող հորիզոնին վրայ , և հիանալ գեղածիծաղ դաշտավայրերուն վրայ որք կ'ըջապատեն մեր հոյակապ մայրաքաղաքն :

— Յետոյ , պատասխանեց երիտասարդն ցրտութեամբ :

— Յետոյ ոչինչ . բայց վանէ սրտէդ այդ տխրութիւնն որ պաշարած է զքեզ , զուարթ կերպարան մը սա . կ'աեսնես թէ որչափ կ'սիրեմ զքեզ , թէ և երէկուան դէպքն իրաւունք տուած էր ինձ զքեզ ատելու :

— Ներեցէք ինձ , պարոն , բայց դուք երբէք չէք գիտեր թէ . . . :

— Ի՞նչ , ընդ միջեց Եամէլ :

— Թէ ի՞նչ է գաղտնիք ըսուած բանն՝ փոքր ինչ

պատիւ ունեցող մարդու մը համար :

— Բայց չէ՞ս տեսներ, սիրելիս, որ ընդհուպ պիտի գոհացնես քու խիղճդ :

Երկարատև լուսթիւն մը յաջորդեց այս խօսքերուն :

Քառորդ ժամու չափ կրճին մէջ քալելէ յետոյ, հասան սարահարթի մը վրայ, որու մէջուղ, լայնափեռեկ խողովներ կ'կազմէին գետնափորներ զորս յետ ժամանակաց՝ ամբողջեան փլատակներն փոխադրած էին որմաշարքին մէջ :

— Ահաասիկ հասանք, ըսաւ Շամէլ. գոհացնենք մեր հետաքրքրութիւնն ակնարկ մը նետելով ներսն :

Երիտասարդն սարսուտց :

— Ա՛հ, ըսաւ նա, չեմ ուզեր ներս մանել :

— Այ կնամարդի. օն, քաջութիւն, երիտասարդ դու :

Եւ բռնութեամբ քարչեց զանի. երկուքը միասին մտան լայնարեւան խողովներէն միոյն մէջ :

Հագիւ հինգ վարկեան անցած էր երբ չարաչօք հեծութիւն մը լսելի եղաւ գետնափորին խորէն. ազդողորմ ճիշ մը յաջորդեց նմա, տրտմողին անդրադառնալով քարայրին արձագանքներէն, և ամեն ինչ վերստին լուսթեան մէջ ընկղմեցաւ :

Քանի մը վայրկեան յետոյ Շամէլ՝ մեռելատիպ, չարաչօք նայուածքով և արիւնաթաթախ զգեստներով, դուրս ելաւ գետնափորէն, և ակնարկ մը նետեց իր շուրջն՝ ապահով լինելու համար թէ առանձին կ'գտնուէր :

— Լմնցաւ, մրմնաց նա, վերջին ոճիրն է այս. բայց ինչպէս կանխաւ կ'զգար նա իր դէպի մահ :

դիմելն, ուստի և որպիսի ուժով օժտուած էր : Քիչ մնաց որ ես նորա տեղ պիտի մնայի : Ա՛հ, չափազանց է այս . . . սոսկալի է այս . . . : Բայց ինչպէս ընել, ինչպէս հասնիլ նպատակիս : Ա՛հ, իր հայրն յիշեց նա : Այս առաջին անգամն է որ զգացի սրտիս յուզուիլն, և ձեռքս դողդղաց երբ վերջին հարուածը տուի նմա . . . :

Եւ հրէշն, այս խօսքերն ըսելով, լեռնէն իջաւ : Բայց այն ինչ դուրս ելած էր կրճէն, երբ մարդ մը, սուր ի ձեռին, յարձակեցաւ իր վրայ և մէկ հարուածով ջախջախեց նորա ազդրն :

— Հրէշ, դռնեց նա, վերջապէս վերստին գտայ զքեզ, մեռի՛ր, թշուառական :

Բայց այն պահուն ուր նա սուրն կ'վերցնէր երկրորդ հարուած մը տալու Շամէլին՝ որ գետին փրուած էր, հուժկու ձեռք մը բուռն հարուածով խորտակեց Վենետիկցիին սուրն, և չորս բազուկներ, հերակլեան ուժով օժտեալ, բռնելով վերցուցին զանի իրրև յարդի շիւղ մը և տանելով դրին երկանիւ կառքի մը մէջ որ քանի մը քայլ անդին կ'սպասէր և որ զլորեցաւ զէպի ի Նանթէն :

Շամէլ ըստ կարգին տարուեցաւ իր կառքին մէջ որ Ռիւէյլի ճամբան բռնեց :

— Ա՛հ, իմ Վենետիկցիս, մրմնաց նա, հրաշքով միայն պրծայ ձեռքէդ . . . :

Այս դէպքէն քանի մ'որ յետոյ, Շամէլ, որ կատարելապէս բժշկուած էր ստացած վերքէն, գեղեցիկ և ջերմին առաւօտ մը Բարիդ եկաւ տիկին Վիլֆրէտի քանի մը ստիպողական գործերն կարգադրելու :

Այն ինչ մտած էր նա իր գրասենեակին, երբ նշմարեց ծերունի մը, դանաթեկերէն միայն կռթնած, կապարադոյն զէմքով և դողդոջուն մարմնով:

Իր մազերն քստմնեցան գլխուն վրայ երբ տեսաւ այս ծերունին որու իր զոհին հայրն լինելը ճանաչեց:

— Ի՞նչ կ'փափաքիք, ըսաւ նմա, ջանալով հանդարտ երևիլ:

— Աւթ օր կայ, պարոն, պատասխանեց ծերունին, որ առաւօտէն մինչև երեկոյ ձեզ կ'սպասեմ հոս, առանց զձեզ տեսնելու:

— Եւ ի՞նչ կ'ուզէք ինձմէ. չեմ ճանաչեր զձեզ:

— Ո՛հ, շատ լաւ կ'ճանաչէք զիս, պարոն, շատ լաւ կ'ճանաչէք այս ծերունին զոր բանտէն հանեցիք և որու պարտքերն վճարեցիք:

— Իրա՞ւ, այո՛, կ'ընչեմ զանի. և ի՞նչ կ'ուզէք հիմակ, բանի մը պէտք ունէ՞ք:

— Այո՛, պարոն, զաւակս կ'ուզեմ:

— Օ՛ն, հետեւեցիք ինձ, ծերունի, պատասխանեց Ծամէլ, որ սարսափ և սաստկապէս գունատեցաւ:

Երկուքն միասին մտան գործաւորաց սենեկին միւս կողմ գտնուող սենեակին:

— Եւ ի՞նչ իրաւամբ ինձ կ'ղիմէք, յարեց Ծամէլ, թիկնաթոռի մը մէջ թաղուելով:

— Զաւակս, պարոն, դաւակս կ'ուզեմ ձեզմէ, ութ օր կայ որ չեմ տեսած զանի, չեմ գիտեր թէ . . . :

— Ի՛նչ, ի՞նչ, ի՞նչ յարարերու թիւն ունիմ ձեր գաւակին հետ, ընդ միջեց Ծամէլ որ կ'ընտար, թէ և ի զուր, պահել իր պաղարիւնութիւնն:

— Ո՛հ, դուք էք որ ձեր հետ առիք զանի, և այն օրէն ի վեր չգիտեմ ինչ եղաւ նա:

— Կ'զառանցէք, պարոն, և ինձ չ'վերաբերիր տեղեկութիւններ տալ ձեզ ձեր զակիին վրայ: Խնդրեմ, հաճեցէք քաջուիլ, և հանդիսաւ թողէք զիս:

— Ա՛հ, սիրեցեալ որդեակ իմ, գոչեց ծերունին հեղձամղձուկ ձայնիւ, դու իրաւունք ունէիր երբ կ'ըսէիր ինձ, որդեակ իմ թէ այս մարդ նենդաւոր մ'է, և թէ պիտի զոհէր զքեզ իր փառասիրութեան . . . : Ո՛հ, որդեակ իմ . . . քանի՞՞ն քաղցր էր ինձ զգալ . . . որ դու կ'ապրիս . . . որ դու կրցաւիս ակուր բաղդիս վրայ . . . : Երկաթներու մէջ լինիլ . . . մեռնիլ, և գիտեալ թէ դու կ'ապրիս: Որդեակ իմ . . . իմ միակ նեցուկս . . . Ա՛հ, հրէշ, ինչո՞ւ համար խլեցիր ինձմէ դաւակս . . . : Ա՛հ, փառասիրութեանդ զոհեցիր զանի, վասն զի կ'նեղէր զքեզ: Ի՞նչ պիտի ընեմ հիմակ . . . իցիւ թէ մեռած լինէի . . . : Բայց սպասեցի, որպէս զի քու բերնէդ իսկ լսեմ, թէ զաւակս . . . ո՛չ ևս կ'ապրի . . . : Օր մը, ճիւճա՞ղդ դու, օր մը ոճիրներդ, վասն զի բազմաթիւ են անոնք, երևան պիտի ելնեն. օր մը . . . թափած արիւնդ . . . զոհերուդ արիւնն քեզ զէմ պիտի բողբէ . . . այն արտասուքներ զոր կ'հեղում այժմ . . . դու ևս պիտի հեղուս. վասն զի դու խորտակեցիր կեանքն ծերունեոյ մը որմէ յափշտակեցիր իր միակ յոյան: Օր մը, Աստուած որ այժմ կ'թողու զքեզ շարունակել ոճիրներդ, օր մը . . . իր ձեռքն պիտի ծանրանայ քու վրայ, և պիտի ընկճէ զքեզ իր բոլոր ծանրութեամբ . . . : Օր մ'իբ վրէժխնդրութիւնն, զոր կ'արհամարհես այժմ, ահաւոր կերպիւ պիտի պայթի և պիտի ջախջախէ զքեզ՝ հաճոյիցդ մէջտեղ . . . : Որդիս առաջինն պիտի լինի որ երևան

պիտի հանէ ոճիրներդ . . . : Որդւոյս ստուերն պիտի լինի այն . . . : Նենգածէտ սիրտ . . . օր մը . . . : այո՛, օր մը պիտի յիշես զիս . . . :

Եւ տարաբաղդ ծերունին խոյս տուաւ :

— Ի՛նչ սպառնայիք, միմօաց Շամէլ, որ, ծերունւոյն խօսքի սկսելէն մինչև վերջն սրտաբեկ, անկարող կ'իթուէր խօսելու . ո՛հ, բան մը կ'զգամ սրտիս մէջ, որ կ'ըսէ ինձ թէ այս ծերունին կրնայ իրաւունք ունենալ, և թէ ամեն ինչ որ նա կանխաւ ըսաւ, կրնայ պատահիլ ինձ օր մը . . . : Սակայն, բա՛ . . . ինչո՞ւ կ'խռովիմ . . . : Մնաց որ ամեն ինչ լինցած է, նպատակիս հասած եմ, այլ ևս ոչինչ ունիմ վախնալու . . . : Բայց պէտք է զգոյշ կենալ, և չխաբուիլ զէպքերէն :

Հետևեալ օրն բոլորովին փարատեցան իր երկիւղներն երբ լրագրաց մէջ կարգաց սա երկտող հատուածն .

« Այս առտօր, ժամը վեցին ժըղոցներն, Բօն-Նեօֆէ կաճորջին եղորօն ներսև գրնուեցաւ ջրին վրայ ծէսան դիակ մը : Եթեստանտօնայ ծերունայ մը դիակն էր այս : Այս մահուան պարճաւն անձունօն է » :

Այս ընթերցումէն յետոյ, Շամէլ զգաց յինքն խաղաղութեան վերածնիլն :

— Օ՛ն, ըսաւ նա իւրովի, նոյն ինքն է, ազատեցանք այս նոր փորձանքէն . խաչ վկայ, բաղըն շատ յաջող կ'երթայ ինձ :

Բայց աւելի ևս ապահով լինելու համար, որոշեց անձամբ դիարան երթալ և իր աչօք ստուգել :

Երկու երեք դիակաց մէջէն ճանաչեց տարաբաղդ ծերունւոյն դիակն :

Երեկոյին մեկնեցաւ Բարիզէն :

Այս զէպքերէն քանի մը շաբաթ յետոյ, կիրակի իրիկուն մը, Ռիւէյլ տօնախմբութեան մէջ էր : Տիկին Վիլֆրէտի ամուսնութիւնն կ'կատարուէր Բարիզի երևելիներէն Ժիւլ Շամէլ անուն անձին հետ :



ՎԵՐՋ ԱՌԱՋԻՆ ՄԱՍԻՆ



130

THE ...

... ..
... ..
... ..
... ..
... ..

... ..

3911

6-92

2365
2366
2367
2368

ՀՀ Ազգային գրադարան



NL0627774

ՀՀ Ազգային գրադարան



NL0627775

ՀՀ Ազգային գրադարան



NL0627776

ՀՀ Ազգային գրադարան



NL0627777



